Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ **http://www.armin.am**

էլ. փոստ՝ **info@armin.am**

ՀԱՅՈՒԹՅՈՒՆՆ ԻՍՐԱՅԵԼՈՒՄ.
ՈՐՈՇ ԽՆԴԻՐՆԵՐ

ԵՐԵՎԱՆ
2009

Գիրքը հրատարակվում է

ՀՀ Սփյուռքի նախարարության դրամաշնորհով,
«Նորավանք» գիտակրթական հիմնադրամի
փորձագիտական խորհրդի
որոշման հիման վրա

ՀԱՅՈՒԹՅՈՒՆՆ ԻՍՐԱՅԵԼՈՒՄ.
ՈՐՈՇ ԽՆԴԻՐՆԵՐ

ԻՍՐԱՅԵԼԻ
ՀԱՅՈՒԹՅԱՆ ԽՆԴՐԻ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Գիտական խմբագիր
Էդուարդ Լ. ԴԱՆԻԵԼՅԱՆ

Հեղինակային խումբ

Սևակ ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ (համակարգող)
«Նորավանք» ԳԿՀ փոխտնօրեն,
քաղաքական գիտությունների թեկնածու
Արտակ ԳՐԻԳՈՐՅԱՆ
փորձագետ, ՀՀԿ Խորհրդի անդամ
Ալեք ԷՊՇՏԵՅՆ
Իսրայելի բաց համալսարանի պրոֆեսոր,
սոցիոլոգիայի դոկտոր
Դմիտրի ՍԱՆՈՅԱՆ
Մոսկվայի Մ.Լոմոնոսովի անվան
պետական համալսարանի ասպիրանտ
Միքայել ԱՌԱՔԵԼՅԱՆ
Մատենադարանի ավագ գիտաշխատող,
արվեստագիտության թեկնածու,
Երուսաղեմի եբրայական համալսարանի դոկտորանտ

ՀՏԴ 941(479.25)
ԳՄԴ 63.3 (2Հ)
Ի 830

Ի 830 **ՀԱՅՈՒԹՅՈՒՆՆ ԻՍՐԱՅԵԼՈՒՄ. ՈՐՈՇ ԽՆԴԻՐՆԵՐ.**- Եր.: Նորավանք, 2009.- 132 էջ:

Իսրայելի հայ համայնքի վերաբերյալ Հայաստանի հանրության պատկերացումները, տարբեր պատճառներով, հեռու են ամբողջական լինելուց:

Գրքում անդրադարձ է կատարվում Իսրայելի հայությանն առնչվող մի շարք խնդիրների, որոնց թվում՝ հայ համայնքի և եկեղեցու կարգավիճակը Երուսաղեմում, հայ-իսրայելական հարաբերությունների հիմնահարցեր, հայագիտությունն Իսրայելում և այլն:

ՀՏԴ 941(479.25)
ԳՄԴ 63.3 (2Հ)

ISBN 978-9939-9000-8-7

© ՀՀ Սփյուռքի նախարարություն, 2009
© Նորավանք ԳԿՀ, 2009

ՆԱԽԱԲԱՆ

Չնայած վերջին տարիներին Իսրայելի հայությանն առնչվող բավականին կարևոր հետազոտություններ են կատարվել հայ մասնագետների կողմից*, թեման շարունակում է մնալ արդիական, պահպանում է շարունակական հետազոտության անհրաժեշտությունը:

Իսրայելի հայության այժմեական և կիրառական բնույթի հիմնախնդիրների ուսումնասիրությունն այսօր ավելի քան կարևոր է մի շարք հանգամանքներով: Նշենք դրանցից մի քանիսը.

Առաջին. Երուսաղեմի, որտեղ և բնակվում է երկրի հայության մեծ մասը, իսրայելական և արաբական մասերի բաժանման հեռանկարները անմիջականորեն առնչվում են Երուսաղեմում բնակվող հայությանը և Հայ եկեղեցու հողային, կալվածքային և մշակութային սեփականությանը, որը Հայության համար հսկայական քաղաքակրթական և նյութական արժեք է ներկայացնում:

Երկրորդ. վերջին տարվա ընթացքում ակտիվացած հայ-իսրայելական երկխոսությունը, երկուստեք հետաքրքրվածությունը դեսպանությունների բացման, Իսրայելի հայության կենսագործունեության և զարգացման համար կազմակերպչական միջոցառումների իրականացման ուղղությամբ ակտուալացնում են համայնքի ներկա իրավիճակի ուսումնասիրությունը, նրա առաջընթացի համար անհրաժեշտ քայլերի մշակումն ու իրագործումը:

Երրորդ. բուն Իսրայելում հասարակական և քաղաքական զարգացումներն իրենց հերթին բերում են հրեական պետության հասարակական և պետական կյանքի փոփոխությունների, որոնք չեն կարող չանդրադառնալ Իսրայելի հայության հիմնախնդիրների վրա:

---

* Առաջին հերթին հարկ է նշել Մեհրուժան Բաբաջանյանի «Երուսաղե՛մ, Երուսաղե՛մ» հիմնարար և արժեքավոր հետազոտությունը. - *Մ.Բաբաջանյան,* Երուսաղե՛մ, Երուսաղե՛մ// Երուսաղեմ, 2000թ., Երևան, 2007թ., էջ 448:

Ձեր ուշադրությանը ներկայացվող հետազոտությունը անդրադառնում է Իսրայելի հայության համար կարևոր նշանակություն ունեցող մի շարք խնդիրների։ Այն արդյունք է համատեղ աշխատանքի՝ իրականացված հայ, հրեա և ռուսաստանցի հետազոտողների կողմից։

ԵՐՈՒՍԱՂԵՄՆ ԱՅՍՕՐ

Երուսաղեմը իր պատմության ընթացքում բազմիցս եղել է տարբեր ցեղերի ու պետությունների վարած նվաճողական պատերազմների ու արյունալի բախումների ասպարեզ: Երուսաղեմի շուրջ վիճաբանություններով ուղեկցվող կրքերը չեն հանդարտվում նաև այսօր՝ 21-րդ դարում, աշխարհի ազդեցիկ ուժերի՝ պետությունների, միջազգային քաղաքական, տնտեսական, հասարակական և կրոնական կառույցների ու կազմակերպությունների ակտիվ մասնակցությամբ:

1948թ. մայիսի 14-ին, Իսրայել պետության հիմնադրումից և դրան անմիջապես հաջորդած առաջին արաբա-իսրայելյան պատերազմից մեկ տարի անց, զինադադարի հաստատումից հետո Երուսաղեմը[1] ճակատային գծով բաժանվեց Իսրայելի (Արևմտյան Երուսաղեմ) և Անդրհորդանանի (Արևելյան Երուսաղեմ) միջև: Հին քաղաքը և քրիստոնեական հիմնական սրբատեղիները հայտնվեցին Հորդանանի տարածքում: Այս ժամանակավոր սահմանները հետագայում անվանվեցին «կանաչ գիծ»:

1967թ. տեղի ունեցած Վեցօրյա պատերազմի արդյունքում Իսրայելը նվաճեց Գազան, Սինայի թերակղզին, Գոլանի բարձունքները, Արևելյան Երուսաղեմը և ողջ արևմտյան ափը: Այսինքն՝ այժմ արդեն ողջ Երուսաղեմը հայտնվեց Իսրայելի վերահսկողության ներքո:

Նույն՝ 1967թ. ՄԱԿ-ն ընդունեց թիվ 242 բանաձևը, որը թեև ուղղակիորեն չէր անդրադառնում Երուսաղեմի կարգավիճակին, բայց մերժելով

---

[1] Երուսաղեմի կարգավիճակին ՄԱԿ Գլխավոր ասամբլեան առաջին անգամ անդրադարձել է 1947թ. նոյեմբերի 29-ի իր հայտնի թիվ 181 բանաձևում, որով նախատեսվում էր Պաղեստինը բաժանել 2 մասի և ստեղծել երկու պետություն՝ արաբական և հրեական: Համաձայն այդ բանաձևի՝ Երուսաղեմ և Բեթղեհեմ քաղաքների համար նախատեսվում էր հատուկ միջազգային կարգավիճակ՝ *Corpus separatum:* Երուսաղեմը պետք է լիներ միասնական և գտնվեր ՄԱԿ վերահսկողության ներքո: Նույնը վերաբերում էր նաև Բեթղեհեմին:

տարածքների բռնազավթումը՝ պահանջում էր Իսրայելից անհապաղ զորքերը հետ քաշել գրավյալ տարածքներից մինչև վեցօրյա պատերազմի սկիզբը ձևավորված սահմանները:

1973թ. ՄԱԿ Անվտանգության խորհրդի թիվ 338 բանաձևը ևս մեկ անգամ վերահաստատեց ՄԱԿ նախորդ դիրքորոշումը հակամարտության կարգավորման վերաբերյալ:

Հետագայում՝ 1980թ. հուլիսի 30-ին, Իսրայելը պաշտոնապես անեքսիայի ենթարկեց ամբողջ Երուսաղեմը՝ քաղաքը հայտարարելով Իսրայելի միակ և անբաժանելի մայրաքաղաքը:

Երուսաղեմի կարգավիճակին վերաբերող, 1993թ. սեպտեմբերի 13-ին ստորագրված իսրայելա-պաղեստինյան համատեղ հռչակագիրը պահպանում է Իսրայելի սուվերենությունն անբաժան Երուսաղեմի նկատմամբ: Բայց քաղաքի ապագա կարգավիճակի հետ կապված որևէ փոխզիջում դեռևս կայացած չէ:

242 և 338 բանաձևերն այսօր էլ արտահայտում են ՄԱԿ և միջազգային հանրության պաշտոնական դիրքորոշումը արաբա-իսրայելյան հակամարտության և Երուսաղեմի դեռևս չճշտված կարգավիճակի հարցում:

Չնայած 1990-ական թթ. մեկնարկած և 2000-ական թթ. սկզբին շարունակված բանակցային բավական բարդ ու դժվարին գործընթացներում ձեռք բերված մի շարք դրական տեղաշարժերին, այնուամենայնիվ, արաբա-իսրայելյան հակամարտությունը, այդ թվում նաև Երուսաղեմի հիմնահարցը, շարունակում է մնալ, թերևս, ամենալարված ու թեժ կետը Երկիր մոլորակի վրա:

Երուսաղեմի կյանքում Հայությունը դարեր շարունակ հանդես է բերել պատմական լուրջ դերակատարություն: Հայոց ներկայացվածությունը Երուսաղեմի պատմության մի մասն է, նրա մասնակիցն ու անբաժան ուղեկիցը:

Երուսաղեմի Հին քաղաքի հայկական թաղամասի, հայ համայնքի և Սրբոց Հակոբյանց միաբանության հետ կապված հիմնախնդիրների շուրջ՝ Հայոց անկախ պետականության վերականգնմամբ, Հայաստանի Հանրապետության դիրքորոշումը ունի անչափ լուրջ ու կարևոր նշա-

նակություն: Դարերի ընթացքում ձևավորված Երուսաղեմի հայոց պատմամշակութային ժառանգության պաշտպանությունը չպետք է թողնվի միայն Սրբոց Հակոբյանց միաբանության հոգևորականների ուսերին, ովքեր արդեն բազում դարեր տանում են այդ ծանր բեռը: Հայաստանի Հանրապետությունը՝ Հայ Առաքելական եկեղեցու առաջնորդությամբ ու հայկական սփյուռքի ակտիվ մասնակցությամբ՝ կուռ, համապարփակ ռազմավարության մշակումով և սկզբունքային ու հետևողական քաղաքականության իրականացումով, մեծագույնս կնպաստի Երուսաղեմի հայոց պատմամշակութային ժառանգության պահպանման, զարգացման ու համայն Հայության նպատակներին ծառայեցման գործընթացին:

* * *

2006թ. տվյալներով՝ Երուսաղեմն ունի մոտ 730 հազար բնակչություն: Իսրայելի՝ մի քանի տասնամյակների ընթացքում կառուցված նոր թաղամասերի և Երուսաղեմի հրեականացման ուղղորդված քաղաքականության արդյունքում քաղաքի ժողովրդագրական պատկերը լուրջ փոփոխություններ է կրել: Հետաքրքրական է քաղաքի հրեա և ոչ հրեա բնակչության հարաբերակցությունն արաբա-իսրայելյան հակամարտության ժամանակահատվածում, հատկապես Արևելյան Երուսաղեմի օկուպացումից հետո (աղյուսակում ներկայացվում են Երուսաղեմի քաղաքապետարանի հրապարակած տվյալները):

տարեթիվ	հրեաներ	մուսուլմաններ (արաբներ)	քրիստոնյաներ	ընդհանուր
1967	196.500 73,4%	58.300 21,7%	13.000 4.9%	267.800
1980	292.300 71,8%	103.890 25,5%	11.000 2,7%	407.190
1987	340.000 71,6%	121.000 25,4%	14.000 3%	475.000
1995	417.100 67,9%	182.700 29.7%	14.100 2,4%	613.900
2003	470.000 70,1%	190.000 28,4%	10.000 1,5%	670.000
2006	474.435 65%	233.568 32%	14.598 2%	729.900

2006թ. տվյալներով՝ Երուսաղեմի բնակչությունը կազմել է 729,9 հազ. մարդ, որոնց 65%-ը՝ հրեաներ, 32%-ը՝ արաբներ և 2%-ը՝ այլ ազգերի ներկայացուցիչներ՝ հիմնականում քրիստոնյաներ:

Քաղաքի բնակչության 35%-ը մինչև 15 տարեկաններ են, որոնց մեջ բարձր է արաբների տեսակարար կշիռը՝ մոտ 2/3-ը: 2005թ. տվյալներով՝ ծնվել է մոտ 18.000 երեխա: Անցած ողջ ժամանակահատվածում հրեական բնակչության թվաքանակն աճել է հիմնականում ներգաղթի, իսկ արաբներինը՝ բարձր ծնելիության հաշվին: Այդ երկու գործոնները մի քանի տասնյակ տարի պահպանել են բնակչության տոկոսային փոխհարաբերակցության համեմատաբար կայուն մակարդակ: Ոչ հրեա բնակչության խմբում ևս նկատվել է այլ ազգերի թվաքանակի նվազում ի հաշիվ արաբների: Վերջին 10-12 տարիների ընթացքում հրեաների ներգաղթի համեմատաբար ավելի ցածր տեմպերի պատճառով վերջիններիս փոխհարաբերակցությունը նվազել է մոտ 5-6 %-ով:

Երուսաղեմի կարգավիճակը, երեք կրոնների հոգևոր կենտրոն լինելու հանգամանքը, բազմազգ բնակչությունը, նախորդ դարերի պատմական և ճարտարապետական կոթողների առկայությունը խոր հետք են թողել քաղաքի ժամանակակից տեսքի ու նկարագրի վրա: Թերևս, աշխարհի և ոչ մի քաղաք չի տեսել այնքան պատերազմներ, չի ենթարկվել այնքան ավերի, միաժամանակ չի ենթարկվել այնքան նորոգումների ու կառուցապատումների և, ի վերջո, այնքան չի երկրպագվել, որքան Երուսաղեմը: Հինավուրց սրբավայրերն ու հնագիտական արգելոցներն այստեղ լիարժեք ու խիստ իմաստավորված «հարևանություն» են անում ժամանակակից ճարտարապետական համարձակ լուծումների ու կառույցների հետ: Տարբեր կրոնական մշակույթներ ներկայացնող բազմադարյա հասարակական ինստիտուտները, որոնք գործում են սովորույթների ու ավանդույթների հիման վրա, գոյատևում են ժամանակակից զարգացած պետությանը բնորոշ քաղաքական ինստիտուտների հետ, իսկ հոգևոր դպրոցների կողքին գործում են արդի չափանիշներին համապատասխանող կրթօջախներ և գիտահետազոտական հաստատություններ: Դեռևս միջնադարից ժամանակակից Երուսաղեմին ժառանգություն մնացած

շուկաները հաջողությամբ մրցակցում են առևտրի խոշորագույն կենտրոնների հետ, իսկ հին, պապենական արհեստանոցները շարունակում են թողարկել և սպառողին հասցնել իրենց արտադրանքը՝ չնայած գոյություն ունեցող զարգացած ու ժամանակակից արդյունաբերությանը: Այս ամենը քաղաքին տալիս է բազմազանություն ու յուրահատուկ կոլորիտ:

Ներկայումս Երուսաղեմի բնակիչների մեծամասնությունը հրեաներ են: Իսրայել պետության հիմնադրումից և հատկապես 1967թ. Արևելյան Երուսաղեմի օկուպացումից ու քաղաքի փաստացի միասնականացումից հետո, միավորված Երուսաղեմը հանդիսացավ հրեաների ալիայի (ներգաղթի, աբսորբցիայի և վերաբնակեցման) էպիկենտրոնը: Քաղաքի հրեա բնակչության շրջանում մեծ տոկոս են կազմում ծայրահեղ օրթոդոքս հրեաները՝ մոտ 30%, որոնք անվերապահորեն պահպանում են իրենց հոգևոր կյանքի բոլոր նորմերն ու ավանդույթները, այդ թվում շաբաթ օրվա հետ կապված կանոնները, ավելի ինքնամփոփ են և ձգտում են քիչ շփվել արտաքին աշխարհի հետ: Նրանց համայնքները հիմնականում կենտրոնացած են Երուսաղեմի Մեա-Շեարիմ և Բեյթ-Իսրայել թաղամասերում: Վերջիններիս և աշխարհիկ հրեական բնակչության միջև գոյություն ունի որոշակի լարվածություն, որը երբեմն հասցնում է բախումների:

Երուսաղեմի բնակչության թվաքանակով 2-րդ տեղում արաբներն են, 2006թ. տվյալներով՝ մոտ 32%: Չնայած այն հանգամանքին, որ նրանց մեծ մասը համարվում է Իսրայելի լիիրավ քաղաքացիներ, վերջիններս չեն հաշտվում այն մտքի հետ, որ միավորված Երուսաղեմը Իսրայելի կողմից հռչակված է որպես հրեական պետության հավերժ ու անբաժան մայրաքաղաք: Արաբական բնակչությունը, որը հիմնականում տեղաբաշխված է քաղաքի արևելյան մասում, ձգտում է պահպանել իր հարաբերական անկախությունը պետական մարմիններից ինչպես հոգևոր, այնպես էլ քաղաքական իմաստով: Երուսաղեմի միավորումից անմիջապես հետո արաբները ստեղծեցին «Մուսուլմանական գերագույն խորհուրդը», որը պետք է փոխարիներ հորդանանյան կառավարությանը: Իսրայելը, բնականաբար, չի ճանաչել այս կազմա-

կերպությանը, սակայն դա բնավ չի խանգարում, որ վերջինս կարողանա ղեկավարել մուսուլմանական կրոնական դատարանների համակարգը և կախում չունենա իսրայելական իշխանություններից:

Իսրայելի իշխանություններն ամեն ինչ անում են քաղաքն Իսրայելի մայրաքաղաքի վերածելու համար: Այստեղ է գտնվում Իսրայելի նախագահի նստավայրը: Այստեղ են տեղակայված նաև Կնեսետը, Իսրայելի գերագույն դատարանը, կառավարական մարմինները, գլխավոր ռաբինատը և այլն:

Թեև ողջ Երուսաղեմը գտնվում է Իսրայելի վերահսկողության ներքո, բայց քաղաքի բաժանումն Արևելյան և Արևմտյան մասերի արդեն կրում է ոչ թե պայմանական, այլ առարկայական բնույթ: Քաղաքի արևմտյան մասը կառուցվել է 20-րդ դարում, իսկ ավելի հին շրջանները տեղակայված են արևելյան մասում: 16-րդ դարում Երուսաղեմը Օսմանյան կայսրության Սուլեյման Հրաշալի սուլթանի հրամանով պարսպապատվել է: Հետագա ընդարձակումների պատճառով պարիսպների ներսում մնացած հատվածն անվանվել է Հին քաղաք: Այստեղ են գտնվում երեք կրոնների՝ Երուսաղեմում տեղակայված գրեթե բոլոր սրբատեղիները: Հին քաղաքը բաժանված է 4 թաղամասերի՝ քրիստոնեական, մուսուլմանական, հրեական և հայկական: Թաղամասերի միջև սահմանները շատ աննկատ են, և մի թաղամասը մյուսին հաջորդում է աննկատ կերպով:

Հատկանշական է, որ դարերի ընթացքում հայերը, այդ թվում նաև հայոց վանական միաբանությունը, ձգտել են պահպանել ազգային դիմագիծն ու ինքնությունը, այդ թվում նաև եկեղեցական ուրույն առանձնահատկությունները, որի արդյունքում չեն տարրալուծվել ընդհանուր քրիստոնեական համայնքի մեջ՝ ինչպես կաթոլիկներն ու ուղղափառները, այլ ապահովել են ինքնուրույն ներկայացվածություն: Դրա արդյունքում ***աշխարհի «հոգևոր մայրաքաղաքում»*** Հայությունը հպարտորեն ***աշխարհին*** է ներկայանում իր անունը կրող պատմական թաղամասով:

Հայկական թաղամասի հարևանությամբ տեղակայված է հրեական թաղամասը: Սա հին քաղաքի միակ թաղամասն է, որտեղ հրեաները մեծամասնություն են կազմում՝ մոտ 2100 բնակիչ, որը կազմում է բնակիչ-

ների ընդհանուր թվի 88%-ը: Հրեական և մուսուլմանական թաղամասերի միջև գտնվում է Տաճարի բարձունք կոչվող հատվածը (արաբերեն՝ Հարամ աս-Շարիֆ): Վերջինս ունի գաղափարական և կրոնափիլիսոփայական կարևոր նշանակություն: Ժամանակին այստեղ է տեղակայված եղել Սողոմոնի հայտնի տաճարը, որի վերականգնումը սիոնիզմի առանցքային հիմնախնդիրներից մեկն է: Տաճարի բարձունքի ստորոտում լացի պատն է կամ այլ կերպ՝ արևմտյան պատը: Սա համարվում է Սողոմոնի տաճարի քանդված պարսպի միակ պահպանված բեկորը, որի մոտ աշխարհի բոլոր ծայրերից ուխտագնացության են գալիս հրեաները: Համաձայն հուդայական հավատալիքների, մեսիան հայտնվելու է այստեղ և վերականգնելու է տաճարը: Երուսաղեմի տաճարի տեղում ներկայումս բարձրանում է Օմարի մզկիթը, իսկ նրա կողքին՝ ալ-Աքսա մզկիթը, որը Մեքքայի Քաաբայից և Մադինայում գտնվող Մուհամեդ մարգարեի գերեզմանից հետո համարվում է մուսուլմանների երրորդ սրբավայրը ողջ աշխարհում:

Արաբա-իսրայելյան հակամարտության առանցքային հարցերից մեկը, թերևս, Երուսաղեմի հարցն է, իսկ Երուսաղեմի հարցի անկյունաքարը՝ Տաճարի բարձունքի հիմնախնդիրը: Այս սրբավայրի գտնվելու վայրը քաղաքը երկու մասի բաժանելու հարցում անչափ կարևոր նշանակություն ունի: Գոյություն ունի տեսակետ, ըստ որի՝ որ օրը կողմերը համաձայնության եկան Տաճարի բարձունքի հարցում, նույն օրը արաբա-իսրայելյան հակամարտությունը վերջնականապես կկարգավորվի: Մուսուլմանական թաղամասը Հին քաղաքի ամենախիտ բնակեցված և առավել միատարր հատվածն է: Այստեղ բնակվում է մոտ 22000 արաբ, որոնց 94%-ը՝ մուսուլման:

Քրիստոնեական թաղամասում բացարձակ մեծամասնություն են կազմում քրիստոնյաները. 4862-ից՝ 3830-ը (79%), որոնցից մոտ 1000 հոգին հոգևորականներ են և բնակվում են վանքերում: Քրիստոնեական թաղամասում են գտնվում Սուրբ Հարության տաճարը, Խաչի ճանապարհը, բազմաթիվ այլ վանքեր, եկեղեցիներ, պաշտամունքային վայրեր և այլն: Քրիստոնեական թաղամասում է տեղակայված հունաց ուղղափառ եկեղեցին, որը ներկայացնում է բոլոր ուղղափառ եկեղեցիները,

ինչպես նաև լատին կամ Ֆրանցիսկյան միաբանությունը, որը ներկայացնում է ողջ կաթոլիկ եկեղեցին:

Վերոհիշյալ քրիստոնեական երկու եկեղեցիների հետ մեկտեղ երրորդ՝ հավասար իրավունքներով ներկայացված է Հայ Առաքելական եկեղեցին՝ ի դեմս Սրբոց Հակոբյանց վանական միաբանության, որի իրավասությունների շրջանակում այստեղ մասնավոր իրավունքներ ունեն նաև արևելյան՝ ղպտի (և նրան հարած եթովպական) ու ասորի եկեղեցիները[1]:

[1] Քրիստոնյա Հայաստան. հանրագիտարան, Երևան, 2002, էջ 335:

ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԸ

Հայաստանյայց Առաքելական եկեղեցու նվիրապետական աթոռներից՝ Երուսաղեմի հայոց պատրիարքությունը (աթոռանիստն է Սրբոց Հակոբյանց վանքը) տեղակայված է Երուսաղեմի Հայկական թաղամասում: Ներկայումս Երուսաղեմի հայոց պատրիարքության իրավասության տակ են Իսրայելի և Հորդանանի հայկական եկեղեցիները[1]:

Սրբոց Հակոբյանց վանքի բերդանման պարիսպների ներսում են Սրբոց Հակոբյանց Մայր տաճարը՝ կից մատուռներով, եկեղեցիներով, Երուսաղեմի հայոց պատրիարքարանը հոգևորականների, աշխարհականների և ուխտավորների բնակության թաղերը, ձեռագրատունը, տպարանը, թանգարանը, Գյուլբենկյան մատենադարանը, Ժառանգավորաց վարժարանը և ընծայարանը, Սրբոց Թարգմանչաց վարժարանը և այլն: Իր մակերեսով հայկական թաղամասը զբաղեցնում է Հին քաղաքի տարածքի մոտ 1/5-րդ մասը (մոտ 150.000մ^2):

Երուսաղեմի ներկայիս հայ համայնքի մեծամասնությունը Մեծ եղեռնից հետո գաղթած և Երուսաղեմում հիմնավորված հայեր են: Որոշակի տոկոս են կազմում նաև 1990-ական թվականներին Հայաստանից և նախկին ԽՍՀՄ հանրապետություններից տեղափոխվածները: Վերջիններիս որոշ մասը տեղավորվել է բնակության համար ավելի անվտանգ իսրայելական քաղաքներում:

1947թ. Երուսաղեմի հայ համայնքի անդամների թիվը հասնում էր մոտ 15000-ի: Սակայն արաբա-իսրայելյան հակամարտության արդյունքում, տասնամյակների ընթացքում, հայերի թիվը սկսեց աստիճանաբար նվազել և ներկա պահին կազմում է մոտ 2000 մարդ, որոնցից հայկական թաղամասում բնակվում է 600-ը: Ըստ այլ տեղեկությունների, հայկական թաղամասում բնակվում է մոտ 2200 մարդ, որոնցից 1200-ը՝ հայեր, մոտ

[1] Քրիստոնյա Հայաստան, էջ 337-339:

350-ը՝ մուսուլմաններ, իսկ մանացածը՝ հրեաներ[1]: Այսինքն՝ այլազգիները հայկական թաղամասում արդեն իսկ կազմում են 1/3-ից մի փոքր ավելի: Այս թիվը, դժբախտաբար, աճելու միտում ունի: Երուսաղեմաբնակ հայերի, հատկապես Հին քաղաքում բնակվողների գերակշիռ մեծամասնությունն այսօր Իսրայելի քաղաքացիներ չեն: Երուսաղեմաբնակ հայերից Իսրայելի քաղաքացիություն ունի մոտավորապես 600 հոգի:

1. Սրբոց Հակոբյանց միաբանության կանոնադրությունը, կարևոր վարչական պաշտոնները

Սրբոց Հակոբյանց միաբանությունը, ընդունելով Մայր աթոռ Սուրբ Էջմիածնի նվիրապետությունն ու հոգևոր գերակայությունը և առաջնորդվելով Սուրբ Առաքելական աթոռի դավանաբանական սկզբունքներով, միաժամանակ Էջմիածնից օրգանապես անկախ գործող, ինքնուրույն և ինքնակառավարվող եկեղեցական միավորում է: Միաբանության գլուխ կանգնած է *Սրբոց Հակոբյանց առաքելական աթոռի գահակալ պատրիարքը* կամ, ինչպես ընդունված է ասել, Երուսաղեմի հայոց պատրիարքը: Միաբանության կանոնադրության մեջ, որը կոչվում է *«Կանոն միաբանական ուխտին առաքելական աթոռոյ Սրբոց Յակոբեանց ի Սուրբ Երուսաղէմ»,* վերջին անգամ փոփոխությունները կատարվել են միաբանական ընդհանուր ժողովում և այնուհետև հաստատվել Պոլսո ազգային երեսփոխանական ժողովի կողմից 1888թ. մարտի 18-ին: Դրանից հետո առ այսօր կանոնադրական որևէ փոփոխություն, որպես այդպիսին, չի կատարվել:

Միաբանության կառուցվածքը, պահպանելով եկեղեցական մարմիններին բնորոշ կառուցվածքային առանձնահատկությունները, միաժամանակ աչքի է ընկնում ճկունությամբ և ներքին կազմակերպական «ժողովրդավարական» մեխանիզմներով: Միաբանության ղեկավար մար-

---

[1] *Д.Петросян.* Армяне в Иерусалиме (путевые заметки), http://ha.nt.am/news.php?p=7&c=0&t=0&r=0&year=2009&month=06&day=01&shownews=1097&LangID=7

միններն են պատրիարքը, միաբանության ընդհանուր ժողովը և տնօրեն ժողովը: Վերջին երկուսը, լինելով կառավարման կոլեգիալ մարմիններ, օժտված են լայն լիազորություններով:

Կանոնադրորեն ոչ միայն միաբանության սեփականությունը, ուխտատեղիներն ու սրբատեղիները, այլև միաբանության արտոնություններն ու իրավասությունները համարվում են **ազգային սեփականություն,** և պատրիարքն այդ սեփականության «անկորուստ և պայծառ պահպանման» երաշխավորն է:

«…Պատրիարք եւ Միաբանութիւն համարատու *(հաշվետու)* են առ ազգն» (հողվ. 21): Այսինքն՝ միաբանությունն իրեն հաշվետու է համարում հայ ազգի (Հայության) առջև:

Բացի միաբանության կանոնադրությունից, գոյություն ունի նաև առանձին հաստատված միաբանության ընդհանուր ժողովի կանոնադրություն՝ *«Կանոնադրութիւն ընդհանուր ժողովոյ միաբանական ուխտին Սրբոց Յակովբեանց ի Ս.Երուսաղէմ»,* որն ընդունվել է միաբանության ընդհանուր ժողովի կողմից 1881թ.: Այս կանոնադրությունը սահմանում է միաբանության ընդհանուր ժողովի հրավիրման և ժողովի աշխատանքների կազմակերպման կարգը: Միաբանական ընդհանուր ժողովի կանոնադրությունը ևս անցած ժամանակահատվածում ոչ մի փոփոխության չի ենթարկվել:

Պատրիարքը Սրբոց Հակոբյանց առաքելական աթոռի ցկյանս գահակալն է, միաբանության գլուխը, միաբանական ընդհանուր և տնօրեն ժողովների նախագահը և միաբանության գործադիր իշխանության ղեկավարը: Պատրիարքը միաբանությանը պատկանող սրբավայրերի, զանազան շինությունների ու հիմնարկների, ինչպես նաև հայ համայնքի ընդհանուր ղեկավարն է և Իսրայելի կառավարության առջև բոլոր իրավասություններով օժտված ներկայացուցիչը:

Միաբանության բարձրագույն ղեկավար մարմինը **միաբանության ընդհանուր ժողովն է,** որը կանոնադրորեն նախատեսված է հրավիրել տարին մեկ անգամ, որպես կանոն՝ մայիս ամսին: Անհրաժեշտության դեպքում արտահերթ ընդհանուր ժողով կարող է հրավիրվել նաև պատրիարքի, տնօրեն ժողովի կողմից կամ Երուսաղեմում գտնվող միաբա-

նության անդամների 1/3-ի առաջարկությամբ: Կանոնադրորեն միաբանության ընդհանուր ժողովի անդամներ են սարկավագների դասից սկսած միաբանության բոլոր անդամները: Սակայն ներկայումս միաբանության ընդհանուր ժողովին վճռական ձայնի իրավունքով մասնակցում են միայն ձեռնադրված կուսակրոն եկեղեցականները: Ժողովը նախագահում է պատրիարքը, իսկ վերջինիս պաշտոնի թափուր լինելու դեպքում՝ պատրիարքական տեղակալը:

Միաբանական ընդհանուր ժողովն ի զորու է քննել և լուծել միաբանության կյանքին առնչվող ցանկացած հարց: Ընդհանուր ժողովը շնորհում է եպիսկոպոսական կոչումներ, որոնց օծման արարողությունը տեղի է ունենում Մայր աթոռ Ս.Էջմիածնում, ընտրում լուսարարապետ, տնօրեն ժողովի անդամներ, պատրիարքի պաշտոնը թափուր լինելու դեպքում՝ պատրիարքական տեղակալ, ստեղծում կամ լուծարում միաբանական ստորաբաժանումներ, հաստատում դրանց կանոնադրությունները, քննարկում տնօրեն ժողովի կողմից ներկայացված հարցերը, լսում հաշվետվություններ, այդ թվում նաև տնօրեն ժողովի հաշվետվությունը, կիրառում պատժական միջոցառումներ և այլն:

Թեև կանոնադրորեն միաբանության ընդհանուր ժողովը նախատեսված է հրավիրել ամեն տարի, բայց ներկա ժամանակահատվածում այն հրավիրվում է մի քանի տարին մեկ անգամ: Վերջին միաբանական ընդհանուր ժողովը հրավիրվել է ընթացիկ տարում՝ 2009թ. մայիսին, իսկ նախորդը տեղի էր ունեցել 2007թ.:

Տնօրեն ժողովը միաբանության մշտական գործող աշխատանքային մարմինն է, օժտված է լայն լիազորություններով և իրականացնում է միաբանության ընթացիկ ղեկավարումը: Վերջինիս կազմը բաղկացած է լուսարարապետից և միաբանական ժողովի կողմից ընտրվող ևս վեց անդամներից: Տնօրեն ժողովն աշխատանքային նիստեր է գումարում շաբաթը երկու անգամ: Նիստերը վարում է պատրիարքը, իսկ նրա բացակայությամբ՝ պատրիարքական փոխանորդը:

Տնօրեն ժողովն օժտված է լայն լիազորություններով և իրականացնում է միաբանության ընթացիկ ղեկավարումը:

Տնօրեն ժողովն իր կազմից ընտրում է ատենապետ և ատենադպիր՝ 2

տարի ժամկետով: Պատրիարքը ցանկացած կարևոր որոշում կայացնելուց առաջ տվյալ հարցը քննարկում է տնօրեն ժողովի հետ և լսում վերջինիս կարծիքն այդ հարցի կապակցությամբ: Տնօրեն ժողովը վարում է միաբանության գործերը, տնօրինում միաբանության գույքը, ունեցվածքը, կալվածքները, որոշում է կայացնում ունեցվածքի կամ կալվածքների գնման, փոխանակման, վարձակալման, վարձակալության հանձնման կամ վաճառքի մասին: Քննում է միաբանների ընդունելության, ամբաստանության, միաբանության անդամությունից հրաժարման, կարգալուծման հարցերը: Քննում է նաև եկեղեցական աստիճանների բարձրացման և եկեղեցական կոչումների շնորհման հարցերը, բացի եպիսկոպոսական աստիճանից:

Տնօրեն ժողովը յուրաքանչյուր ամիս ստուգում է միաբանության ֆինանսական հաշիվները: Չորս ամիսը մեկ անգամ ստուգում է միաբանության բոլոր ֆինանսական ելքերը, մուտքերը և դրանց հիմնավորվածությունը: Յուրաքանչյուր տարին ավարտվելուց հետո ստուգում է տվյալ տարվա ֆինանսական ելքերն ու մուտքերը, դրանց համապատասխանությունը նախապես հաստատված ելևմտացույցին (բյուջեին), կազմում հաջորդ տարվա ելևմտացույցի նախագիծը, հաստատում դրա հետ կապված տեղեկանքներ և այլն:

Տնօրեն ժողովը հաշվետու է միաբանական ընդհանուր ժողովին, որին հաշվետվություն է ներկայացնում միաբանության անդամների ընդունելության, կատարված ձեռնադրությունների, հավատարիմ և անձնուրաց ծառայությունների համար տրված վարձատրության, տարբեր պաշտոններում կատարված նշանակումների, կիրառված պատժական միջոցառումների, միաբանականների մահվան հետ կապված գործողությունների մասին: Հարկ է նշել, որ միաբանության անդամի մահվանից հետո վերջինիս անձնական գույքը և ունեցվածքը պատկանում է միաբանությանը: Գույքի հաշվառման և միաբանության գանձարան մուտքագրման համար սահմանված է կանոնակարգված գործընթաց, որն իրականացվում է տնօրեն ժողովի վերահսկողությամբ:

Տնօրեն ժողովը հաշվետվություն է ներկայացնում նաև միաբանության գույքի օգտագործման, նյութական և ֆինանսատնտեսական գործունեության մասին:

Սրբոց Հակոբյանց միաբանության կարևոր վարչական պաշտոններն են.

ա. Լուսարարապետ: Թերևս, պատրիարքից հետո երկրորդ կարևոր պաշտոնն է միաբանությունում: Վերջինս կազմակերպում և վերահսկում է պաշտամունքային կանոնների և եկեղեցական ծիսակատարությունների կատարումն ու արարողությունների սպասարկումը, հսկողություն սահմանում եկեղեցական գույքի պահպանման և օգտագործման վրա: Ներկա պահին Սրբոց Հակոբյանց վանական միաբանության լուսարարապետն է Նուրհան արքեպիսկոպոս Մանուկյանը:

բ. Պատրիարքական փոխանորդ: Նշանակվում է պատրիարքի կողմից՝ տնօրեն ժողովի եպիսկոպոս անդամներից: Փոխանորդը պատրիարքի բացակայության ժամանակ փոխարինում է վերջինիս և նրա հանձնարարությամբ տնօրինում է վանքի ներքին գործերը, ինչպես նաև արտաքին փոխհարաբերությունների հետ կապված որոշակի պարտականություններ: Կատարում է նաև կազմակերպչական այլ աշխատանքներ: Ներկա պահին միաբանության պատրիարքական փոխանորդի պաշտոնը ևս զբաղեցնում է Նուրհան արքեպիսկոպոս Մանուկյանը:

գ. Ելևմտից տեսուչ: Միաբանության սահմանված տարեկան ելևմտացույցին (բյուջեին) համապատասխան՝ հետևում է ֆինանսական ելքերին և մուտքերին, իրականացնում է միաբանության հաշվապահական հաշվառումը, կատարում գլխավոր գանձապահի պարտականությունները, վերահսկում միաբանության բյուջետային կառույցների ու տնտեսությունների ֆինանսական գործունեությունը, իրականացնում գույքի հաշվառումը և այլն: Միաբանության ելևմտից տեսուչն է Սևան արքեպիսկոպոս Ղարիբյանը:

դ. միջեկեղեցական կապերի և արտաքին հարաբերությունների դիվանի պատասխանատու: Իրականացնում է միջեկեղեցական (էկումենիկ) շփումները, տնօրինում միաբանության արտաքին հարաբերությունների հետ կապված հարցերը, ապահովում շփումը ՁԼՄ-ների հետ: Միաբանության էկումենիկ և արտաքին հարաբերությունների տեսուչն է

Արիս արքեպիսկոպոս Շիրվանյանը:

ե. Դպրոցաց տեսուչ: Սրբոց Հակոբյանց միաբանությունում գործող երկու կրթական հաստատությունների՝ Ժառանգավորաց վարժարանի և ընծայարանի, ինչպես նաև Սրբոց Թարգմանչաց վարժարանի տեսուչները:

զ. Դիվանապետ: Նշանակվում է տնօրեն ժողովի կողմից, պատրաստում է տնօրեն ժողովի ատենագրությունները, իրականացնում պաշտոնական գրագրությունները, թղթավարությունը, տնօրինում միաբանության արխիվը, ղեկավարում դիվանատան աշխատանքները: Ներկա պահին միաբանության դիվանապետի պաշտոնը թափուր է:

է. Թարգման: Նշանակվում է տնօրեն ժողովի կողմից, գործում է պատրիարքի կամ նրա հանձնարարությամբ՝ փոխանորդի անմիջական ղեկավարությամբ և հսկողությամբ: Թարգմանն իրականացնում է պաշտոնական փոխհարաբերությունները տեղական իշխանությունների և այլ եկեղեցիների հետ, համապատասխան հանձնարարականի դեպքում ներկայացնում է միաբանությունը կամ հանդես գալիս վերջինիս անունից: Իրականացնում է նաև կապը և շփումները հայ համայնքի ու համայնքային կազմակերպությունների հետ: Միաբանության թարգմանն է Գուսան վարդապետ Ալջանյանը:

ը. Կալվածոց տեսուչ: Վարում է միաբանության կալվածական գործերը, համագործակցող կազմակերպությունների հետ վարում բանակցություններ, հետևում կալվածքների տնօրինումից և շահագործումից ստացված մուտքերին, տնօրեն ժողովին ներկայացնում տեղեկանքներ և եզրակացություններ եկեղեցական կալվածքների տնօրինման և շահագործման հարցերի մասին և այլն: Կալվածաց տեսուչն է Բագրատ վարդապետ Բերջեքյանը:

2. Սրբոց Հակոբյանց միաբանության եկեղեցիները և սրբատեղիները

1700 տարուց ավելի հայկական բուրվառը ծխում է Սուրբ երկրում՝ խորհրդանշելով հայոց սերն ու նվիրումն առ Աստված: Հայոց բուրվառը

տարբեր ժամանակահատվածներում ծխացել է Սուրբ երկրի յոթ տասնյակից ավելի հայկական եկեղեցիներում:

ա. Սրբոց Հակոբյանց մայր տաճար

Հնուց Երուսաղեմի յոթ տասնյակի հասնող եկեղեցիների ու վանքերի գլուխ կանգնած է եղել Սրբոց Հակոբյանց Մայր տաճարը, որի անունն էլ կրում է հայկական եկեղեցական միաբանությունը: Ավանդության համաձայն, Սրբոց Հակոբյանց Մայր տաճարը կառուցվել է Հակոբոս Տյառնեղբոր (նահ. 60թ.) տան տեղում և նվիրվել է նրան և այստեղ նահատակության պսակը ընդունած Հակոբոս առաքյալին (նահ. 44թ.)՝ Հովհաննես Ավետարանչի եղբորը: Համաձայն ավանդության, մ.թ. 49 թվականին այստեղ տեղի է ունեցել Հակոբ Տեառնեղբոր կողմից հրավիրված առաքյալների ժողովը: Տաճարի հիմնադրման ստույգ տարեթիվ հայտնի չէ: Հնագետները հյուսիսային պատը համարում են տաճարի ամենահին հատվածը, քանզի այնտեղի հնագիտական նյութը վերաբերում է մ.թ. 1-ին դ.:

Հայկական ազգային ավանդությունը տաճարի հիմնադրումը կապում է Տրդատ Գ Մեծի և Գրիգոր Ա Լուսավորչի հետ[1]:

Տաճարի ձևը և հատակագիծը նման է հնագույն հայկական եկեղեցիներին: Ընդհանուր մակերեսը կազմում է մոտ 350 մ^2: Մեջտեղում 4 քառակուսի և լայնանիստ սյուներ իրենց վրա են կրում տաճարի 18մ բարձրության վրա գտնվող կենտրոնական գմբեթը[2]: Վկայություններ կան, որ կենտրոնական գմբեթն ավելի բարձր է եղել, սակայն զավթիչների կողմից ավերվել է, իսկ հետագայում վերականգնված գմբեթը ավելի ցածր էր: Տաճարի կենտրոնում կախված է երեք մեծ ջահ: Բացի դրանցից, կախված է նաև 200 կանթեղ, որոնցից 40-ը՝ մշտավառ: Տաճարի պատերը բոլոր կողմերից մեկ մարդաչափ բարձրությամբ պատված են ընտիր հախճապակյա սալիկներով: Դրանից վեր ամբողջու-

[1] Քրիստոնյա Հայաստան, էջ 335, 340:
[2] http://www.sbgevorg.ru/palomniki2.php

թյամբ յուղաներկով արված նկարներ են: Հատակն ամբողջովին պատված է մարմարե սալարկով: Արևելյան կողմում, հարթակի վրա գտնվում է ավագ սեղանը՝ որից ձախ գտնվում է Սուրբ Աստվածածնի խորանը, իսկ դեպի աջ՝ Հովհաննես Մկրտչի խորանը: Այս հատվածում տեղակայված է երկու մատուռ: Սուրբ Աստվածածնի խորանի վերևում տեղակայված է Ս.Պողոսի մատուռը, իսկ Հովհաննես Մկրտչի խորանի վերևում՝ Ս.Պետրոսի մատուռը: Ավագ սեղանի մոտ երկու գահ է տեղադրված: Առաջինը պատրիարքի գահն է, որը միշտ օգտագործվում է, երբ պատրիարքն է մասնակցում ծիսակատարություններին: Երկրորդը, որն ունի բարձր գմբեթ, պատրաստված է թանկարժեք փայտից և զարդարված է սաղափով, Ս.Հակոբ Տեառնեղբոր գահն է: Այդ գահին նստել չի կարելի: Գահի ներսում մշտապես կանթեղ է վառվում: Տարին մեկ անգամ Ս.Հակոբ Տեառնեղբոր տոնին պատրիարքը բարձրանում է գահի վրա, կանգնած վիճակում: Ավագ սեղանի տակ գտնվում է Տեառնեղբոր գերեզմանը:

Հյուսիսային պատի արևմտյան անկյունում գտնվում է Ս.Մակարի մատուռը: 326թ., երբ Կոստանդիանոս Մեծ կայսեր մայրը՝ Հեղինեն հայտնաբերում է Քրիստոսի Խաչափայտը, Երուսաղեմի պատրիարք Մակարը կանգնեցնում է այն, որպեսզի մարդիկ կարողանան երկրպագել: Մատուռի պատի մեջ գտնվում է Ս.Մակարի գերեզմանը: Ս.Մակարի մատուռից մի քանի քայլ այն կողմ գտնվում է Ս.Մինասի մատուռը, որտեղ գտնվում են հանուն հավատքի նահատակված երկու մարտիրոսների սեղաններ: Առաջինը Մինաս Աղեքսանդրացու սեղանն է, մյուսը՝ Սարգիս զորավարինը: Մատուռի մեջ պահվում են նաև շուրջ 80 եպիսկոպոսների և վարդապետների գավազաններ: Մատուռը բացվում է միայն այս երկու սրբերի տոներին: Մատուռին կից գտնվում է վանքի գանձատունը, որտեղ, ի թիվս այլ եկեղեցական գանձերի, պահվում է նաև Ս.Խաչից մի կտոր և Ս.Գրիգոր Լուսավորչի նշխարը: Այստեղ պահվող գանձերի թվում են նաև Հեթում թագավորի գայիսոնը և մի քանի եզակի ձեռագիր ավետարան:

Հյուսիսային պատի վրա, դեպի ավագ սեղանի ուղղությամբ, տեղակայված է Հովհաննես Ավետարանչի եղբոր՝ Ս.Հակոբ Զեբեդյան առաքյալի մատուռ-գերեզմանը: Մատուռի սեղանի տակ գտնվում է մի փոքրիկ

փոսիկ, որը ցույց է տալիս այն տեղը, որտեղ Ս.Աստվածածինն իր ձեռքերով թաղել է Գալիլիայի, Հուդայի և Սամարիայի կառավարիչ Հերովդես Ագրիպասի հրամանով գլխատված առաքյալի գլուխը:

Նույն՝ հյուսիսային պատի ուղղությամբ տեղակայված դուռն ուղեկցում է դեպի Ս.Ստեփանոսի մատուռ: Ս.Ստեփանոսն առաքյալների կողմից ձեռնադրված առաջին յոթ սարկավագներից մեկն է: Մ.թ. 1-ին դարում հրեական դատարանի որոշմամբ հրեաների ամբոխը նրան քարկոծելով սպանում է: Ս.Ստեփանոսն առաջին նահատակված քրիստոնյա հոգևորականն է:

Տաճարի հարավային թևի ամբողջ երկարությամբ տեղադրված է Ս.Էջմիածին եկեղեցին: Մինչև 17-րդ դարի կեսերը տաճարի այս մասը եղել է բաց գավիթ: Սակայն 1663թ. Եղիազար Այնթապցի պատրիարքն այդ գավիթը վեր է ածում եկեղեցու: Եղիազար Այնթապցի պատրիարքը Երուսաղեմը Կիլիկիո աթոռից և Ս.Էջմիածնի Մայր աթոռից առանձին կաթողիկոսություն է հռչակում, որի կենտրոնական աթոռանիստը համարվում է նորակառույց Ս.Էջմիածին եկեղեցին, որտեղ 1666թ. նույնիսկ մեռոն է օրհնվում: Բարեբախտաբար Երուսաղեմը չվերածվեց երրորդ հայ կաթողիկոսության: Եղիազար Այնթափեցին 1681թ. ընտրվեց Ամենայն Հայոց կաթողիկոս (մահ. 1691թ.), իսկ Երուսաղեմի կաթողիկոսությունը վերացավ[1]:

բ. Այլ եկեղեցիներ և սրբատեղիներ

Սուրբ Թեոդորոս (Թորոս) եկեղեցի

Սրբոց Հակոբյանց մայր տաճարից ոչ շատ հեռու գտնվում է Ս.Թեոդորոս եկեղեցին: Այս հրաշալի եկեղեցին կառուցել է Կիլիկիայի հայկական թագավորության Հեթում Ա թագավորը որդու՝ Թորոսի հիշատակին, որը 1266թ. սպանվում է եգիպտացիների դեմ ճակատամարտում: Երկրորդ վարկածի համաձայն, եկեղեցին կառուցել է Հեթումի մյուս որդին՝

[1] *Մ.Օրմանյան*, Ազգապատում, հ.Բ, Մ.Աթոռ Ս.Էջմիածին, 2001, էջ 2937, 2961, 3054-3084:

Լևոնը, եղբոր՝ Թորոսի հիշատակին:

Ըստ ձևի և հատակագծի՝ Ս.Թեոդորոս եկեղեցին միջնադարյան հայկական տիպական բազիլիկա է, սակայն իր նրբագեղ զարդարանքով այն Սրբոց Հակոբյանց վանքն է հիշեցնում: Ավագ խորանի աջ կողմի սանդուղքները տանում են դեպի Մերկերիոսի մատուռ: Այստեղից անցում կա դեպի Ս.Հովհաննես Մկրտչի մատուռ, որը ծառայում է որպես ավանդատուն: Այստեղ է տեղակայված միաբանության Ձեռագրաց մատենադարանը: 1930-41թթ. Ս.Թեոդորոս եկեղեցին ծառայել է իբրև նորընծա աբեղաների քառասունքն անցկացնելու վայր, որտեղ վերջիններս զբաղվում էին հոգևոր գրքերի ընթերցանությամբ, վարում պարապմունքներ և կանոնավոր կերպով կատարում իրենց պաշտամունքային արարողությունները:

Սուրբ Հրեշտակապետաց եկեղեցի

Այս եկեղեցին կառուցված է ի պատիվ սուրբ հրեշտակապետերի, քահանայապետ Կայափայի աներոջ՝ Աննայի տան տեղում: Բակում է գտնվում այն **ձիթենու** ծառը, որից Քրիստոսին կապել էին Կայափայի մոտ հարցաքննելու տանելուց առաջ: Իսկ հրեշտակները թևերով ծածկել էին իրենց երեսները, Քրիստոսի տառապանքները չտեսնելու համար: Այդ ծառի ճյուղերը հայ եկեղեցականների կողմից պահպանվում են որպես սրբություններ: Ձիթենուց մի քանի մետր հեռավորության վրա գտնվում է **Ովսաննայի քարը,** մեկն այն օրհնյալ քարերից, որոնք աղաղակեցին, երբ Հիսուս Քրիստոսը հանդիսավորապես մուտք գործեց Երուսաղեմ: Սա ևս պաշտամունքի վայր է:

Ս.Հրեշտակապետաց եկեղեցին կառուցվել է հայերի, ըստ ավանդության՝ Աբգար թագավորի կնոջ՝ Հեղինե թագուհու կողմից և միշտ եղել է հայերի սեփականությունը: Պատմահայր Մովսես Խորենացուց (5-րդ դ.) բացի, ասորական հին ձեռագրերը ևս հաղորդում են, որ մ.թ. 1-ին դարի կեսերին Հեղինե թագուհին, թողնելով գահը, գալիս է Երուսաղեմ և զբաղվում բարեգործությամբ ու սրբատեղիների «կառուցապատման» աշխատանքներով՝ դնելով ապագա եկեղեցաշինության հիմքերը: Մաս-

նավորապես, վերջինս Տիրոջ գերեզմանի վրա կառուցում է մեծ, բրգաձև մատուռ (կարելի է ասել, որ սրանով դրվում է Ս.Հարության տաճարի հիմքերը), փոքր մատուռ Ձիթենյաց լեռան վրա, ուր կային Քրիստոսի ոտնահետքերը, ապա քարե պարսպով պատում է մանուկ Հիսուսի մսուրը Բեթղեհեմում: Այնուհետև կամար է կանգնեցնում Զեբեդոսի որդի Հակոբ առաքյալի գերեզմանի վրա (սրանով էլ դրվում են Սրբոց Հակոբյանց մայր տաճարի հիմքերը): Այսպես առաջ են գալիս քրիստոնեական առաջին եկեղեցիները Սուրբ երկրում:

13-րդ դարում նորոգված այս վանքն ունի անսովոր մեծ գավիթ, որի արևելյան անկյունում գտնվում է Չարչարանաց Սուրբ սեղանը, իսկ հարավային պատի մեջ մկրտարան կա: Եկեղեցին երեք սեղան ունի: Մեջտեղի սեղանը կոչվում է Աստվածածնի, իսկ մյուս երկուսը՝ Գաբրիել և Միքայել հրեշտակապետերի անունով: Եկեղեցու հյուսիսային պատը պահպանում է այս եկեղեցու, թերևս, ամենագլխավոր մասունքը՝ **Առաջին բանտ** կոչվող, մարմարյա բարձրաքանդակներով զարդարված, կանթեղներով մշտապես լուսավորվող մատուռը: Սա այն տեղն է, որտեղ հարցաքննության ժամանակ կանգնած է եղել Հիսուս Քրիստոսը:

Սուրբ Փրկիչ եկեղեցի

«Աննա զանիկա կապած՝ Կայիափա քահանայապետին ղրկեց»
(Յովհաննէս 18:24):

Սուրբ Փրկչի վանքը հայոց ամենահին ու ամենանշանավոր սրբավայրերից է: Կառուցված է Կայափա քահանայապետի տան տեղում: Քրիստոսը, նախատինքների ու պարսավանքի ենթարկվելուց հետո, հինգշաբթի գիշերն այստեղ է պահվում: Բացի այդ, սա նաև Պետրոսի՝ Քրիստոսին ուրանալու վայրն է: Ոչ միայն հայերը, այլև բոլոր քրիստոնյա ժողովուրդները հավատքով ու երկյուղածությամբ են մոտենում այս վանքի մարմարյա սեղանին, ուր պատկերված է Չարչարանաց սյունից կապված Փրկիչը: Քիչ այն կողմ գտնվող աքաղաղի պատկերը խորհրդանշում է Պետրոսի ուրացումը:

Չորրորդ դարում Կայափայի տան ավերակների մեջ գտնվել է այն սյունը, որի վրա քահանայապետի ծառաները կապել են կալանավորված Քրիստոսին: 614թ. պարսից զորքերը, գրավելով և ավերելով Երուսաղեմը, կողոպտում են նաև այս սրբավայրը: Վնասվում և երկու մասի է բաժանվում նաև այս սյունը, որի բեկորների առաջ այսօր խոնարհվում են բոլոր ուխտավորները, տեղադրված են Ս.Փրկիչ եկեղեցու սեղանի ներքևի կողմում:

Սեղանին կից գտնվող փոքրիկ մատուռը, ուր միաժամանակ երկու հոգի հազիվ են տեղավորվում, Քրիստոսի **Երկրորդ բանտն** է և նույնպես համարվում է քրիստոնեական կարևոր սրբատեղիներից: Այստեղ են մեկուսացրել Քրիստոսին: Սեղանի տակ պահվում է մի բեկոր այն քարից, որով ծածկել են Հիսուս Քրիստոսի գերեզմանի դուռը: Կայափա քահանայապետի տան ավերակները մասնակիորեն պահպանվել են: Նրանց վրա կանգնած է Ս.Փրկիչ հայոց նոր եկեղեցու անավարտ կառույցը:

Անհիշելի ժամանակներից ի վեր Ս.Փրկիչ եկեղեցին հայոց սեփականությունն է: Մինչև օրս եկեղեցու հատակին նկատվում են 4-րդ դարի հայկական խճանկարի հատվածները: Վանքը շրջապատված է մայրիների և նոճիների պուրակով, որի խորքում գտնվում է հայկական գերեզմանատունը:

գ. Համատեղ սեփականություն քրիստոնեական այլ եկեղեցիների հետ

Սուրբ Հարության տաճար

Սուրբ Հարության տաճարը (կառուցել է բյուզանդական կայսր Կոստանդիանոս Մեծը) գտնվում է քրիստոնեական թաղամասում: Այն տարբերվում է իր երկու մեծ գմբեթների և գոթական ոճի զանգակատան շնորհիվ: Ե՛վ Գողգոթան՝ խաչելության վայրը, և՛ Քրիստոսի գերեզմանը տեղակայված են տաճարի ներսում: Տաճարն իր վրա է կրում բոլոր ժամանակների և իրադարձությունների հետքերը:

Սուրբ Հարության տաճարի ներսում տեղակայված են մի քանի եկեղեցիներ ու մատուռներ, բազմաթիվ սրբատեղիներ: Այս եկեղեցիները, մատուռները, սրբատեղիներն ու ուխտատեղիները տարբեր եկեղեցիների սեփականություն են, իսկ դրանց որոշ մասը նաև համատեղ սեփականություն է: Այժմ տաճարի սեփականատերերն են միայն հայերը, հույներն ու լատինները (կաթոլիկները): Իսկ մյուս եկեղեցիները՝ ասորական, ղպտի, եթովպական, ունեն պաշտամունքի, բայց ոչ սեփականության իրավունք: Ընդ որում՝ վերջիններս օգտվում են հայոց եկեղեցու շնորհներից, իսկ հարկ եղած դեպքում՝ նաև պաշտպանությունից: Սեփականության իրավունքն իրականացվում է հետևյալ երկու ձևով.

1. Միջազգային սրբավայրեր, որոնք են Ս.Պատանատեղին իր շրջափակով և *Ս.Գերեզմանն* ու անմիջապես նրա վրա կառուցված մեծ բոլորաշեն տաճարը, որոնք պատկանում են հայերին, հույներին և լատիններին: Այստեղ սահմանված կարգով և հերթականությամբ կրոնական արարողություններ և ծիսակատարություններ անելու իրավունք միայն նրանք ունեն:
2. Ազգային սրբավայրեր, Հարության տաճարում տեղակայված մյուս եկեղեցիները, մատուռներն ու սրբատեղիները տարբեր ազգային եկեղեցիների ու եկեղեցական համայնքների սեփականություն են:

Ս.Հարության տաճարի համատեղ սեփականությամբ **միջազգային սրբավայրեր.**

Ս.Պատանատեղին այն վայրն է, որտեղ խաչելուց հետո ստանալով Պիղատոսի թույլտվությունը, Հովսեփ Արիմաթացին ու Նիկոմեդոսը իջեցրին Քրիստոսի մարմինն ու օծեցին այն անուշահամ յուղերով ու օծանելիքներով: Պատանատեղին առաջին սրբատեղին է, որ աչքի է զարնում Սուրբ Հարության տաճար ներս մտնելիս: Այստեղ քրիստոնյաները ծնկի են գալիս: Սրբատեղին զարդարված է աշտանակներով ու կանթեղներով, որոնք պատկանում են հայերին, հույներին և կաթոլիկներին:

Փրկչի Գերեզմանը և նրա վրա կառուցված բոլորաշեն մատուռը Հարության տաճարի և ընդհանուր առմամբ ողջ քրիստոնեական աշխարհի ամենագլխավոր սրբատեղին է: Մուտքի մոտ, երկու կողմերից դրված է 12 մեծ աշտանակ, որոնցից 4-ը՝ հայոց, 4-ը՝ հունաց և 4-ը՝ կաթոլիկների սեփականությունն են: Ս.Գերեզմանի դռան վերևում երեք պատկեր կա: Առաջին յուղանկարը՝ «Տիրոջ համբարձումը», պատկանում է հայերին: Նրա առջևի գլխավոր կանթեղը կոչվում է Ս.Լուսավորչի կանթեղ: Երկրորդ և երրորդ նկարները պատկանում են հույներին և կաթոլիկներին: Դռնից ներս, մինչև գերեզմանին հասնելը, բացվում է ոչ շատ մեծ մի նախասենյակ, որի կենտրոնում է գտնվում Հրեշտակի վեմը՝ մարմարյա մի պահարան, որի մեջ է պահվում մի կտոր այն քարաբեկորից, որով փակվել է Քրիստոսի գերեզմանի մուտքը: Այդ քարի վրա, ըստ ավանդության, նստել է Աստծո հրեշտակը: Այստեղ գտնվող բոլոր զարդարանքներն ու կանթեղները պատկանում են հայերին, հույներին ու կաթոլիկներին: Նախասենյակի հյուսիսային և հարավային պատերին նշմարվում է պատուհանաձև երկու անցք, որոնք Ավագ շաբաթ օրը, ինչպես նաև Լուսավորյա հանդեսների ժամանակ վառվող Հարության նվիրական լույսը Ս.Գերեզմանից դուրս գտնվող ժողովրդին փոխանցելու համար են:

Նախասենյակից բացվում է մարմարապատ փոքրիկ դռնանցք, որը տանում է դեպի Քրիստոսի գերեզմանը: Սա փոքրիկ մի տեղ է, որի մարմարով երեսապատված պատի վրա կախված Աստվածամոր սրբանկարը ծածկում է անձեռնմխելի մնացած այն ժայռակտորը, որի մեջ առաջին դարում գտնվում էր գերեզմանը: Փրկչի գերեզմանը ծածկված է մարմարյա սալով, որի վերևում հայերին, հույներին ու կաթոլիկներին պատկանող երեք սրբանկար ու կանթեղ է կախված:

Ամեն գիշեր, ժ.1-ին, սկզբում հույները, հետո հայերը, ապա կաթոլիկները սուրբ պատարագ են մատուցում Տիրոջ գերեզմանին:

Սուրբ Հարության տաճարում հայերին (Սրբոց Հակոբյանց միաբանությանը) պատկանող **ազգային սրբատեղիներն են.**

Հանդերձից բաժանման սեղան: Հռոմեացի զինվորներն այստեղ են փորձում իրար մեջ բաժանել Քրիստոսի հանդերձները: Քրիստոսի պատմուճա-

նը, որը կարված էր Աստվածամոր ձեռքով, առանց որևէ կարի, անհնար էր բաժանել, ուստի զինվորները վիճակ էին գցել, թե ում այն կպատկանի:

Ս.Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի: Հայկական ավանդության համաձայն, երբ ս.Գրիգոր Լուսավորիչն ուխտի է գնում Երուսաղեմ: Քրիստոսի Գերեզմանից ներքև գտնվող քարայրում մոտ յոթ տարի ճգնում է: Այդտեղ այսօր գտնվում է Ս.Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին, որն ունի երկու խորան՝ ավագը Լուսավորչինն է, իսկ երկրորդը՝ Հովհաննես Մկրտչի: Եկեղեցին Սուրբ Հարության տաճարի ամենահին մասն է: Եկեղեցու հյուսիսային և հարավային պատերը Կոստանդինյան ժամանակների շինվածքներ են՝ կառուցված Հեղինե թագուհու կողմից, իսկ արևելյան պատն ու առաստաղը խաչակիրների ժամանակաշրջանի հիմնական նորոգությունների ենթարկված կառույցներ են: Կենտրոնական մասից բարձրանում է չորս սյուն, որոնք իրենց վրա են կրում գմբեթը: 1939-50թթ. եկեղեցին հիմնովին վերանորոգվել է հայերի կողմից, որի արդյունքում այն ստացել է ժամանակակից տեսքը:

Ս.Աստվածածնի ուշաթափման սրբավայր: Այստեղ ուշագնաց վայր ընկավ Ս.Աստվածածինը առաջին անգամ խաչված Քրիստոսին տեսնելով: Նրա ընկնելու տեղը լուսավորվում է կանթեղով: Մատուռի պատերը գեղասքանչ խճանկարներով են զարդարված, որոնք խաչված Քրիստոսին, Աստվածամորն ու Հովհաննես Առաքյալին են պատկերում:

Երկրորդ Գողգոթա: Քրիստոսի խաչելության վայրը՝ Գողգոթան, ի սկզբանե պատկանելիս է եղել հայերին: 1422թ. վրաց եկեղեցին խաբեությամբ այն հափշտակել է հայերից, սակայն ապաշնորհության արդյունքում չկարողանալով այն իբրև սրբավայր պահպանել՝ հետագայում փոխանցել է հույներին: Զրկվելով Գողգոթայից՝ Մարտիրոս պատրիարքը ճարահատյալ ամենօրյա պաշտամունքային արարողություններն իրականացնելու համար Ս.Հարության տաճարի վերնատան մի հատված գնում է Եգիպտոսի սուլթանից և այն, ի հիշատակ Գողգոթայի, անվանում Երկրորդ Գողգոթա: Երկրորդ Գողգոթան անվանում են նաև Հայոց վերնատուն:

Յուղաբերից սեղան: Ս.Աստվածածնի ուշաթափման սրբավայրից մոտ 5 մետր հեռավորության վրա գտնվող այն տեղն է, ուր յուղաբեր կա-

նայք՝ Մարիամ Մագթաղինացին և Հակոբ առաքյալի մայրը՝ Մարիամը, Հիսուս Քրիստոսի մարմինն օծելու նպատակով գերեզման այցելելիս տեսան այն բացված և հանդիպեցին Աստծո հրեշտակին, որը նրանց ավետեց Քրիստոսի հարությունը:

Հովսեփ Արիմաթացու մատուռ: Սա Հովսեփ Արիմաթացու և իր ընտանիքի գերեզմանն է: Համաձայն Մատթեոսի ավետարանի, Հիսուսը թաղվում է Գողգոթային մոտիկ գտնվող Հովսեփ Արիմաթացու կալվածքներում, այն ժայռափոր գերեզմանում, որը վերջինս նախապես պատրաստել էր իր ընտանիքի համար: Նույն Հովսեփ Արիմաթացին էր, որ Նիկոմեդոսի հետ Քրիստոսի մարմինը վար է իջեցնում խաչի վրայից և անուշահոտ յուղերով Պատանաքարի վրա օծում այն: Հովսեփի մահից հետո իր խնդրանքով նրան թաղում են Ս.Գերեզմանին մոտիկ գտնվող այս ժայռափոր հատվածում:

Սուրբ Աստվածածնի տաճար

Երուսաղեմի Հին քաղաքից դուրս, Ձիթենյաց կամ այլ կերպ Համբարձման լեռան ամբողջ ստորոտի երկարությամբ ձգվում է Գեթսեմանի ձորակը՝ գորշ լանջերի վրա ձգվող կանաչ կղզյակներով: Սրանք հայտնի Ձիթենյաց պարտեզի մեզ հասած մնացորդներն են, այն պարտեզի, որտեղ սիրում էր զբոսնել, հանգստանալ և աղոթել Հիսուսը: Այստեղ տեղի ունեցան Քրիստոսի վերջին աղոթքն ու Հուդայի մատնությունը: Ս.Աստվածածնի տաճարը գտնվում է Գեթսեմանի ձորակում: Տաճարը փաստացի տեղադրված է գետնի տակ, և այնտեղ մտնելու համար հարկավոր է վար իջնել երկար աստիճանասանդուղքով: Տաճար դեռ չմտած, սանդուղքից ձախ ընկած է *«Գեթսեմանի Հայոց պարտեզը»:* Սա երկհազարամյա Գեթսեմանի պարտեզի կղզյակներից մեկն է, որը խնամքով պահպանվում է Սրբոց Հակոբյանց միաբանության կողմից:

Գեթսեմանի պարտեզի քարայրներից մեկում թաղված են եղել Աստվածամոր ծնողները՝ Աննան և Հովակիմը, իսկ ոչ շատ հեռու՝ նաև իր ամուսինը՝ Հովսեփը: Այդ պատճառով Աստվածամայրն առաքյալներին խնդրում է իրեն էլ Գեթսեմանի պարտեզում թաղել: Գեթսեմանի պար-

տեզում Աստվածամոր գերեզմանի վրա առաջին տաճարը կառուցվել է 5-րդ դարում: Ս.Աստվածածնին է նվիրված Վերափոխման տոնը:

Տաճարն իր նախնական խաչաձև հատակագիծը պահպանած միջնադարյան կառույց է: Մուտքից մինչև գերեզմանատեղին իջնում են 47 լայն աստիճաններով: Վայրէջքի կեսին աջ կողմում գտնվում է Ս.Աստվածածնի ծնողների (հույներին է պատկանում), իսկ ձախ կողմում ամուսնու՝ Հովսեփի խորանը (պատկանում է հայերին): Սանդուղքներից ներքև բացվում է քարայրանման, կամարակապ փոքրիկ մի եկեղեցի, որը լուսավորվում է բազմաթիվ կանթեղներով: Կենտրոնում կանգնած է Սուրբ կույսի գերեզմանի մատուռը: Մատուռի ներսում քարե մահիճ կա: Այստեղ ներս մտնելով, համաձայն ավանդության, Թովմաս առաքյալը գերեզմանը դատարկ գտավ: Այստեղից է Մայր Աստվածածինը երկինք տարվել:

Այս սրբավայրը, ինչպես նաև եկեղեցու մեջ գտնվող ամեն ինչ պատկանում է հայերին և հույներին: Գերեզմանի հարավային մասը դռների հետ պատկանում է հույներին, իսկ հյուսիսային մասն այդ հատվածի դռան հետ մեկտեղ՝ հայերին: Ամեն օր այստեղ հայերենով և հունարենով պատարագ է մատուցվում: Ս.Աստվածածնի մատուռի առջև գտնվող սքանչելի խորանը, ի պատիվ Սուրբ կույսի, 1300թ. կանգնեցրել է Կիլիկիո հայոց Հեթում Բ թագավորը: Այդ խորանից ձախ, հյուսիսային պատի մեջ որմնախորշ կա, որտեղ Ս.Թադեոս և Ս.Բարդուղիմեոս առաքյալների սեղաններն են գտնվում:

Սուրբ Ծննդյան տաճար

Սուրբ Ծննդյան տաճարը գտնվում է Քրիստոսի ծննդավայրում՝ Բեթղեհեմում: Այն քարայրի վրա, որտեղ ծնվել է Հիսուսը, կանգնած է միջնադարյան ամրոցի նմանվող մի հսկայական վանք, որը երեք առանձին՝ հայկական, հունական և կաթոլիկ եկեղեցիներից է բաղկացած: Տաճարի մուտքն ունի ընդամենը 1,1 մետր բարձրություն և կոչվում է *«Խոնարհության դարպաս»:* Սա յուրաքանչյուր ներս մտնողի ստիպում է խոնարհվել Փրկչի առաջ: Այդ դուռը տանում է դեպի սպասման փոքր գավիթ, որտեղից տաճարի սյունազարդ գավիթ մտնող մուտքը կոչվում է

Հեթում թագավորի դուռ: Այն կառուցել է 1227թ. Հեթում Ա թագավորը: 6-րդ դարի գավիթը հիմնականում պահպանել է սկզբնական տեսքը՝ չնայած բազմաթիվ պատերազմներին ու ավերածություններին: Սյունազարդ գավթի հարավային կողմի դուռը տանում է դեպի հունական եկեղեցի, իսկ հյուսիսային կողմի դուռը՝ դեպի կաթոլիկ եկեղեցի:

Տաճարի սյունազարդ գավիթը հավասարապես պատկանում է հայերին, հույներին և կաթոլիկներին: Կենտրոնական մասում կախված է հունական սրբանկար, որի տակ գտնվում է Սուրբ այրը: Այրի աջ կողմում գտնվում է հունաց Դասը, իսկ ձախ կողմում՝ հայոց Դասը: Ս.Ծննդյան տաճարի հայոց Դասը երկու սեղան ունի: Ավագ սեղանը տեղադրված է ձախ մասում, պատի մոտ, որտեղ, ըստ ավանդության, տեղի է ունեցել մոգերի երկրպագությունը: Երկրորդ սեղանը թլպատության սեղանն է, որը Սուրբ այրի մուտքի մոտ է գտնվում: Այս սեղանների շուրջը օրական երկու անգամ պատարագ է մատուցվում: Այրի ձախ մասում գտնվում է Ծննդյան սեղանը, որի ներքևում անմար կանթեղների լույսի տակ շողացող արծաթյա աստղը ցույց է տալիս Քրիստոսի ծնվելու տեղը: Այս սեղանը հույների և հայերի սեփականությունն է: Այստեղ ամեն առավոտ նախ հույների, ապա հայերի կողմից պատարագ է մատուցվում: Ծննդյան սեղանից մի փոքր այն կողմ արևելքի մոգերի անվան սեղանն է, որը գտնվում է Քրիստոսի մսուրի տեղում: Այս սեղանը պատկանում է կաթոլիկներին, որոնք ևս ամեն օր այստեղ պատարագ են մատուցում:

Խոնարհության դարպասից մուտք գործելուց հետո, սպասման փոքր գավթից դեպի տաճարի սյունազարդ գավիթ տանող Հեթում թագավորի դռնից մի փոքր դեպի աջ, գտնվում է ևս մեկ ցածրիկ դուռ, որը վանական հին պարտեզի միջով տանում է դեպի տաճարի **հայոց վանք:** Վանքը բաղկացած է երկու եկեղեցուց և 20 սենյակից: Վանքի գետնահարկում գտնվում է Ս.Երրորդություն եկեղեցին, որն այժմ ծառայում է որպես սեղանատուն: Երկրորդ եկեղեցին կոչվում է Ս.Աստվածածին: Վանքի տանիքի վրա գտնվում է զանգակատունը հինգ մեծ և փոքր զանգերով: Զանգակատան կողքից վեր է խոյանում նաև մի ծող, որի ծայրին ամրացված են աստղ և Ս.Հ. (Սուրբ Հակոբ) տառերը:

Վերը թվարկված վանքերով, եկեղեցիներով ու սրբատեղիներով հայոց «ունեցվածքն», անշուշտ, չի սահմանափակվում: Երուսաղեմում և շրջակա տարածքներում Հայությունն, ի դեմս Հայ Առաքելական եկեղեցու Սրբոց Հակոբյանց միաբանության, տիրապետում է բազմաթիվ այլ սրբատեղիների, ունի վանքեր, եկեղեցիներ, վանքապատկան բազմաթիվ կալվածքներ և այլ ունեցվածք:

Սուրբ վայրերում վերը թվարկված ազգային և համատեղ սեփականություն հանդիսացող եկեղեցիներից բացի, Սրբոց Հակոբյանց առաքելական աթոռին այդ տարածաշրջանում պատկանում են ևս մի քանի գործող եկեղեցի: Մասնավորապես՝ Յոպպեի Ս.Նիկողայոս վանքը, Հայֆայի **Ս.Եղիա եկեղեցին,** Ռամլեի **Ս.Գևորգի վանքը** և Ամմանի (Հորդանան) **Ս.Թադեոս եկեղեցին:**

3. Սրբոց Հակոբյանց միաբանության ժառանգությունը և վանքապատկան կարևորագույն կառույցները

Դարերի ընթացքում Սրբոց Հակոբյանց միաբանության կողմից հիմնադրվել և գործում են մի շարք հեղինակավոր ստորաբաժանումներ և գիտական ու կրթական կառույցներ, որոնք այսօր էլ կարևոր դերակատարություն ունեն ոչ միայն միաբանության և Երուսաղեմի հայ համայնքի կյանքում, այլև ողջ Հայության համար ընդհանրապես:

ա. Ձեռագրաց մատենադարան

Մինչև 1897թ. ձեռագիր մատյանները պահպանվել են վանքի տանիքներում գտնվող սենյակներում: 1897թ. ձեռագրաց մատենադարանը տեղափոխվում է Ս.Թեոդորոս եկեղեցու ավանդատան հարևանությամբ, այդ նպատակով Հարություն Վեհապետյան պատրիարքի կողմից կառուցված 16 դարանապահոցներ:

Ձեռագիր մատյաններն առաջին անգամ ցուցակագրել է Տիգրան Սավալանյանը 1865-1867թթ.: Վերջինս ցուցակագրել և համարակալել է 1742 ձեռագիր մատյան: Հետագայում ցանկերի կազմմանն ու հրատա-

րակմանը ձեռնամուխ է եղել Ա.Սյուրմեյանը: 1966թ. Ն.Պողարյանը ձեռնարկել է «Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Հակոբյանց» ցանկի նոր և վերափոխված հրատարակությունը: Լույս է տեսել վերոհիշյալ աշխատության 11 հատոր, որտեղ մանրամասն նկարագրվում են միաբանության Ձեռագրաց մատենադարանում գտնվող գրեթե բոլոր մատյաններն ու ձեռագրերը: Ներկա պահին մատյանների ընդհանուր թիվը 4000-ից ավելի է՝ հանդիսանալով երկրորդ լավագույն հավաքածուն Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանից հետո:

Այս հիանալի ձեռագիր մատյանները ստեղծվել են Վարդապետարաններում՝ միջնադարյան Հայաստանի բարձրագույն դպրոցների ձեռագրատներում: Տվյալ հավաքածուի բազմաթիվ Աստվածաշունչ մատյաններն ու ավետարանները, հին բնագրերն ու թարգմանությունները, եկեղեցական, պատմական ու գեղարվեստական գրքերի հազվագյուտ նմուշներն, իրենց բովանդակած գիտական և պատմական արժեքավոր նյութի հետ մեկտեղ, միաժամանակ նաև արվեստի եզակի ստեղծագործություններ են: Այս մասունքներից յուրաքանչյուրը ստեղծված է բազում տաղանդավոր հայ վարպետների ջանքերով՝ գեղագիրներ, ծաղկող-մանրանկարիչներ, կազմարարներ, ոսկերիչ-արծաթագործներ և այլն: Այս ձեռագրերին հայ ազգը միշտ հատուկ սիրով, ակնածանքով ու երկյուղածությամբ է վերաբերվել: Մատյանները իբրև մասունք փոխանցվել են սերնդեսերունդ: Ցավոք սրտի, մեզ է հասել մեր նախնյաց ժառանգություն հանդիսացող անգին գանձերի մի փոքր մասը միայն:

Սրբոց Հակոբյանց վանքի ձեռագրերի հավաքածուն ընդգրկում է 10-18-րդ դարերի ձեռագրեր, ստեղծված ոչ միայն Մեծ Հայքի ու Փոքր Հայքի, այլև Հայոց Կիլիկիայի, Ղրիմի, Նոր Ջուղայի, Կոստանդնուպոլսի և այլ վայրերի հայ վարպետների ձեռքերով: Այդ ձեռագրերի մեծ մասը դարերի ընթացքում Սրբոց Հակոբյանց միաբանությանն է նվիրաբերվել Երուսաղեմ այցելող հայ ուխտավորների կողմից: Հավաքածուի ամենահին նմուշներն են 10-րդ դարի Սբ. Մարկոսի Ավետարանի մեկ էջը և Երկրորդ Էջմիածնական Ավետարանը (10-րդ դ. վերջ-11-րդ դ. սկիզբ): Հավաքածուի մեջ պահպանվում է հայկական ձեռագրային նշանակության ամենանշանավոր գործերից մեկը՝ Կարսի ավետարանը: Ձեռագ-

րատան հավաքածուի գլուխգործոցներն են Սարգիս Պիծակի մի քանի աշխատություն, ինչպես նաև Թորոս Ռոսլինի կողմից կատարված հայ մանրանկարչության չորս գանձ: Ինչպես հայտնի է, Թորոս Ռոսլինի հանճարեղ ստեղծագործություններից մեզ է հասել ընդամենը յոթ գործ:

Ներկա պահին պատրիարքարանում քննարկվում է Ձեռագրաց մատենադարանի պահպանության, ուսումնասիրության, հետազոտման և օգտագործման նպատակով հատուկ հանձնախումբ ստեղծելու հարցը:

բ. Թանգարան

Վանքի թանգարանը կրում է Հելեն և Էդուարդ Մարտիկյանների անունը: Թանգարանում զետեղված է տարբեր ժամանակներում, հայկական տարբեր եկեղեցիներից բերված և Երուսաղեմի Հայոց պատրիարքարանին ընծայաբերված իրերի ու առարկաների հարուստ հավաքածուն, որոնցից շատերն արվեստի հազվագյուտ նմուշներ ու գլուխգործոցներ են: Այստեղ են պահվում նաև դարերի ընթացքում Երուսաղեմ այցելած հայ ուխտավորների կողմից վանքին ու միաբանությանը նվիրաբերված բազմաթիվ նմուշներ, որոնք ևս արվեստի գործեր են: Ներկա պահին ընթանում են թանգարանի վերանորոգման աշխատանքները: Թանգարանի տեսուչն է Ավետիս վարդապետ Իփրաջյանը:

գ. Գյուլբենկյան մատենադարան

Գյուլբենկյան մատենադարանը հիմնադրվել է 1932թ. հայ մեծահարուստ և բարերար Գալուստ Գյուլբենկյանի հովանավորությամբ, նվիրված իր ծնողների՝ Սարգիս և Տիրուհի Գյուլբենկյանների հիշատակին: Գյուլբենկյան մատենադարանում պահվում են վանքի հին գրադարանի, միաբանական գրադարանի, Եղիշե Դուրյան պատրիարքի անձնական, ինչպես նաև 1932թ. այս կողմ նվեր տրված և գնված բոլոր գրքերն ու հրատարակությունները՝ ընդհանուր թվաքանակով մոտ 50000 հատոր: Բացի հայերենից, կան նաև ֆրանսերեն, անգլերեն, գերմաներեն և այլ լեզուներով տպագրված կարևոր հրատարակություններ: Մատենադարանի ստորին հարկը հատկացված է հայերեն, իսկ վերին հարկը՝ օտարալեզու գրականության պահպանման համար:

Մատենադարանը ստանում է մոտ 190 օրաթերթ, ամսագիր, պարբերական և այլն, թե՛ հայերեն և թե՛ օտար լեզուներով:

Ամենահին տպագիր հրատարակություններից են Հակոբ Մեղապարտի Պարզատոմարը՝ հրատարակված Վենետիկում 1512թ., և ամենահին լրագիրը հայ լրագրության մեջ՝ «Ազդարարի» ամբողջ հավաքածուն, տպագրված Մադրասում 1794թ.: Այստեղ է պահվում իր տեսակի մեջ եզակի, Նոր Ջուղայում տպագրված «Հարանց Վարքը»՝ տպագրված 1640թ. Խաչատուր Կեսարացի եպիսկոպոսի նախաձեռնությամբ: Այս հրատարակությունն առանձնահատուկ է նրանով, որ ջուղայեցի հայերը իրենք են պատրաստել թուղթը, կաղապարները, տառերը, ներկերը և այլ անհրաժեշտ պարագաները:

Մատենադարանի ծախսերն առ այսօր իրականացվում են Գալուստ Գյուլբենկյանի կողմից հատկացված գումարներով:

Մատենադարանից օգտվում են թե՛ միաբանության անդամները, թե՛ հայկական վարժարանների սաները և թե՛ հայ և օտար հասարակայնությունը:

Գյուլբենկյան մատենադարանի տեսուչն է Նորայր աբեղա Ղազազյանը:

դ. Տպարան

Երուսաղեմի հայկական տպարանը հիմնադրվել է 1833թ. Զաքարիա Կոփեցի պատրիարքի նախաձեռնությամբ: Տպարանը սկզբնավորապես գործել է մի քանի սենյակներում: Առաջին տեսուչը եղել է Կիրակոս Երուսաղեմացին: Հետագայում, տպագրական գործունեության ծավալման և պահանջարկի մեծացման արդյունքում, 1865թ. ուխտավորների գրաստների համար նախատեսված ախոռը՝ մոտ 750մ^2 տարածությամբ, հատուկ վերանորոգվում և հարմարեցվում է, որտեղ և տեղափոխվում է տպարանը՝ ցայսօր տեղակայված մնալով այդտեղ:

Ներկայումս ունի չորս բաժանմունք՝ գրաշարատուն, կազմատուն, տպագրատուն և գրատուն: Գրաշարատունն ունի 80 տեսակի տառեր՝ մեծ մասամբ հայկական, ինչպես նաև լատինական, արաբական, հունական և եբրայական: Կազմատունն ունի էլեկտրակտրիչ և ծալիչ մեքենաներ, ինչպես նաև մեծ ու փոքր կտրիչ մեքենաներ, տպագրական

այլ սարքավորումներ: Տպագրատան մեջ կան էլեկտրաշարժ արագատիպ մամուլ և ոտնամամուլ: Գրատան մեջ տեղակայված է տպարանի պահեստային մասը:

Երուսաղեմի հայկական տպարանը հայ տպագրության խոշոր կենտրոններից է: Տպարանը Հայ Առաքելական եկեղեցու ողջ աշխարհով սփռված թեմերի ու ստորաբաժանումների եկեղեցական, ծիսական ու հոգևոր գրականության հիմնական մատակարարն է: Հրատարակությունների շարքում զգալի մաս են կազմում նաև պատմական, պատմատեղեկագրական, բանասիրական, գրականագիտական, գիտահանրամատչելի բնույթի հրատարակությունները: 1866թ. հիմնադրվել է «Սիոն» ամսագիրը, որն ընդհատումներից հետո՝ 1927 թվականից սկսած, առանց ընդհատումների տպագրվում է առ այսօր: Ներկա պահին այն տպագրվում է որպես եռամսյա պարբերական:

Ներկա պահին տպարանի տեսուչի պաշտոնը թափուր է:

ե. Ժառանգավորաց վարժարան և ընծայարան

Սրբոց Հակոբյանց միաբանության հոգևոր ճեմարանը՝ Ժառանգավորաց վարժարանը և ընծայարանը, հիմնադրվել է 1843թ. Ռամլեում: 1953թ. տեղափոխվել է Երուսաղեմ: Վարժարանի շենքը կառուցվել է 1972թ.՝ Ալեք և Մարի Մանուկյանների հովանավորությամբ: Ժառանգավորաց վարժարան ընդունվում են նախակրթարանի զ (6-րդ) դասարանն ավարտած աշակերտները: Վարժարանում ուսուցումը 5 տարի է, որի ընթացքում դասավանդվում են.

- *լեզուներ* (հայերեն՝ աշխարհաբար և գրաբար, անգլերեն, արաբերեն, մինչև 1957թ.՝ նաև ֆրանսերեն)
- *պատմություն* (հայ եկեղեցու պատմություն, հայ ժողովրդի պատմություն, ընդհանուր ազգաց պատմություն)
- կրոն (սուրբ գրոց պատմություն, քրիստոնեական ներածություն և մեկնություն և այլն)
- *գիտություն և ուսողություն* (թվաբանություն, հանրահաշիվ, երկրաչափություն, աշխարհագրություն, բնագիտություն և այլն)

• *երաժշտություն* (եկեղեցական, դասական երաժշտություն, սոլֆեջիո և այլն)։

Վարժարանի հնգամյա դասընթացն ավարտող աշակերտները, եթե կամավոր ցանկանում են հոգևորական դառնալ, պատրիարքի համաձայնությամբ ուսումը շարունակում են ընծայարանում, որտեղ արդեն ստանում են բարձրագույն կրթություն: Ընծայարանում ուսուցումը 4 տարի է: Դասավանդվող առարկաներն են.

• *լեզուներ* (հայերեն՝ աշխարհաբար և գրաբար, անգլերեն, արաբերեն, ևս մեկ հավելյալ օտար լեզու)

• *պատմություն* (հայ ժողովրդի պատմություն, ընդհանուր եկեղեցու պատմություն, հայ մատենագրություն, ծիսագիտություն, կրոնի պատմություն)

• *աստվածաբանություն* (Սուրբ գրքի ներածություն և մեկնություն, աստվածաբանության տեսություն, հոգևորական, հովվական և բարոյական աստվածաբանություն)

• *իմաստասիրական գիտություններ* (հոգեբանություն, սոցիոլոգիա, տրամաբանություն, իմաստասիրության պատմություն, տեսական իմաստասիրություն, գեղեցկագիտություն (էսթետիկա), բարոյագիտություն)

• *երաժշտություն* (եկեղեցական, դասական, սոլֆեջիո, հարմոնիա)։

Ընծայարանի ողջ դասընթացն ավարտող սաները կուսակրոն քահանայության և Սրբոց Հակոբյանց միաբանության ուխտին անդամակցելու համար ուխտագիր են ներկայացնում տնօրեն ժողովին, որի որոշման հիման վրա ձեռնադրվում են կուսակրոն աբեղա, ապա վարդապետ:

Ներկա պահին Ժառանգավորաց վարժարանում և ընծայարանում սովորում է 36 սան, որոնց գերակշիռ մեծամասնությունը Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ են: Հաշվի առնելով վարժարանի և ընծայարանի առջև ծառացած հիմնախնդիրները, զարգացման հնարավոր հեռանկարները և Մայր Հայրենիքի գիտական և կրթական համա-

կարգին ներդաշնակման անհրաժեշտությունը՝ վարժարանի տեսչությունը հարց բարձրացրեց ընծայարանի շրջանավարտներին ՀՀ պետական նմուշի դիպլոմ հատկացնելու վերաբերյալ:

գ. Սրբոց Թարգմանչաց վարժարան

Մինչ Սրբոց Թարգմանչաց վարժարանի հիմնադրումը, դեռևս 1862 թվականից Երուսաղեմում գործել են հայկական մանկապարտեզ, աղջիկների Գայանյան և տղաների Մեսրոպյան նախակրթարանները: Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանը վկայում է, որ հայ մանուկների թիվը մանկապարտեզում հասել է մինչև 100-ի, նախակրթարաններում աղջիկներինը՝ 20-ի, իսկ տղաներինը՝ 30-ի: 1927թ. ավերիչ երկրաշարժից հետո պատրիարքարանը որոշում է կայացնում կառուցել նոր շենք և հիմնադրել Սրբոց Թարգմանչաց վարժարանը, որն իր մեջ միաժամանակ կընդգրկեր և՛ մանկապարտեզը, և՛ նախակրթարանները: Վարժարանը սկսեց գործել 1929-ից: 1953թ., երբ հիմնադրվեց երկրորդական վարժարանը, Սրբոց Թարգմանչաց վարժարանի կրթական համակարգը ստացավ ամբողջական տեսք: Կրթական իր այս երեք ստորաբաժանումից զատ (մանկապարտեզ, նախակրթարան, երկրորդական վարժարան), Թարգմանչաց վարժարանն ունի նաև սկաուտական խմբեր: Արիների և գայլիկների խմբերը ստեղծվել են վարժարանի հիմնադրման հետ միաժամանակ, իսկ արենուշների և արծվիկների խմբերը կազմավորվել են 1953 թվականից:

1948թ. արաբա-իսրայելյան պատերազմից առաջ Սրբոց Թարգմանչաց վարժարանի աշակերտների թիվը հասնում էր մինչև 750-ի: Դեռևս 10 տարի առաջ աշակերտների թիվը մոտ 400 էր: Ներկա պահին աշակերտների թիվը նվազել է և չի գերազանցում 100-ը:

Այս տարվա մայիսին հանդիսավորությամբ նշվեց վարժարանի 80-ամյակը: Այդ առթիվ Գիտակրթական և ստեղծագործական զարգացման հանրապետական կենտրոնի նախաձեռնությամբ Սրբոց Թարգմանչաց վարժարանին առաքվեցին 112 անուն 800 կտոր ուսումնական նյութեր, դասագրքեր, ուսումնական գրականություն, մեթոդական ձեռնարկներ, ուղեցույցներ, ուսումնական տեսաֆիլմեր, *DVD* և *CD* ուսում-

նական նյութեր, քարտեզներ և այլն: Սա առաջին դեպքն է, երբ մայր հայրենիքից օժանդակություն է ցուցաբերվում երուսաղեմահայ կրթական հաստատություններին: Այդ գործընթացն ունի շարունակականության միտումներ:

Սրբոց Թարգմանչաց վարժարանի տեսուչն է Նորայր աբեղա Ղազազյանը:

ՍՐԲՈՑ ՀԱԿՈԲՅԱՆՑ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ ԵՎ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Երուսաղեմում Հայ եկեղեցու իրավունքների ու դիրքերի ամրապնդման, թերևս, առաջին քայլերը կատարվել են Գրիգոր Լուսավորչի կողմից: Ըստ Գրիգոր Տաթևացու (1346-1409թթ.), Հայաստանում քրիստոնեության ընդունումից (301թ.) և ամրապնդումից հետո, 315թ. Ս.Գրիգոր Լուսավորիչը Հայոց արքա Տրդատ Գ Մեծի հետ մեծ շքախմբով մեկնում է Հռոմ, Պողոս և Պետրոս առաքյալների մասունքների առջև խոնարհվելու, ինչպես նաև կայսր Կոստանդին Ա Մեծի և Հռոմի եկեղեցու քահանայապետ ս.Սիլվեստերի հետ եղբայրական համաձայնագիր հաստատելու նպատակով: Լուսավորչին Հռոմում ընդունում են մեծ պատվով և մեծարանքով: Նրան են փոխանցում սուրբ առաքյալների մասունքները և այլ նվերներ: Այնուհետև բանակցում են Երուսաղեմում Սուրբ վայրերի տնօրինման հետ կապված հարցերի շուրջ: Հայերին բաժին է ընկնում Ս.Հակոբի մատուռը (այսօր՝ Սրբոց Հակոբյանց վանքը), Գողգոթան և մի շարք այլ սրբատեղիներ: Ո՞վ պետք է հսկի և պահպանի Քրիստոսի գերեզմանը՝ որոշվել է վիճակահանությամբ, որը, ճակատագրի կամոք, բաժին է ընկել հայերին: Տեսնելով, որ մյուս հավակնորդները տրտմել էին, Ս.Գրիգոր Լուսավորիչը համաձայնություն է տալիս, որ բոլորը միասին մասնակցեն Տիրոջ Սուրբ Գերեզմանի տաճարի կառուցմանը: Եվ երբ Սուրբ վայրերը տեղաբաշխեցին, Սուրբ Գերեզմանի վրա կանթեղներ կախեցին հանուն քրիստոնյա ժողովուրդների[1]:

---

[1] “Агапе-Диалог”. Христианский межконфессиональный форум отца Гевонда Оганесяна, настоятеля монастыря Святых Архангелов Иерусалимской патриархии Армянской Апостольской церкви. Сообщение #1.
http://evangelie.cn/index.php?showtopic=447

Սա կարելի է համարել Երուսաղեմի սրբատեղիների բաժանման և փոխադարձ իրավունքների սահմանման, թերևս, առաջին պայմանագիրը: Ըստ Անաստաս վարդապետի՝ «Երուսաղեմի հայկական վանքերի մասին» աշխատության (7-րդ դ.), Ս.Տրդատի թագավորության և Ս.Գրիգորի կաթողիկոսության ժամանակաշրջանում շատ հայ նախարարներ եկեղեցիներ և վանքեր կառուցեցին Սուրբ վայրերում: Այդ աշխատանքները շարունակվեցին Ս.Ներսես Գ Մեծի օրոք և 7-րդ դարում եկեղեցիների և վանքերի թիվը Սուրբ վայրերում հասավ 70-ի[1]:

Մինչև 7-րդ դարը, քանի դեռ քրիստոնեական եկեղեցին Երուսաղեմում միասնական էր, սրբատեղիների, եկեղեցական սեփականության և իրավունքների շուրջ վեճեր և տարաձայնություններ, որպես այդպիսին, տեղի չեն ունեցել: 7-րդ դարում, երբ քրիստոնեական եկեղեցին Երուսաղեմում ևս կիսվեց միաբնակների և երկբնակների՝ բյուզանդական (հունական) եկեղեցին ընդունեց երկբնակության սկզբունքը, հայկական եկեղեցին և մի շարք արևելյան եկեղեցիներ (ասորական, ղպտի, հաբեշական) հավատարիմ մնացին միաբնակության սկզբունքներին: Ինչպես հայտնի է, այս հանգամանքն առաջ բերեց քրիստոնեական եկեղեցու փեղեկում նաև Երուսաղեմում:

Փեղեկումից հետո քրիստոնեական եկեղեցիների միջև աստիճանաբար սկսում է ձևավորվել ու զարգանալ պայքար հանուն սրբատեղիների և հոգևոր իշխանության: Միջին դարերում, հատկապես մահմեդական տիրապետությունների ժամանակաշրջաններում, հայկական եկեղեցուն միշտ սպառնացել է երկու վտանգ. առաջինը՝ կոտորածներն ու ավերածությունները, թալանն ու հափշտակությունը, և երկրորդը՝ նենգամիտ ու դավադիր գործողությունները այլ եկեղեցիների կողմից:

Հնարավոր ավերածություններից խուսափելու և հարակից խարդավանքներին դիմակայելու նպատակով մեր եկեղեցական այրերը ձգտել են իրենց իրավունքներն ու սեփականությունն ամրագրել տարաբնույթ հավատարմագրերով, տիրակալների հրովարտակներով և այլն: Այս փաստաթղթերից յուրաքանչյուրն իր ժամանակաշրջանում հանդիսա-

[1] Նույն տեղում:

ցել է իրավական բարձրագույն ուժ ունեցող փաստաթուղթ, որը և ամրագրել է Երուսաղեմի հայ եկեղեցու և Հայոց պատրիարքության կարգավիճակը, ունեցվածքը, սեփականությունն ու իրավունքները:

Համաձայն ավանդության, նման առաջին փաստաթուղթը հայերը, ավելի կոնկրետ՝ Երուսաղեմի հայոց առաջին պատրիարք Աբրահամը, ձեռք են բերել Մուհամեդ մարգարեից: Աբրահամ պատրիարքը (այդ մասին վկայում են նաև արաբ պատմիչները) 626թ. հանդիպել է Մուհամեդ մարգարեին և բանակցությունների արդյունքում գլխահարկ (ջիզյե) վճարելու դիմաց ձեռք բերել հավատարմագիր Երուսաղեմի Հայոց եկեղեցու անձեռնմխելիության մասին: Այս փաստաթղթի բնօրինակը չի պահպանվել, ինչը հարցականի տակ է դնում վերջինիս գոյությունն ընդհանրապես: Սակայն Երուսաղեմի Հայոց պատրիարքարանում պահպանվում է այդ հավատարմագրի պատճենը, որտեղ կան 30 հոգու, այդ թվում նաև Օմարի ստորագրությունները: Այս հանգամանքը խոսում է հրովարտակի գոյության իսկության մասին: Պատճենի վրա չկա նաև թվական տվյալ, ինչը բնորոշ է մահմեդական թվագրությունից առաջ գոյություն ունեցող արաբական փաստաթղթերին: 636թ. արդեն խալիֆ դարձած Օմարը Երուսաղեմը նվաճելուց հետո հայոց պատրիարք Գրիգոր Ուրֆայեցուն տալիս է մի նոր հավատարմագիր, որտեղ «հղում է անում» Մուհամեդին: Աբրահամ պատրիարքի և Մուհամեդ մարգարեի միջև հանդիպում գուցե և եղել է (համենայնդեպս՝ այդ մասին կան նաև պատմիչների վկայություններ), սակայն ամենայն հավանականությամբ Մուհամեդի կողմից տրված հավատարմագիր գոյություն չի ունեցել, պարզապես Օմարը, ձգտելով արդարացնել իր քայլը և չուզենալով հայոց եկեղեցուն տրված արտոնությունների հարցում լինել առաջինը, կամ գուցեև հիշելով մարգարեի բանավոր խոսքը, իր տված հավատարմագրում վկայակոչում է մարգարեին:

Հետագայում, ինչպես վկայում են պատմական փաստերը, նմանատիպ հրովարտակներ և հավատարմագրեր Երուսաղեմի Հայոց պատրիարքարանը ստանում է նաև մի շարք միապետներից ու նվաճողներից՝ Սալահ-Էդ-Դինից, Աբու Մուհամեդ Չաքմաքից և այլն: Արաբ միապետներից ստացված այդ արտոնագրերն ունեին «Ալ-Մանշուր» ընդ-

հանուր անվանումը: Յուրաքանչյուր մուսուլմանական նոր նվաճողի հայերը ցույց են տվել նախորդների հրովարտակները և ձեռք բերել նորը: Արդյունքում՝ դիվանագիտական ճկունության, իրատես ու պրագմատիկ վարքագծի և, իհարկե, հաճախ նաև փրկագների ու նվիրատվությունների ճիշտ ու տեղին կիրառման արդյունքում Սրբոց Հակոբյանց միաբանությունը և Երուսաղեմի Հայոց պատրիարքությունը կարողացել են պահպանել հայկական եկեղեցու անձեռնմխելի կարգավիճակը, սեփականությունն ու իրավունքները:

Արաբական տիրապետության ժամանակներում Երուսաղեմում գործում էր «զիմմայի» սկզբունքը, որի հիմքը դրվել էր դեռևս Օմարի ժամանակներից: Օմարը պայմանագիր էր կնքել քաղաքի բնակչության հետ, որով անձեռնմխելիության երաշխիքներ էր տվել բնակիչներին, գործող եկեղեցիներին ու նրանց ունեցվածքին: Երուսաղեմը պարտավոր էր միայն ջիզյա վճարել և կրել էլի մի քանի մանր-մունր պարտավորություններ: Կրոնական համայնքի ղեկավարը՝ պատրիարքը կամ եպիսկոպոսը, ճանաչվում էր համայնքի լիազոր ղեկավարը և միակ ներկայացուցիչն իշխանությունների առջև, իսկ համայնքն իր ներքին գործերում մնում էր գրեթե անկախ ու ինքնուրույն:

Մինչև խաչակրաց արշավանքները Երուսաղեմը, մնալով Օմայան և Աբբասյան խալիֆությունների, այնուհետև՝ Ֆաթիմյան թագավորության և սելջուկյան տիրապետության տակ, կառավարվում էր գրեթե նույն սկզբունքով, որը շարունակեց գործել նաև խաչակիրներից և մամլուքներից հետո: Զիմմայի սկզբունքը մասնակի փոփոխություններով գործեց գրեթե մինչև 20-րդ դարի սկիզբը:

Շուրջ չորս դար Երուսաղեմը գտնվել է Օսմանյան կայսրության տիրապետության տակ: Սուլթանները ևս առաջնորդվեցին զիմմայի վերաբերյալ պայմանագրերով հաստատված կարգով: Միաժամանակ, դեռևս 15-րդ դարի կեսերից Օսմանյան կայսրությունում ներդրվեց միլլեթների համակարգը, որը մշակվեց Մեհմեդ 2-րդ սուլթանի օրոք: Օսմանյան կայսրությունում միլլեթը ժողովուրդների դասակարգման կամ տարանջատման սկզբունքն էր ըստ կրոնական պատկանելության, որոնց իրավունքները միատեսակ չէին: Կայսրության ոչ մահմեդական ժողովուրդ-

ները չէին համարվում լիարժեք քաղաքացիներ (հպատակներ) և չէին օգտվում լիարժեք քաղաքական իրավունքներից, սակայն իրենց կրոնական համայնքների շրջանակներում ունեին որոշակի ազատություններ և ինքնուրույնություն:

Իրենց բազմազգ ու բազմակրոն կայսրությունն ամրապնդելու համար սուլթանները լավագույն մեթոդներից մեկն էին համարում այլ ժողովուրդներին վերահսկել և կառավարել իրենց ազգային կրոնների (հոգևորական էլիտայի) միջոցով: Դեռևս Մեհմեդ 2-րդը սկսեց իրականացնել որոշակի կրոնական «բարեփոխումներ»: Կրոնական համայնքների առաջնորդներն օժտված էին հոգևոր և աշխարհիկ իշխանությամբ, լիազորված էին իրականացնել համայնքների ներքին կառավարումը, միանձնյա ղեկավարել այն, կարգավորել ներքին հարցերն ու խնդիրները: Նրանք Բարձր դռան առջև համայնքների միակ լիազոր ներկայացուցիչներն էին: Մեհմեդ 2-րդը որոշեց Պոլսում գործելու հնարավորություն տալ հունաց և հայոց եկեղեցական առաջնորդներին, ինչպես նաև հրեաների Գլխավոր ռաբբիին: 1461թ. նրա հրամանով ստեղծվեց Կոստանդնուպոլսի Հայոց պատրիարքությունը: Առաջին պատրիարք դարձավ Հովակիմ եպիսկոպոսը: Այս քայլն, անշուշտ, նաև նպատակ էր հետապնդում հնարավորինս հեշտությամբ հնազանդության մեջ պահել հայերին և թուլացնել Էջմիածնի հայոց կաթողիկոսության քաղաքական դերակատարությունը Հայության կյանքում:

Համայնքի շրջանակներում պատրիարքի իշխանությունը բավական մեծ էր: Նա պետության անունից կազմակերպում էր հարկերի հավաքումը, կատարում դատական գործառույթներ, անգամ իր տրամադրության տակ ուներ ոստիկանական ջոկատներ և բանտ: Ժամանակի ընթացքում Պոլսո և Երուսաղեմի Հայոց պատրիարքությունների և Կիլիկիո կաթողիկոսության միջև՝ Մայր աթոռի Ս.Էջմիածնի հոգևոր գերակայությամբ ձևավորվեցին յուրահատուկ փոխհարաբերություններ, որոնք հայապահպան մեծ նշանակություն ունեին: Չնայած Պոլսի պատրիարքության՝ օրենքով երաշխավորված գերիշխանությանը, այնուամենայնիվ, երկու կաթողիկոսություններն էլ պահպանեցին իրենց անկախությունը, իսկ Էջմիածնի Մայր աթոռը՝ նաև հոգևոր գերակայությունը: Այս

ամենի արդյունքում ձևավորվեց որոշակի համագործակցային դաշտ, հատկապես երբ պետք էր փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող ինչ-որ հարցեր լուծել: Մասնավորապես, Պոլսո պատրիարքությանը դիմում էին, երբ պետք էր լինում խնդիրներ կարգավորել Բարձր դռան կամ կենտրոնական իշխանության այլ մարմինների հետ: Գրեթե նույնատիպ բովանդակություն ունեին նաև Պոլսո և Երուսաղեմի Հայոց պատրիարքությունների փոխհարաբերությունները: Պոլսո պատրիարքությունը որոշակի ֆինանսական կախման մեջ էր գտնվում Երուսաղեմից, որի նյութական մուտքերը, ի հաշիվ ուխտագնացության, բավականաչափ մեծ էին, միաժամանակ Երուսաղեմի հոգևոր հայրերը հիմնականում համալրվում էին Պոլսո հոգևորականության շրջանակներից:

Օսմանյան կայսրության չորս դարերի ընթացքում ներեկեղեցական փոխհարաբերություններում լուրջ տարաձայնություններ և նոր փեղեկումներ չառաջացան: Ընդհակառակը, երկու կաթողիկոսություններից և երկու պատրիարքություններից յուրաքանչյուրն իր վրա վերցրեց Հայության քաղաքական, գիտական, կրթական, հոգևոր, մշակութային, ազգապահպանական, մինչև անգամ ազատագրական գաղափարների արմատավորման պարտականությունները՝ անհրաժեշտության դեպքում ձգտելով օժանդակել միմյանց:

Համայնքների իրավունքներին վերաբերող վեճերը, որոնք տեղի էին ունենում Սուրբ Հարության տաճարի, Սուրբ Աստվածածնի տաճարի և Սուրբ Ծննդյան այրի շուրջ, տասնյակ անգամներ կրկնվել են հույների, հայերի և կաթոլիկների միջև: 16-րդ դարի երկրորդ կեսից մինչև 19-րդ դարը քրիստոնեական համայնքների գերակայությունը բազմակի փոփոխությունների է ենթարկվել: Ընդհանուր առմամբ, հունական պատրիարքությունը կարողացել է ի վնաս կաթոլիկների ընդարձակել կալվածքները, իսկ Երուսաղեմի Հայոց պատրիարքությունը, որոշակի կորուստներ կրելուց հետո, այնուամենայնիվ, հիմնականում կարողացել է ոչ միայն պահպանել, այլև բազմապատկել իր իրավունքներն ու սեփականությունը:

Քրիստոնեական եկեղեցիների միջև պայքարը հանուն սեփականության վերաձևման և իրավունքների գերակայության դարձել է քրիստոնեական Երուսաղեմի պատմության մշտական ուղեկիցը: Որպես կա-

նոն, դրանից առավելապես տուժել են հայերը: Մեր միաբանությունն անընդհատ ստիպված է եղել մեկը մյուսի հետևից չեզոքացնել մեր իրավունքների և սեփականության դեմ ուղղված դավերն ու խարդավանքները: Բազմաթիվ ջանքեր գործադրելուց և նյութական մեծ ռեսուրսներ կենտրոնացնելուց հետո մեր միաբանությանը հազիվ էր հաջողվում հաղթահարել հերթական ոտնձգությունը, երբ վրա էր հասնում նորը: Երուսաղեմի հայ հոգևորականներից շատերը պնդում են, որ հայ ժողովրդի մեջ մեծ տարածում գտած «աչքդ թեքես, բանիդ տերը չես» հայտնի ասացվածքը ծագել է Երուսաղեմում: Եղել են նաև այնպիսի դեպքեր, երբ իրավիճակը հարթելու և մեր իրավունքները վերականգնելու համար Կոստանդնուպոլիս մեկնած Երուսաղեմի Հայոց պատրիարքը, վերադառնալուց հետո, հենց հաջորդ օրն իսկ ստիպված է եղել կրկին բռնել Պոլսո ճամփան՝ նոր սկսված զրպարտությանը կամ խարդավանքներին դիմակայելու նպատակով:

Թեև նման իրադրությունը երբեմն հրահրվում և խրախուսվում էր նաև Օսմանյան արքունիքի կողմից, քանի որ սա կաշառք կորզելու, թանկարժեք ընծաներ ստանալու և պարզապես դրամաշորթության լավագույն եղանակ էր, բայց, այնուամենայնիվ, կայսրության միապետներն այնքան էլ խանդավառված չէին այս երևույթով: Բարձր դուռն անընդհատ ստիպված էր լուծել միջքրիստոնեական մրցակցության արդյունքում ծագած վեճերն ու կոնֆլիկտները: Քանիցս սուլթաններն իրենք են ընկել մի կողմի լարած որոգայթի մեջ, և ճշմարտությունն ու իրականությունը պարզվելուց հետո, ստիպված են եղել փոխել իրենց հրամանները:

Երուսաղեմում քրիստոնեական տարբեր ուղղությունների միջև փոխհարաբերությունների կարգավորման, սեփականության և իրավունքների հստակեցման մասին սուլթաններն ընդունել են բազմաթիվ հրամաններ և որոշումներ՝ *ֆիրմաններ,* որոնցից շատերն իրենց իրավական ուժը պահպանում են նաև մեր օրերում:

Քրիստոնեական հիմնական հաստատությունների միջև վեճերն ու կռիվներն անպակաս կլինեին, եթե 1852թ. սուլթան Աբդուլ Մեջիդ 1-ինը չգնար կտրուկ ու արմատական լուծման՝ հաստատելով «Սուրբ վայրերի ստատուս քվո» փաստաթուղթը, որը սահմանում, կարգավորում և

առանց փոփոխության պահպանում է սեփականության իրավունքն ու կանոնակարգված փոխհարաբերությունները քրիստոնեական երեք հիմնական ուղղությունների՝ հայ առաքելական, կաթոլիկ և հունաց ուղղափառ եկեղեցիների միջև: Ստատուս քվոյում ամրագրված կարգավիճակը պատմական այն զարգացումների արդյունքն է, որի սկզբնավորումը տեղի է ունեցել քրիստոնեության առաջին դարերում, երբ հաստատվել է իրավունքների ու առանձնաշնորհների բարդ ցանցը: Ստատուս քվոյի ընդունումը միջեկեղեցական փոխհարաբերությունների կարգավորման կարևոր քայլ հանդիսացավ:

Հետագայում՝ 1888թ. հուլիսի 25-ին, Աբդուլ Համիդի կողմից ընդունվեց ևս մեկ ֆիրման (ընդ որում՝ վերջինը Օսմանյան կայսրության պատմության ընթացքում), որով Երուսաղեմի Հայոց պատրիարքությանը և անձամբ պատրիարքին շնորհվեցին լրացուցիչ լիազորություններ և իրավասություններ: Այդ ֆիրմանն առ այսօր նույնպես մնում է անփոփոխ:

Օսմանյան կայսրության փլուզումից հետո, երբ Պաղեստինը հայտնվեց բրիտանական մանդատի տիրապետության տակ, Մեծ Բրիտանիայի կառավարությունը, լավ հասկանալով սրբավայրերի, ուխտատեղիների, վանքերի, եկեղեցիների և այլ եկեղեցական շինությունների ու կալվածքների՝ դարերի ընթացքում ձևավորված և այդ պահին առկա իրավիճակի պահպանման անհրաժեշտությունը, առանց փոփոխության հաստատեց գործող *ստատուս քվոն*[1] և գոյություն ունեցող ֆիրմանները, որոնք առնչվում էին քրիստոնեական սրբատեղիների պատկանելության, պահպանության և քրիստոնեական եկեղեցիների միջև փոխհարաբերությունների կարգավորման հարցերին[2]: Հետագայում *ստատուս քվոն* և նույն այդ ֆիրմանները, առանց որևէ փոփոխության, հաստատվել են նաև Հորդանանի կողմից՝ 1948թ., իսկ 1967թ. Վեցօրյա պատերազմից և Արևելյան Երուսա-

---

[1] *Д.Петросян,* նշվ. աշխ.

[2] “Nationalising the Sacred: Shrines and Shifting Identities in the Israeli-Occupied Territories”. (in Man: Journal of the Royal Anthropological Institute). http://www.kent.ac.uk/sac/department/staff/bowman/Nationalising%20the%20Sacred.pdf. XXVIII:3. Sept. 1993. pp. 431-460.

ղեմի ու Հորդանան գետի արևմտյան ափի անեքսիայից հետո՝ նաև Իսրայելի կառավարության կողմից: Կնեսետն ընդունեց Սուրբ վայրերի պահպանության մասին թիվ 5767-1967 օրենքը[1], որը հաստատում էր քրիստոնեական բոլոր կողմերի միջև գործող *սրպատուս քվոն:*

Դեռևս 1948թ. Իսրայելի անկախության հռչակագրում խղճի, ինչպես նաև կրոնական ազատությունները հռչակվեցին պետության կողմից պաշտպանության և հոգածության ենթակա արժեքներ: Ներկայումս կրոնական ոլորտում պետական քաղաքականությունն իրականացնում է Իսրայելի կրոնի հարցերով նախարարությունը, որի քրիստոնեական համայնքների բաժինը հանդես է գալիս պետության և քրիստոնեական համայնքների միջև կապող օղակի դերում: Հաշվի առնելով պատմականորեն ձևավորված առանձնահատկությունները և կրոնական ու եկեղեցական կառույցների դերը տվյալ կրոնական կամ ազգային համայնքի կյանքում՝ մի շարք եկեղեցիներ Իսրայելի կառավարության կողմից ձեռք են բերել «պետության կողմից ճանաչված» եկեղեցիների կարգավիճակ: Սա ինչ-որ տեղ հիշեցնում է Օսմանյան կայսրությունից մնացած միլլեթների համակարգը: «Ճանաչված» եկեղեցիներին վերապահված են որոշակի իրավունքներ ներհամայնքային խնդիրների և համայնքի անդամների կեցությանն առնչվող հարցերում: Այդպիսի եկեղեցիների թիվն Իսրայելում հասնում է մոտ մեկ տասնյակի, որոնց շարքում, բացի Հայ Առաքելական եկեղեցուց (ի դեմս Սրբոց Հակոբյանց միաբանության), ընդգրկված է նաև Երուսաղեմի հայոց կաթոլիկ եկեղեցին:

[1] The Status of Jerusalem. *Prepared for, and under the guidance of the Committee on the Exercise of the Inalienable Rights of the Palestinian People* UNITED NATIONS New York, 1997, http://unispal.un.org/UNISPAL.NSF/0/533B4714451B48BF0525651B00488D02

Երուսաղեմի հայ համայնքի և Սրբոց Հակոբյանց միաբանության առջև կանգնած արդի հիմնախնդիրները

Իրավիճակը ներկա պահին

21-րդ դարում աշխարհը դարձել է գլոբալացվող ու արագ փոփոխվող: Անշուշտ, փոխվել է նաև դարեր շարունակ Երուսաղեմում գոյություն ունեցող իրականությունը: Ավելի քան մեկդարյա արաբա-իսրայելյան հակամարտությունը և Իսրայել պետության 60 տարվա գոյությունը շատ բան են փոխել տարածաշրջանում՝ այն դարձնելով մոլորակի ամենաթեժ կետերից մեկը:

Եվ այս ողջ փոփոխված իրականության շրջապտույտում Երուսաղեմի հայ համայնքի և Սրբոց Հակոբյանց միաբանության առջև կանգնած հիմնախնդիրները մեծ հաշվով առանձնակի փոփոխությունների չեն ենթարկվել: Ամենալուրջ խնդիրը նախկինի պես կարելի է համարել մրցակցությունը քրիստոնեական այլ եկեղեցիների հետ: Քրիստոնեական այլ եկեղեցիների հետ փոխհարաբերություններում սեփական շահերը, դարավոր իրավունքներն ու արժանապատվությունը պաշտպանելու համար մեր եկեղեցականները, այսօր առավել, քան երբևէ, ստիպված են լինում պաշտպանվելիս՝ դիմել ծայրահեղ միջոցների:

Վերջին տարիներին անհանդուրժողական վարքագիծ է դրսևորվում Երուսաղեմի հույն ուղղափառ եկեղեցու սպասավորների կողմից: Ինչ խոսք, մեր և վերոհիշյալ եկեղեցու միջև դարավոր մրցակցությունն ու հակադրությունը վաղուց է հայտնի, սակայն վերջին տարիներին հույն ուղղափառ եկեղեցու կողմից փորձ է արվում վիճարկել *սրբատուն քվոյի* դրույթներն ու դարերի ընթացքում արմատավորված արարողակարգերի կանոնները, որպիսիք նախկինում երբևէ քննարկման կամ վիճաբանության առարկա չեն հանդիսացել:

2002թ. Զատկի տոնի Ավագ շաբաթ օրը՝ Լուսավորյա տոնի արարողության ժամանակ, կոնֆլիկտ հրահրվեց հունաց նորընտիր պատրիարք Իրենիոս 1-ինի կողմից: Քրիստոսի գերեզմանի մոտ սուրբ կրակի ստացման և գերեզմանից դուրսբերման արարողությունը կատարվում է հունաց պատրիարքի և Տիրոջ գերեզմանի հայոց եկեղեցական միաբանության վանահայր, ծայրագույն վարդապետ հայր Սամվելի կողմից: Համաձայն նախատեսված կարգի՝ առաջինը տիրոջ գերեզմանի մատուռ մուտք է գործում հունաց եկեղեցու, այնուհետև՝ հայոց եկեղեցու ներկայացուցիչը: Քրիստոսի գերեզմանի մատուռ մուտք գործելուց հետո բացվում է Հրեշտակի վեմ կոչվող նախասրահը: Ուրիշ ոչ ոք, բացի այդ երկուսից, իրավունք չունի ներսում գտնվելու: Հրեշտակի նախասրահից դեպի Տիրոջ գերեզման բացվող նեղ դռնով կարող է անցնել միայն մեկ մարդ: Նախատեսված կարգով այդ դռնից էլ առաջինը ներս է մտնում հույնը, հետո՝ հայը: Փրկչի գերեզմանը բավական նեղ է և այդտեղից առաջինը կարող է դուրս գալ նա, ով վերջինն է մտել ներս: Ներս մտնելուց հետո գերեզմանի մարմարե սալաքարի առջև նրանք պետք է աղոթեն, վառեն իրենց մոմերը և դուրս գան: Բնականաբար, առաջինն այդ նեղ տարածքից պետք է դուրս գա հայ եկեղեցականը, որը պետք է սպասի, մինչև հունաց պատրիարքը ևս դուրս գա, որից հետո նրանք երկուսով Հրեշտակի նախասրահի տարբեր կողմերում գտնվող՝ յուրաքանչյուրն իր եկեղեցուն պատկանող փոքրիկ անցք-պատուհաններից հայ և հույն եկեղեցականներին և հավատացյալներին են փոխանցում սրբազան կրակը: Դրանից հետո Քրիստոսի գերեզմանի մատուռից դուրս են գալիս նախ հույնը, հետո՝ հայը:

Այս անգամ պատրիարք Իրենիոսը արդեն ներսում՝ Քրիստոսի գերեզմանի մոտ, հանկարծ որոշում է, որ գերեզմանի մոտից դեպի Հրեշտակի նախասրահ առաջինն ինքը պետք է դուրս գա: Հայր Սամվելը չի ընկրկում, սակայն Հրեշտակի նախասրահ դուրս գալուց հետո Իրենիոսը անսպասելի, կտրուկ շարժումով ստորաբար հանգցնում է հայր Սամվելի այրվող մոմը և շտապում իր պատու-

հանից կրակը հույն հոգևորականներին փոխանցելու: Արդեն 60-ական անց հայր Սամվելը հենց այդտեղ՝ Հրեշտակի նախասրահում, Տիրոջ շիրիմի մոտ դիմում է ծայրահեղ, բայց միգուցե արդարացված քայլի՝ գետին է տապալում հունաց պատրիարքին: Վերջինիս ճիչերի վրա ներս են վազում ոստիկանները:

Դրանից հետո զանգվածային լրատվամիջոցները սկսեցին լուրեր տարածել, որ հայերը փորձ են արել հույներից խլել սրբազան կրակի դուրսբերման իրավունքը: Գրեթե բոլոր ուղղափառ երկրների լրատվական մարմինները և ուղղափառ կողմնորոշում ունեցող տեղեկատվական աղբյուրները միջադեպը ներկայացրին որպես հայերի կողմից իրականացվող ոտնձգություն հունական եկեղեցու իրավունքների դեմ: Հրապարակվեցին բազմաթիվ ապատեղեկացնող հոդվածներ, մեկնաբանություններ, վերլուծություններ՝ թե միայն հույներն իրավունք ունեն մուտք գործել Տիրոջ գերեզման:

Հարցն աստիճանաբար սրվում է այն աստիճան, որ վերջինիս կարգավորմանը միջամտում են Իսրայելի իշխանությունները, որոնք մինչև 2003թ. հանդես էին բերում առավելապես չեզոք կեցվածք: Սակայն 2003թ. Ավագ չարչարանաց շաբաթից առաջ իրավիճակը փոխվում է: Իրենիոսը, որը մինչ այդ իսրայելյան իշխանությունների կողմից չէր ճանաչվում որպես Երուսաղեմի հունաց ուղղափառ եկեղեցու նորընտիր պատրիարք, հանկարծ ձեռք է բերում այդ ճանաչումը: Դրանից հետո ամեն ինչ փոխվում է: Սկսում են ճնշումներ գործադրվել հայկական կողմի վրա, որպեսզի նրանք հրաժարվեն Քրիստոսի գերեզման մուտք գործելուց, որովհետև այդպիսին է Իրենիոսի կամքը: Իսրայելի ոստիկանությունը նույնիսկ սպառնաց հայերին, որ եթե չկատարեն Իրենիոսի կամքը, ապա նրանց ընդհանրապես թույլ չի տրվի մտնել Սուրբ Հարության տաճար: Սա նշանակում էր, որ Իսրայելի պետական և իշխանական մարմինները կոպտորեն խախտում են իրենց իսկ կողմից օրենքի ուժ ստացած *սրտատուս քվոյի* նորմերը, իսկ ոստիկանությունը՝ գերազանցում իր լիազորությունները: Այս ճնշումներն ու սպառնալիքները շարունակվեցին մինչև 2005թ.: Ահա այսպիսի

պայմաններում հայկական կողմի անընդհատ պնդումների արդյունքում հարցը տեղափոխվեց դատական ատյաններ: Ե՛վ հայոց, և՛ հունաց պատրիարքությունները ներկայացրին իրենց փաստարկներն ու հիմնավորումները: Հայկական կողմի փաստարկները բավական զորեղ էին, և թվում էր, թե դատարանը պետք է արդարացի որոշում կայացներ հօգուտ հայերի, սակայն հարցը քննող Իսրայելի Գերագույն դատարանը երկար ընդմիջումից հետո հայտարարեց, որ չի կարող միջամտել կրոնական վեճերին և որոշեց այդ իրավունքը վերապահել Իսրայելի ոստիկանությանը: Սա անարդարացի որոշում էր, որը հակասում էր ոչ միայն ստատուս քվոյի կանոններին, այլև միջազգային իրավունքի նորմերին:

Նույն 2005թ. հանկարծակի բացահայտվեց Իրենիոսի և Իսրայելի իշխանությունների միջև կայացած գործարքը: Պարզվեց, որ Իրենիոսը հրեաներին 198 տարով, չնչին գներով վարձակալության է տվել Հին քաղաքում հունական ուղղափառ եկեղեցուն պատկանող շենքեր: Ամենայն հավանականությամբ, դրա դիմաց էր նա ձեռք բերել իր ճանաչումը Իսրայելի իշխանությունների կողմից: Հավանաբար, դրանով էր պայմանավորված նաև իսրայելյան ոստիկանության առավել հունամետ կեցվածքը հայերի հետ ընդհարման ժամանակ: Այս բացահայտումից հետո Իրենիոսը զրկվեց պատրիարքական աթոռից և կարգալույծ արվեց մինչև շարքային հոգևորականի աստիճան: Նոր պատրիարքի՝ Թեոֆիլոսի ընտրությամբ, թվում էր, հարցը կկարգավորվի, բայց, ցավոք, այդպես չեղավ:

2007թ. նոյեմբերի 11-ին Գյուտ խաչի տոնի ժամանակ նոր կոնֆլիկտ են հրահրում հույները: Արդյունքում՝ մեր եկեղեցականները դիմում են ոստիկանության աջակցությանը, որը, սակայն, փակում է գերեզմանի մուտքը և թույլ չի տալիս հայերին նույնիսկ ներս մտնել, ինչը պահանջվում էր նախատեսված արարողակարգով: Միջոցառման ավարտից հետո Հայոց պատրիարքությունը բողոքով դիմում է ոստիկանությանը՝ ներկայացնելով համապատասխան ապացույցներ: Ոստիկանությանն են դիմում նաև հույները, առանց ապացույցների, բայց պահանջելով, որ հակառակ *ստատուս քվոյի*

կանոնների՝ երաշխավորվի իրենց հոգևորականի ներկայությունը Փրկչի գերեզմանի ներսում: 2008թ. ավագ ուրբաթ օրը վերջապես հարցը կարգավորվեց հույների հետ: Արարողությունը կատարվեց *սրբոց քվոյի* բոլոր կանոններին համապատասխան:

2008թ. նոյեմբերի 9-ին՝ Գյուտ խաչի հերթական տոնի ժամանակ, տեղի ունեցավ ամենամեծ բախումը հայերի և հույների միջև, ինչը գրավեց միջազգային լրատվամիջոցների և հասարակության ուշադրությունը: Այդ օրվա բախմանն ակտիվորեն ներքաշվեց իսրայելական ոստիկանությունը: Ոստիկաններն ու հատուկ ջոկատայինները նպատակաուղղված կերպով միջամտեցին բախմանը: Նրանք հարձակվեցին Քրիստոսի գերեզմանի մուտքի մոտ կանգնած և զուտ եկեղեցական ծիսակատարությանը մասնակցող Սրբոց Հակոբյանց միաբանության բարձրաստիճան հոգևորականների վրա և կոպտորեն գետնին տապալելով ու քարշ տալով՝ փորձեցին հեռացնել նրանց գերեզմանի մուտքից: Հարության տաճարի ողջ սրահով մեկ սկսվեց նախադեպը չունեցող բախում հայ եկեղեցականների, աշխարհիկ հայերի և Իսրայելի հատուկ նշանակության ջոկատայինների ու ոստիկանության միջև, ինչի արդյունքում հայկական ծիսական արարողությունը Տիրոջ գերեզմանի մոտ հերթական անգամ տապալվեց: Ձերբակալվեց մեկ հայ հոգևորական, որին հետագայում արգելվեց հինգ օր դուրս գալ Սրբոց Հակոբյանց միաբանության տարածքից:

Միջադեպը լայն արձագանք առաջացրեց ողջ աշխարհում, այդ թվում նաև Հայաստանի Հանրապետությունում: Հայկական մամուլը ողողվեց միջադեպին առնչվող բազմաթիվ հոդվածներով, հրապարակումներով, մեկնաբանություններով, հարցազրույցներով: Հանգամանքների բերումով միջադեպին ներկա գտնված մի շարք քաղաքական ու եկեղեցական գործիչներ մամուլի ասուլիսներ հրավիրեցին: Այս տհաճ միջադեպը, համենայնդեպս, առիթ հանդիսացավ, որպեսզի հայ հանրությունն ավելի հետաքրքրվի, իսկ Երևանում՝ ավելի լուրջ ուշադրություն բևեռի հայկական Երուսաղեմի հիմնախնդիրներին:

Մեր միաբանության և հույն ուղղափառ եկեղեցու միջև վիճելի հարցեր գոյություն ունեն նաև Բեթղեհեմում՝ Սուրբ Ծննդյան տաճարում, որոնցից շատերը ևս հանգեցրել են լուրջ բախումների:

2009թ. ժամանակահատվածում հույների հետ բախումներ չեն արձանագրվել: Երուսաղեմի հունական ուղղափառ եկեղեցու ծավալապաշտական նկրտումների և Իսրայելի ոստիկանության կողմնակալ կեցվածքի արդյունքում ոտնահարվում են Սրբոց Հակոբյանց միաբանության և Երուսաղեմի Հայոց պատրիարքության իրավունքներն ու օրինական շահերը Սուրբ քաղաքում:

Հատկանշական է նաև, որ վերջին 10-12 տարիների ընթացքում որոշակի ագրեսիվ վարքագիծ է դրսևորվում նաև արևելյան փոքր եկեղեցիների կողմից, չնայած այն հանգամանքին, որ վերջիններս գտնվում են մեր միաբանության և Հայոց պատրիարքի ոչ միայն ենթակայության, այլև պաշտպանության ու հովանավորության ներքո: Այսպես, 1997-98թթ. լուրջ բախումներ եղան ասորական եկեղեցու և նրանց հավատացյալ հոտի հետ: Հայ եկեղեցին, որպես մեր հավատքի հետևորդների, իրենց ծիսակատարությունների համար վերջիններիս տրամադրում է իր մատուռները, տարածքները, թույլ է տալիս զուգահեռաբար օգտվել հայոց եկեղեցու այլ հնարավորություններից և այլն: Բայց ասորիները հանկարծ որոշեցին, որ դա քիչ է, և իրենք իրենց համար կարող են ավելի մեծ իրավունքներ նվաճել: Հանդիպելով հայ եկեղեցականների և աշխարհիկ հայ համայնքի վճռական քայլերին՝ ասորիները հրաժարվեցին իրենց մտադրությունից:

1. Հիմնախնդիրներ

Թերևս, Երուսաղեմի Հայոց պատրիարքության առջև կանգնած ամենալուրջ խնդիրներից մեկը կարելի է համարել **չդադարող պայքարն ու մրցակցությունը քրիստոնեական այլ եկեղեցիների հետ:** Խնդիրներ և հիմնահարցեր կան և՛ հույն, և՛ կաթոլիկ եկեղեցիների

հետ: Երբեմն խնդիրներ առաջանում են ղպտի, ասորի և մյուս եկեղեցիների հետ նույնպես:

Վերջին տարիներին այդ շարքում հատկապես առանձնանում են չկարգավորվող և միջադեպից միջադեպ խիստ սրվող փոխհարաբերությունները Երուսաղեմի հունաց ուղղափառ եկեղեցու հետ:

Հունաց եկեղեցին իրեն համարում է բյուզանդական եկեղեցու ժառանգորդը և հավակնում հանդես գալ այլ ուղղափառ եկեղեցիների և ընդհանրապես ուղղափառ աշխարհի հոգևոր առաջատարի դերում: Երուսաղեմ մտնող ցանկացած ուղղափառ՝ անխտիր, անկախ ազգային պատկանելությունից, հայացքն ուղղում է դեպի հունական եկեղեցի, մասնակցում նրա պատարագներին ու ծիսական արարողություններին, այցելում նրան պատկանող սրբատեղիները, կատարում նվիրատվություններ: Ուղղափառ ուխտավորի՝ Երուսաղեմում ծախսած գումարների 60-70%-ն ուղղվում է հունաց եկեղեցուն պատկանող տարբեր ոլորտների սպասարկող և ծառայություններ մատուցող կառույցներին ու կազմակերպություններին: Երուսաղեմի հունական եկեղեցին խոշոր գործարար է, ունի հյուրանոցային համալիրներ, որտեղ կարող է միաժամանակ տեղավորվել մի քանի հարյուր մարդ, ինչպես նաև սպասարկման ոլորտի այլ ենթակառուցվածքներ: Նրանց կալվածքները Սուրբ երկրում ամենաշատն են, ինչը, բնականաբար, նրանց ավելի մեծ եկամուտ է ապահովում: Վերջին 10-12 տարիներին հունական եկեղեցում ավելի ուժեղացրեց հատկապես ռուս զբոսաշրջիկների մեծ հոսքը Երուսաղեմ: Ամեն օր մի քանի հազար ռուս զբոսաշրջիկ է այցելում Երուսաղեմ: Ուղղափառ համերաշխությունն, ինչ խոսք, միայն օգուտներ է բերում հունաց եկեղեցուն: Երուսաղեմի հունական եկեղեցին վստահ է, որ ծայրահեղ իրավիճակներում կամ ցանկացած լուրջ կոնֆլիկտի ժամանակ, եթե անգամ դրանք ծագեն Իսրայելի իշխանությունների հետ, կարժանանա ողջ ուղղափառ աշխարհի, այդ թվում նաև ուղղափառ պետությունների վճռական աջակցությունը:

Գրեթե նույնը կարելի է ասել նաև կաթոլիկների մասին, որոնց թիկունքում են Վատիկանն ու ողջ կաթոլիկ աշխարհը:

Դրան հակառակ Սրբոց Հակոբյանց միաբանությունն այսօր **բավական թուլացել է:** Նախ, թուլացել և նոսրացել է Երուսաղեմի հայ համայնքը: 1947թ. 15000-ի փոխարեն ներկայումս համայնքի անդամների թիվը հասնում է 2000-ի: Հասկանալի է, որ միաբանության գլխավոր հենարանը՝ հայ համայնքը, չունի նախկին ուժն ու հնարավորությունները: Այսօր համայնքը և միաբանությունը լուրջ խնդիրներ ունեն նաև ուխտագնացության հետ կապված, որը դարեր շարունակ եղել է հիմնական սնուցողն ու զորեղացնողը: Մեծ եղեռնից հետո Հայաստանից ուխտագնացությունը դեպի Երուսաղեմ խիստ նվազեց, իսկ խորհրդային շրջանում այն լիովին կանգ առավ: Սփյուռքից ժամանող ուխտագնացների թիվը նախկինի համեմատ խիստ նվազել է: Հայաստանի անկախացումից հետո սփյուռքահայերի հոսքը, կազմակերպվող բարեգործական ձեռնարկներն ու նվիրատվությունները տրամաբանորեն ու հասկանալի պատճառներով ուղղվեցին դեպի Հայաստանի Հանրապետություն: Նախկինում Երուսաղեմում հաճախակի իրականացվող բարեգործությունները ներկայումս գրեթե դադարել են: Նվազել է նաև Երուսաղեմ այցելողների թիվը: Սփյուռքահայերի այն շերտը, որը նախկինում գոնե տարին մեկ անգամ այցելում կամ կարող էր այցելել Երուսաղեմ, հիմա գերադասում է գնալ Հայաստան:

Այս ամենի հետևանքով նոսրացել է նաև մեր եկեղեցական արարողություններին և պատարագներին մասնակցողների թիվը: Հունաց կամ կաթոլիկների ծիսակատարություններին ներկաների ու մասնակիցների թիվը հասնում է մի քանի հարյուրի, մինչդեռ մեր արարողությունների ժամանակ եղել են դեպքեր, երբ մասնակցել են միայն եկեղեցականները: Արդյունքում՝ քրիստոնեական այլ եկեղեցիներն իրենց ավելի հզոր ու ապահովված են զգում, իսկ հայերն՝ ավելի թույլ ու ճնշված: Մինչդեռ այս ամենը տեսնում են ոչ միայն մրցակից քրիստոնեական եկեղեցիները, այլ նաև հրեական իշխանությունները:

Վերջին մի քանի տարիների ընթացքում Հայաստանից դեպի Երուսաղեմ ուխտագնացությունը զարգացնելու միտում է նկատ-

վում: Յուրաքանչյուր տարի Հայաստանից 200-250 ուխտավորներ են այցելում Իսրայել՝ առավելապես կարևոր եկեղեցական տոների ժամանակ: Մոտավորապես այդքան էլ ամեն տարի այցելում են ԱՄՆ-ից և Պոլսից: Այսինքն՝ Երուսաղեմ այցելող հայ ուխտավորների թիվը չի գերազանցում 500-ը: Ինչ խոսք, սա բավական փոքր թիվ է: Մինչև 1947թ. միայն Զատկի տոնին մասնակցողների թիվն անցնում էր 3000-ից: Թեև այսօր ուխտավորների թվաքանակի ավելացումն այնքան էլ չի նպաստում Երուսաղեմի հայոց եկեղեցու մուտքերի ավելացմանը, բայց դա, անշուշտ, հայ համայնքի և Երուսաղեմի Հայոց պատրիարքության համար կարևոր բարոյական և հոգեբանական նշանակություն ունի:

Գոյություն ունի ևս մեկ խնդիր: Հայ ուխտավորի Երուսաղեմում ծախսած գումարների մեծ մասը (հյուրանոց, սնունդ, տրանսպորտային ծախսեր և այլն) համապատասխան ենթակառուցվածքների բացակայության պատճառով ուղղվում է ոչ թե մեր պատրիարքության կամ գոնե հայերի, այլ օտարների գրպանները և բոլորովին չի նպաստում այսպես կոչված *հայկական գործոնի* ուժեղացմանը:

Երուսաղեմի Հայոց պատրիարքության և հայ համայնքի հաջորդ կարևորագույն հիմնախնդիրը **իսրայելյան իշխանությունների հետ կապված փոխհարաբերությունների հարցն է:** Այդ փոխհարաբերությունների մասին լիարժեք պատկերացում կազմելու համար հարկավոր է հասկանալ, թե ինչ նպատակներ են իրենց առջև դրել և ինչ խնդիրներ են հետամտում Իսրայելի պետական-քաղաքական համակարգը և ողջ հրեությունն ընդհանրապես: Այս մասին դեռևս 1967թ. հունիսի 7-ին, վեցօրյա պատերազմի ժամանակ հստակ արտահայտվել է Իսրայելի պաշտպանության նախարար, գեներալ Մոշե Դայանը՝ Արևելյան Երուսաղեմը գրավելուց անմիջապես հետո. «Իսրայելի պաշտպանական ուժերը ազատագրեցին Երուսաղեմը: Մենք կրկին միավորեցինք Իսրայելի բաժանված մայրաքաղաքը: 2000 տարի անց մենք վերադարձել ենք այս ամենամեծ սրբության մոտ, որպեսզի այլևս երբեք նրանից չբաժանվենք»:

Ինչ խոսք, Իսրայելի իշխանությունները նպատակ ունեն ժամանակի ընթացքում, աստիճանաբար, քայլ առ քայլ մեծացնել իրենց ազդեցությունն ու սեփականությունը հին քաղաքում, Հրեության մի զգալի հատվածի պատկերացումներում իրենց գործողությունները միանգամայն արդարացված են: Այդ նպատակի համար նրանք օգտագործում են ամեն մի պատեհ առիթ կամ հնարավորություն: Իսկ այդպիսիք բավական շատ են: Հենց միայն հակասությունները քրիստոնեական եկեղեցիների միջև արդեն բավական են այդպիսի առիթներ ստեղծելու համար:

Տրամաբանորեն, Հին քաղաքում հրեական թաղամասն ու լացի պատը անկլավի վերածող Հայկական թաղամասն ու Երուսաղեմի Հայությունը դառնում են իսրայելական քաղաքականության առարկա: Իսկ պայմանները դրա համար ներկա պահին նպաստավոր են. թուլացած ու քանակապես նվազած համայնք, անպաշտպան վիճակում գտնվող եկեղեցական միաբանություն, միակ բնական պաշտպանի՝ Հայաստանի Հանրապետության հետ գոյություն ունեցող ոչ լիարժեք դիվանագիտական հարաբերություններ, մասնավորապես՝ դեսպանության բացակայություն, հաճախ նաև շահերի տարամիտում աշխարհաքաղաքական հարթության մեջ:

Այս պայմաններում բավականին բարդանում է թույլ օղակի դերում հայտնված Հայոց պատրիարքության և հայ համայնքի վիճակը: Ինչպես արդեն նշվել է, հայ համայնքի անդամների թիվը 1948թ. այս կողմ կտրուկ նվազել է: Հիմնական պատճառը արաբա-իսրայելյան հակամարտությունն է, կեցության, աշխատանքի և այլ իրավունքների հետ կապված խնդիրներն ու ապագայի հետ կապված անորոշությունը: Այդ նույն ժամանակահատվածում հայերն ունեցել են նաև սեփականության կորուստներ: Ըստ որոշ աղբյուրների՝ Հայոց պատրիարքարանին և հայ համայնքի մասնավոր անձանց պատկանող 580 կալվածքներից ավելի քան 80-ն արդեն վաճառվել է հրեաներին: Վերջիններս, չնայած թանկ գներին, ձգտում են ոչ միայն գնել, այլ նաև երկարաժամկետ (100-200

տարով) վարձակալել նոր տարածքներ:

Միջեկեղեցական կոնֆլիկտներում իսրայելյան իշխանությունների հաճախ սուբյեկտիվ դիրքորոշումը պայմանավորված է մի շարք պատճառներով: Նախ, իսրայելյան իշխանությունները, լինելով արբիտրի դերում, հաճախ հանդես են գալիս որպես երրորդ կողմ և, բնականաբար, որդեգրում իրենց համար ավելի շահեկան կեցվածք:

Երկրորդ՝ կոնկրետ շահերի հետամտում և դրանց արդյունքում՝ մյուս կողմերի հետ ձեռք բերված «ներքին պայմանավորվածություններ», որոնցից մեկը բացահայտվեց հունաց պատրիարք Իրենիոս 1-ինի պարագայում:

Եվ երրորդ՝ ինքնին բարդ խնդիր է ցանկության դեպքում անգամ որոշումներ կայացնել ի վնաս առավել պաշտպանված ուղղափառների կամ կաթոլիկների, եթե նույնիսկ վերջիններս անարդարացի են գտնվել: Նման դեպքերում իսրայելյան իշխանություններն արդարացի վճիռներ կայացնելու փոխարեն ձգտում են պահպանել չեզոքություն, ինչից, վերջին հաշվով, էլի տուժում են հայերը:

Երուսաղեմի Հայոց պատրիարքության համար լուրջ հիմնախնդիր է միաբանության **կալվածական սեփականության պաշտպանության հարցը:** Միաբանությանը պատկանող կալվածքների մեծ մասը ձեռք է բերվել Օսմանյան կայսրության տարիներին, իսկ մի մասը՝ ավելի վաղ: Այդ բոլոր կալվածքների նկատմամբ սեփականության իրավունքն առ այսօր ամրագրված է ֆիրմաններով: Իսրայելի պետական համապատասխան ստորաբաժանումների կողմից այս փաստաթղթերն ընդունվում են որպես հիմք սեփականության իրավունքի ճանաչման համար: Պատրիարքությանը պատկանող կալվածական գույքի ռեալ, մանրակրկիտ հաշվառում ներկայումս կատարված չէ, և զգացվում է դրա կարիքը: Պարբերաբար, ծագած ինչ-ինչ հիմնահարցերից հետո հանկարծ պարզվում է, որ պատրիարքարանում բացակայում է այս կամ այն կալվածքի կամ շինության սեփականության մասին ֆիրմանը, կամ հիմնավո-

րող մյուս փաստաթղթերը: Երբեմն եղել են դեպքեր, երբ պահանջվող փաստաթղթերի օրինակները չեն եղել պատրիարքարանի արխիվներում: Բարեբախտաբար, դրանց զուգահեռ օրինակները կամ կրկնօրինակները գտնվել են Իսրայելի համապատասխան պետական և մունիցիպալ մարմինների գրասենյակներում: Այստեղ կա նաև մեկ ուրիշ վտանգ: Եթե հանկարծ պարզվի, որ պատրիարքարանում կորել է կամ «չի գտնվում» որևէ կալվածքի մասին սեփականության փաստաթուղթը, ապա դրանք կարող են տեսականորեն «անհետանալ» նաև համապատասխան պետական կամ մունիցիպալ մարմինների դարակներից:

Պատրիարքության կալվածական սեփականության հարցը Սրբոց Հակոբյանց միաբանության ամենացավոտ ու ամենախոցելի հարցերից է: Եղել են դեպքեր, երբ միաբանության առանձին, նույնիսկ բարձրաստիճան հոգևորականների կողմից հանդես է բերվել ոչ պատշաճ վերաբերմունք վանքապատկան սեփականության նկատմամբ, նույնիսկ չարաշահումներ են եղել, որոնք լուրջ վնաս են հասցրել *համազգային սեփականություն* հանդիսացող Երուսաղեմի Հայոց պատրիարքության սեփականությանը:

Համաձայն ներկա պահին գործող կարգի՝ միաբանությանը պատկանող կալվածական որևէ գույքի վաճառքն արգելվում է: Այն կարող է միայն հանձնվել վարձակալության: Կարճ ժամկետներով վարձակալության հանձնման դեպքում պատրիարքության կալվածական հանձնախումբը քննում և պատրիարքի համաձայնությունը ստանալուց հետո միայն վարձակալության է հանձնում: Մինչև 25 տարով վարձակալության հանձնվելու դեպքում հարցը որոշում է տնօրեն ժողովը, իսկ եթե վարձակալության ժամկետն անցնում է 25 տարուց, ապա այդ մասին որոշում կարող է կայացնել միայն միաբանության ընդհանուր ժողովը:

Բազմիցս, և այսօր նույնպես, հայոց վանքապատկան մի շարք կալվածքներ ենթարկվում են ոտնձգությունների և նույնիսկ բռնազավթման: Երբ ինչ-որ մեկը տեսնում է, որ տվյալ կալվածքը պահե-

լու, տնօրինելու կամ շահագործելու համար բավարար ուժ կամ հնարավորություններ չունես, անմիջապես սկսում է հավակնել տվյալ տարածքին: Այսօր մենք ունենք կալվածքներ, որոնք վիճարկվում են թե՛ Իսրայելի և թե՛ անգամ Պաղեստինի իշխանությունների կողմից: Ունենք նաև տարածքներ, որոնք լցվել են արաբ փախստականներով, որոնց անգամ ուժով անհնար է դուրս բերել այնտեղից:

Ներկա պահին վիճարկման առարկա դարձած հայոց մի քանի կալվածքներից հատկապես առանձնակի ուշադրության է արժանի Փիլիպոսի աղբյուր կոչվող տարածքի ճակատագրի հարցը: Սա մի քանի հեկտար տարածությամբ հողատարածք է և հատկապես արժեքավոր է նրանով, որ այդ սակավաջուր տարածքներում իր մեջ աղբյուր ունի, որը սրբատեղի է: Դա այն աղբյուրն է, որն, ըստ Նոր Կտակարանի Գործք Առաքելոցի, Աստծո կողմից ժայթքեց այն պահին, երբ Փիլիպոս առաքյալի կողմից եթովպացիներին մկրտելու համար ջրի կարիք զգացվեց: Այս տարածքը Իսրայելի իշխանությունները մտադիր են հանձնել եթովպական եկեղեցու տնօրինությանը՝ հաշվի չառնելով, որ դա մեկ ուրիշի սեփականությունն է:

Ընդհանրապես Սուրբ հողերում արդեն ավանդույթ է դարձել «ստուգողական հավակնությունները» այս կամ այն տարածքի կամ կալվածքի նկատմամբ: Եթե տեսնում են, որ դիմացինն իր իրավունքների պաշտպանության հարցում բավարար ուժ և հնարավորություններ (քաղաքական, իրավական, նյութական և այլն) ունի, հավակնությունները դադարում են: Իսկ եթե հանկարծ զգում են, որ դիմացինն անկարող է սեփական ուժերով պաշտպանել իր տարածքները կամ մի փոքր ընկրկում է, ապա «ստուգողական հավակնությունները» վերածվում են լուրջ հավակնությունների:

Փիլիպոսի աղբյուրի պարագայում մենք այս պահին գտնվում ենք «ստուգողական» փուլում:

Իսրայելական իշխանությունները ներկա պահին հասարակա-

կան նպատակներով օգտագործելու պատճառաբանությամբ զբաղեցրել են հայոց վանքապատկան Սիլվանի հող կոչվող կալվածքը: Նրա ճակատագիրը դեռևս մնում է անորոշ:

Իսրայելի բաժանարար պատը հայկական Պարոն-Տեր կալվածքը բաժանեց երկու մասի՝ կալվածքի մի մասը թողնելով Պաղեստինի տարածքում, որը բռնազավթվել է պաղեստինյան իշխանությունների կողմից:

Վերոհիշյալ փաստերը պարզորոշ վկայում են, որ հայոց Սրբոց Հակոբյանց միաբանության կալվածական սեփականությունը մշտական ոտնձգությունների առարկա է, որի պաշտպանության և պահպանության նպատակով հարկավոր է ձեռնարկել անհետաձգելի քայլեր, այդ թվում՝ դիվանագիտական նշանակության:

Հայ համայնքի համար լուրջ խնդիր է նաև **քաղաքացիության հետ կապված անորոշության հարցը:** Երուսաղեմում հայերի մեծ մասն այսօր Հորդանանի քաղաքացիներ են: 1967թ. Երուսաղեմի օկուպացումից հետո Իսրայելի իշխանություններն առաջարկեցին Արևելյան Երուսաղեմի բոլոր բնակիչներին ձեռք բերել Իսրայելի քաղաքացիություն: Արաբ բնակիչների մեծ մասը, ինչպես նաև հայերը, չշտապեցին դա անել, որովհետև շատերը ենթադրում էին, որ այս ամենը ժամանակավոր բնույթ ունի և Արևելյան Երուսաղեմը կրկին կանցնի Հորդանանի տիրապետության տակ: Հորդանանի քաղաքացի հանդիսացող բոլոր հայերին տրված է այսպես կոչված մշտական բնակչի կարգավիճակ և շնորհվել են կեցության անձնագրեր: Իսկ Իսրայելի քաղաքացիություն ստացած հայերի թիվն այսօր Երուսաղեմում հասնում է 600-650 հոգու:

Հայերի մեծ մասի՝ Իսրայելի քաղաքացիներ չհանդիսանալու հանգամանքը, որը պայմանավորված է արաբա-իսրայելյան հակամարտությամբ և Երուսաղեմի չճշտված կարգավիճակով, նվազեցնում է վերջիններիս հնարավորություններն աշխատանքի, քաղաքացիական իրավունքների, արտոնությունների, կեցության ու կենսապահովման հետ կապված բազմաթիվ այլ հարցերում: Իս-

րայելի քաղաքացիություն ձեռք բերելու համար ներկայացվող դիմումները, որպես կանոն, այժմ մերժվում են:

Ուշադրության է արժանի նաև **հայ համայնքի և միաբանության փոխհարաբերությունների** հարցը: Դարեր շարունակ հայ համայնքը և Սրբոց Հակոբյանց միաբանությունն անխզելիորեն կապված են եղել միմյանց: Մեկի ուժեղացումը պայմանավորված է եղել մյուսով: Անհնար է Երուսաղեմում ունենալ ուժեղ հայ համայնք՝ առանց ուժեղ վանական միաբանության, և հակառակը. անհնար է ունենալ ուժեղ եկեղեցական միաբանություն, եթե ուժեղ չեն համայնքը և համայնքային մարմինները:

Պատրիարքարանի և համայնքի միջև ոչ նախկինում և ոչ էլ հիմա երբեք չեն առաջացել լուրջ հարցեր կամ հակասություններ: Եթե անգամ մերթ ընդ մերթ նման խնդիրներ ծագել են, ապա դրանք եղել են զուտ կենցաղային հարցեր: Միայն Սրբոց Հակոբյանց վանական համալիրի տարածքում այսօր բնակվում է 80 հայ ընտանիք՝ 200-220 մարդ, որոնք օգտվում են վանքի օժանդակությունից և եկեղեցուն շնորհված արտոնություններից:

Երուսաղեմի հայ համայնքը տարիներ շարունակ հանդիսացել է Սրբոց Հակոբյանց միաբանության հիմնական նեցուկը, իսկ վերջինս՝ համայնքի իրավական պաշտպանն ու երաշխավորը: Համայնքի հատկապես երիտասարդական սերուցքը հանդիսացել է նաև միաբանության պաշտպանը միջեկեղեցական բախումների ժամանակ: Ցավոք, վերջին ժամանակներս տեղի ունեցած բախումներին մասնակցած Երուսաղեմի աշխարհիկ հայերը սկսում են ավելի շատ խնդիրներ ունենալ ներքին գործերի ու ոստիկանության մարմինների հետ: Կատարվում են ձերբակալություններ, հարուցվում քրեական գործեր, ստեղծվում դատական քաշքշուկներ, կիրառվում տուգանքներ և այլ պատժիչ միջոցառումներ, որոնք հայ համայնքին ստիպում են ավելի պասիվ միջամտություն հանդես բերել հայոց եկեղեցու «ավանդական» մեթոդներով կիրառվող պաշտպանությանը: Իսկ պատրիարքությունն արդեն ոչ միշտ է

կարողանում փոխադարձ պաշտպանության տակ առնել իր աշխարհիկ զավակներին:

Լուրջ ուշադրության է արժանի **Երուսաղեմի Հայոց պատրիարքության և Մայր աթոռ Սուրբ Էջմիածնի փոխհարաբերությունների հարցը:** Ինչպես արդեն նշվել է, Սրբոց Հակոբյանց միաբանությունը Երուսաղեմում ներկայացնում է Սուրբ Առաքելական աթոռի հոգևոր նվիրապետությունը: Սակայն վերջինս Էջմիածնի Մայր աթոռից օրգանապես անկախ և ինքնուրույն եկեղեցական միավորում է: Անցած դարերի ընթացքում Երուսաղեմի Հայոց պատրիարքության և Մայր աթոռի միջև ձևավորվել են կայուն և զգուշավոր փոխհարաբերություններ: Մայր աթոռը չի միջամտում պատրիարքության ներքին գործերին, չունի վերահսկիչ և վերստուգիչ գործառույթներ: Մայր աթոռի և Երուսաղեմի պատրիարքության համագործակցությունը առավելապես վերաբերում է հոգևոր ծիսական և եկեղեցական արարողակարգային հարցերին:

Օսմանյան կայսրության տարիներին գոյություն ունեին որոշակի աշխատանքային և կազմակերպական փոխհարաբերություններ Կոստանդնուպոլսի Հայոց պատրիարքության հետ: 15-րդ դարում ստեղծված Պոլսո Հայոց պատրիարքությունը օսմանյան տիրակալների կողմից սահմանված խաղի կանոնների արդյունքում ձեռք բերեց հոգևոր և կազմակերպական գերակայություն կայսրության տարածքում գործող մյուս բոլոր եկեղեցական կազմավորումների նկատմամբ: Դա վերաբերում էր նաև Երուսաղեմի Հայոց պատրիարքությանը, որը պետք է պարբերաբար հաշվետվություն ներկայացներ Պոլսո Հայոց պատրիարքությանը, իսկ Երուսաղեմի Հայոց պատրիարքը նշանակվում էր Պոլսո ազգային երեսփոխանական ժողովի կողմից՝ Սրբոց Հակոբյանց միաբանության ընդհանուր ժողովում ընտրված պատրիարքական երեք ընտրելիների կազմից: Օսմանյան կայսրության փլուզումից հետո, երբ Պաղեստինը հայտնվեց բրիտանական մանդատի գերիշխանության տակ, այս փոխհարաբերությունները Պոլսո պատրիարքության հետ,

բնականաբար, չպահպանվեցին: Երուսաղեմի Հայոց պատրիարքի ընտրությունը կատարվում է բացառապես Սրբոց Հակոբյանց միաբանության ընդհանուր ժողովի կողմից: Միաբանությունն այլևս որևէ մեկին հաշվետու չէ:

ԽՍՀՄ տարիներին մի քանի անգամ փորձ է արվել բարձրացնել Մայր աթոռի դերը, Սրբոց Հակոբյանց միաբանության հետ ստեղծել գործուն ու կանոնակարգված փոխհարաբերություններ, սակայն այդ ծրագրերը զարգացում չեն ապրել: Մի քանի տարի առաջ Մայր աթոռի կողմից ստեղծվեց հատուկ հանձնախումբ Հայ եկեղեցու կանոնագիրք մշակելու կապակցությամբ: Փորձ էր արվում ամբողջացնել և ի մի բերել Հայ եկեղեցու ներքին կազմակերպական վիճակը արդի չափանիշներին ու նոր ժամանակների մարտահրավերներին համապատասխան: Փորձ արվեց նաև կարգավորել և հստակեցնել Մայր աթոռի և Երուսաղեմի Հայոց պատրիարքության միջև գոյություն ունեցող փոխհարաբերությունները: Մասնավորապես, նախատեսվում էր սահմանել վարչական որոշակի ենթակայություն, տնտեսական գործունեության մասին հաշվետվություններ, պատրիարքի ընտրության վավերացում և այլն: Սակայն միաբանության ընդհանուր ժողովը, քննարկելով հարցը, մերժեց բոլոր առաջարկությունները:

Լուրջ է **միաբանության ներսում ժամանակի ընթացքում կուտակված և առկա հիմնախնդիրների** հարցը: Խնդիրների այս շղթայում նախ հարկ է անդրադառնալ միաբանության կանոնադրական հիմնախնդիրների հետ կապված հարցերին: Միաբանության գործունեության կազմակերպման կապակցությամբ գոյություն ունի երկու փաստաթուղթ՝ Սրբոց Հակոբյանց միաբանության կանոնադրությունը և Սրբոց Հակոբյանց միաբանության ընդհանուր ժողովի կանոնադրությունը: Երկուսն էլ հաստատվել են 19-րդ դարում, 120-130 տարի առաջ: Որքան էլ եկեղեցին՝ պահպանողական, իսկ կրոնական արժեքները՝ անփոփոխ ու հարատև համարվեն, այնուամենայնիվ, այս կանոնադրությունների հնաոճ ու

դարն ապրած լինելու հանգամանքն արդեն աչք է ծակում: Առավել ևս, որ ի սկզբանե գոյություն են ունեցել մի շարք հակասություններ այս երկու կանոնադրությունների միջև:

Ժամանակի թելադրանքով, աշխատանքների ու գործունեության կազմակերպման մի շարք ոլորտներում պատրիարքության կողմից սահմանվել են բազմաթիվ այլ նորմեր ու կանոններ, որոնք հակասում են գործող կանոնադրությանը: Մինչև անգամ նոր պատրիարքի ընտրությունը կատարվում է նոր կարգով և կանոններով: Սակայն այդ նորմերը չեն վերածվել կանոնադրական փոփոխությունների, չեն դարձել կանոնադրական նորմեր, ինչն էլ մեծացնում է սուբյեկտիվ գործոնի դերը միաբանության ընդհանուր գործունեության կազմակերպման ընթացքում: Կանոնադրական փոփոխությունների կատարումը ժամանակի հրամայականն է: Ընդ որում՝ այս հարցում վճռորոշ նշանակություն պետք է ունենա Մայր աթոռ Սուրբ Էջմիածնի դիրքորոշումը:

Միաբանության ներսում այսօր որոշակի խնդիր են նաև վերահսկողական գործառույթների անկատար մեխանիզմները: Եթե նախկինում կային որոշակի հաշվետվական և վերահսկողական աշխատանքային փոխհարաբերություններ Երուսաղեմի Հայոց պատրիարքության, ինչպես նաև Պոլսո Հայոց պատրիարքության ու ազգային երեսփոխանական ժողովի միջև, ինչը բարձրացնում էր կարգապահությունն ու պատասխանատվության զգացումը միաբանության ներսում, ապա ներկայումս այդօրինակ փոխհարաբերությունների բացակայությունն իր դրոշմն է թողնում Սրբոց Հակոբյանց միաբանության և Երուսաղեմի Հայոց պատրիարքարանի գործունեության վրա:

Պատրիարքության ներսում ներքին աշխատանքային մեխանիզմները կատարյալ չեն: Չկան միաբանության բյուջեի կազմման հստակ չափորոշիչներ: Տարեկան բյուջեի մուտքային և ծախսային մասերը կատարվում են խիստ մոտավոր հաշվարկների հիման վրա: Չի կատարվում միաբանության գույքի և նյութա-

կան արժեքների, առավել ևս՝ կալվածական սեփականության գույքագրում ու հաշվառում: Աուդիտ հասկացողություն ընդհանրապես գոյություն չունի:

Պատրիարքությունը մի շարք ոլորտներում ունի մասնագիտական ներուժի պակաս: Պատրիարքարանին պատկանող ենթակառուցվածքները՝ թանգարանը, մատենադարանը, տպարանը, նույնիսկ վարժարանները, համապատասխան մասնագետներով համալրելու կարիք ունեն: Որպես կանոն, այս ենթակառույցները ղեկավարվում են միաբանության անդամ հոգևորականների կողմից, որոնք հաճախ, ամենամեծ ցանկության դեպքում անգամ, ոչ միշտ են կարողանում լիարժեք կազմակերպել և ղեկավարել տվյալ կառույցների աշխատանքները:

Լուրջ խնդիրների առջև են կանգնած հատկապես կրթական հաստատությունները: Ժառանգավորաց վարժարանի և ընծայարանի սովորողների գերակշռող մեծամասնությունը Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ են, որոնցից շատերը ճեմարանական կրթություն ստանալուց և Հայաստան վերադառնալուց հետո խնդիրներ են ունենում իրենց ավարտական դիպլոմի ճանաչման հարցում: Ինչպես արդեն նշվել է, վարժարանի տեսչության ջանքերով ներկա պահին Մայր աթոռի և ՀՀ ԿԳ նախարարության հետ քննարկվում է վարժարանի շրջանավարտներին Էջմիածնի Գևորգյան ճեմարանի դիպլոմներ տրամադրելու հնարավորության հարցը:

Սրբոց Թարգմանչաց վարժարանը ևս լավագույն օրեր չի ապրում: Վարժարանի սաների թվաքանակի նվազումը պայմանավորված չէ միայն հայ համայնքի թվաքանակի կրճատմամբ: Կան նաև վարժարանի որակական ցուցանիշների հետ կապված խնդիրներ: Հայերից շատերն այսօր ձգտում են իրենց զավակներին ուսման տալ այլ, օտար դպրոցներում: Վարժարանի տեսչությունը, իրավիճակը շտկելու նպատակով, ձգտում է աշխատանքներ զարգացնել երկու ուղղություններով՝ վարժարանի կրթական ծրագրերն առա-

վելագույնս հարմարեցնել Հայաստանի կրթական ծրագրերին և հնարավորինս ներգրավել դասավանդվող նոր ծրագրեր, որոնք առավել գործածելի են Իսրայելի կրթական համակարգում:

Սրբոց Հակոբյանց միաբանության, թերևս, ամենացավոտ հիմնախնդիրներից մեկը **լրատվական ոլորտում տարվող աշխատանքներն են:**

Զանգվածային տեղեկատվական և լրատվական մարմինների հետ տարվող աշխատանքները, որպես կանոն, միշտ էլ աչքի են ընկել ցածր արդյունավետությամբ: Պատրիարքությունը ոչ միշտ է կարողանում տեղին ու ժամանակին լուսաբանել իր գործունեությունը, մատուցել և ներկայացնել խնդիրներն ու հիմնահարցերը: Դժվարությամբ է կարողանում դիմակայել ապատեղեկատվությանը, հատկապես երբ դա տեղի է ունենում այս կամ այն կոնֆլիկտային իրավիճակի մեկնաբանության ժամանակ: Հռոմի պապի կողմից Սրբոց Հակոբյանց մայր տաճար կատարած այցելությունն անգամ Հայաստանի լրատվական համակարգում ներկայացվեց ընդամենը 2-3 տող տեղեկատվական հաղորդմամբ, առանց լուրջ մեկնաբանությունների ու վերլուծությունների:

Պատրիարքությունը չունի հստակ և կազմակերպված տեղեկատվական ծառայություն կամ, այլ կերպ ասած՝ հասարակայնության հետ տարվող աշխատանքների ու կապերի բաժին կամ տեսչություն, որտեղ աշխատանքները դրված կլինեն մասնագիտական հիմքերի վրա՝ լուսաբանելու միաբանությունը, պատրիարքության գործունեությունը, իրականացնելու համապատասխան քարոզչական աշխատանքներ: Ընդհանուր առմամբ, վատ են կիրառվում նորագույն տեխնոլոգիաները և դրանց ընձեռած հնարավորությունները: Պատրիարքությունն առ այսօր սեփական կայքէջ չունի: Չկան սեփական լրատվական հնարավորություններ, դրված չեն արագ արձագանքման տեղեկատվական գործունեության հիմքերը: Չկան համապատասխան որակյալ ու բանիմաց կադրեր: Որքան էլ առանձին եկեղեցականներ անձնական ակտիվություն

դրսևորեն այս կամ այն կայքերի օնլայն ֆորումների քննարկումների ժամանակ, միևնույն է, դա չի կարող լրացնել այն բացը, որն առկա է լրատվական, տեղեկատվական և ժամանակակից տեխնոլոգիաների կիրառման ասպարեզում:

Հայ Երուսաղեմի **հիմնախնդիրների շարքում չմոռանանք մի հատկանշական՝ առավելապես հոգեբանական նշանակություն ունեցող հանգամանք ևս,** որն առաջին հայացքից տեսանելի չէ, բայց իրականում էական նշանակություն ունի: Մեզանից շատերը դրան կարևորություն չեն տալիս, բայց դա, անշուշտ, վճռական ազդեցություն ունի հայկական Երուսաղեմի բոլոր հիմնախնդիրների զարգացման տրամաբանության վրա:

Հայոց պատմական ներկայացվածությունը և աչք ծակող ունեցվածքը Սուրբ երկրում **շարժում է բոլորի նախանձը:**

Նախանձ է առաջացնում այն, որ հայկական թաղամասը տեղակայված է Սիոնի վրա, որ քրիստոնեական թաղամասում նույնպես հայերը շենքեր ու շինություններ ունեն: Նախանձ է առաջացնում այն, որ Սուրբ երկրում չկա և ոչ մեկ սրբավայր, որտեղ հայերն իրենց պատկառելի չափաբաժինն ու իրավունքները չունենան, այն, որ մի շարք սրբավայրեր ու տնօրինական վայրեր միայն հայերի սեփականությունն են, օրինակ՝ Գեթսեմանի պարտեզը: Նախանձ է առաջացնում այն, որ Համբարձման լեռան վրա, որտեղ դաջված են համբարձվող Քրիստոսի ոտնահետքերը, որ չնայած սրբապիղծ դավադրությանը (որի արդյունքում հայկական Համբարձման եկեղեցին վերածվեց մզկիթի), այնուամենայնիվ, տարին մեկ անգամ սուրբ պատարագ մատուցելու իրավունք ունեն միայն հայերը: Նախանձ է առաջացնում այն, որ Փրկչի գերեզմանի բոլորաձև մատուռի 18 հենասյուներից 8-ը, այսինքն՝ ողջ ձախակողմյան մասը հայերին է պատկանում, որ Սուրբ Հարության տաճարում եկեղեցական թափորի իրավունք միայն հայերն ունեն, որից զրկված են այլք, այդ թվում նաև հույները...

Պատկերացրեք այն ուխտավորի կամ զբոսաշրջիկի վիճակը,

որը մինչև Երուսաղեմ գալը լսել է ուղղափառ կամ կաթոլիկ եկեղեցիների «հզորության» մասին, գալիս է ու տեսնում, որ միայն իր իմացածները չէ, որ այստեղ հարգանք ու պատիվ ունեն, տեր ու տնօրեն են: Եվ ամենակարևոր վայրերից շատ տեղերում հունարենի կամ լատիներենի կողքին, իսկ շատ տեղերում՝ նաև նրանց փոխարեն, տեսնում է իրեն անհայտ, բայց ինչ-որ մոգական, աստվածային նշագրեր՝ հայերեն վիմագրեր...

Իսկ այս զբոսաշրջիկը կամ պոտենցիալ բարեկամ է (եթե նրա հետ ճիշտ աշխատես), կամ էլ պոտենցիալ նախանձող:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՍՐԱՅԵԼԻ ՄԻՋԵՎ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱ ՎԻՃԱԿԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

ՀՀ - Իսրայել հարաբերությունների վիճակը

Հայաստանի և Իսրայելի միջև դիվանագիտական հարաբերությունները հաստատվել են 1992թ. ապրիլի 4-ին: Երկու երկրներում էլ դեռևս դեսպանություններ չեն բացվել, և առ այսօր երկու կողմից էլ նշանակվում են ոչ ռեզիդենտ դեսպաններ: 1993-2007թթ. Հայաստանում Իսրայելի դեսպանների նստավայրը եղել է Թբիլիսին: 2007թ. Էհուդ Գոլի դեսպան նշանակվելուց հետո նստավայրը տեղափոխվում է Երուսաղեմ: 1996թ. Հայաստանը պատվո հյուպատոս է նշանակել Երուսաղեմում: 1999-2008թթ. համատեղության կարգով Իսրայելում որպես ոչ ռեզիդենտ դեսպան հավատարմագրվել է Ֆրանսիայում ՀՀ դեսպանը: 2008-ից Հայաստանում Իսրայելի դեսպանն է Շեմի Ցուրը: Ներկա պահին Հայաստանի դեսպան Իսրայելում դեռևս նշանակված չէ:

Թեև անցած տարիների ընթացքում եղել են պարբերական շփումներ, տարբեր նախաձեռնություններ, բայց դա երկու երկրների փոխհարաբերություններում շոշափելի արդյունքների դեռևս չի հանգեցրել:

Դիվանագիտական հարաբերությունների հաստատումից ի վեր հայկական կողմից մի քանի բարձրաստիճան այցելություններ են տեղի ունեցել, այդ թվում՝ նախագահների մակարդակով: 1995թ. ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը մասնակցել է Իցհակ Ռաբինի հուղարկավորությանը: 2000թ. Երուսաղեմ այցելեց ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանը՝ Սուրբ Ծննդյան տոներին մասնակցելու կապակցությամբ: Հայաստանի

Հանրապետության կողմից այցելություններ եղել են նաև արտգործնախարարի մակարդակով: Իսրայելական կողմից ամենաբարձր մակարդակով այցելությունը եղել է արտաքին գործերի նախարարի տեղակալի մակարդակով:

Անցած ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության և Իսրայելի կառավարությունների միջև ստորագրվել է համագործակցության ութ փաստաթուղթ: Եվս չորս փաստաթուղթ քննարկման փուլում է: 2007թ. ՀՀ կառավարությունը հավանություն է տվել «Հայաստանի Հանրապետության կառավարության և Իսրայելի պետության կառավարության միջև մաքսային հարցերում համագործակցության վերաբերյալ» համաձայնագրի նախագծին:

Երկու երկրներում էլ գործում են միջխորհրդարանական բարեկամության պատգամավորական խմբեր: Սակայն այդ ուղղությամբ լուրջ, գործնական աշխատանքներ դեռևս չեն ծավալվել:

Հայաստանի Հանրապետության և Իսրայելի միջև անց են կացվել մի շարք դիվանագիտական խորհրդակցություններ, վերջինը տեղի է ունեցել 2005թ.: Միևնույն ժամանակ, երկու կողմերի միջև բավական մեծ դժվարությամբ է ընթացել համագործակցությունը միջազգային կառույցներում, և նրանք գրեթե միշտ հայտնվել են հակադիր տեսակետներ կրող բևեռներում, թեև 2008թ. մարտի 14-ին ՄԱԿ Գերագույն ասամբլեայում Ադրբեջանի ներկայացրած բանաձևին Իսրայելը ձեռնպահ է քվեարկել:

Չնայած փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող առևտրատնտեսական հարաբերությունները կրել են սահմանափակ բնույթ, սակայն ադամանդի մշակման ոլորտում համագործակցության շնորհիվ Իսրայելը նույնիսկ դարձել էր Հայաստանի կարևոր առևտրատնտեսական գործընկերներից մեկը: Հետագայում ադամանդագործության ոլորտում տեղի ունեցած անկումային երևույթների պատճառով երկու երկրների միջև ապրանքաշրջանառության ծավալները 2006թ. հետո բավական նվազել են: Հայաստանում գործում է իսրայելական կապիտալով

18 ընկերություն: Սա, իհարկե, մեծ ցուցանիշ չէ, բայց դրանց հաջող գործունեության փորձը կարող է խթան հանդիսանալ առևտրատնտեսական ոլորտի նոր ներդրումային ծրագրերի իրականացման համար: Կրթական, գյուղատնտեսական և առողջապահության բնագավառում մեկնարկած մի շարք ծրագրեր ժամանակի ընթացքում զարգացում չեն ունեցել:

ՀՀ և Իսրայելի միջև հարաբերությունները, բնականոն զարգացման գործընթացների հետ մեկտեղ, պայմանավորված են եղել մի շարք, հաճախ՝ իրարամերժ ու նորմալ համագործակցությանը խոչընդոտող գործոններով:

Իսրայելը միշտ ձգտել է զարգացնել և խորացնել հարաբերությունները Թուրքիայի հետ: 1949թ. Թուրքիան մահմեդական առաջին երկիրն էր, որը ճանաչեց Իսրայելը որպես անկախ պետություն: Այս հանգամանքը մեծ նշանակություն ունեցավ նորաստեղծ հրեական պետության համար, որը Թել Ավիվին հնարավորություն տվեց ճեղքել տարածաշրջանային մեկուսացումը և ձեռք բերել կարևոր դաշնակից: Խորացնելով հարաբերությունները Թուրքիայի, իսկ վերջին տարիներին՝ նաև Ադրբեջանի հետ՝ Իսրայելը ձգտում է ցույց տալ իսլամական և, հատկապես, արաբական աշխարհին, որ Իսրայելի և մահմեդական երկրների բարեկամական փոխհարաբերություններն ու համագործակցությունը միանգամայն հնարավոր են: Այդ գործընթացում, քաղաքական երկխոսությունը զարգացնելու և ամրապնդելու հետ մեկտեղ, Իսրայելը հատուկ ուշադրություն է դարձնում հատկապես տնտեսական ոլորտում նախատեսվող համագործակցությանը: Իսրայելում վերջին ամիսներին բավական հաճախ են մատնանշում Ադրբեջանի հետ նախորդ 2-3 տարվա ընթացքում խորացող համագործակցության փորձը, որը ներկա պահին նախկին ԽՍՀՄ մահմեդական երկրների շարքում կարելի է համարել Իսրայելի հետ ռազմավարական համագործակցության ուղին բռնած, թերևս, ամենաառաջին դիրքում գտնվող պետությունը:

ՀՀ և Իսրայելի միջև փոխհարաբերությունների ներկա վիճակը

մասամբ պայմանավորված է նաև Հայոց ցեղասպանության նկատմամբ իսրայելական պաշտոնական շրջանակների ժխտողական վարքագծով:

Պետք է ասել, որ Իսրայելի ակադեմիական և, ընդհանուր առմամբ, հրեական գիտական ու հասարակական շրջանակները բազմիցս արտահայտվել են հօգուտ Հայոց ցեղասպանության ճանաչման, ինչը չի կարելի ասել Իսրայելի պաշտոնական շրջանակների մասին: Իսրայելի այնպիսի ականավոր գիտնականներ ու ցեղասպանագետներ, ինչպիսիք են Իսրայել Չերնին, Իեգուդա Բաուերը, Մորդեխայ Նիսանը, Յաիր Օրոնը, իրենց գիտական զեկույցներում, ելույթներում, հոդվածներում, հարցազրույցներում, հեղինակած գրքերում ու աշխատություններում բազմիցս անդրադարձել են Հայոց ցեղասպանության խնդրին՝ հարցին անդրադառնալով ոչ միայն պատմագիտական, այլև գաղափարական-քաղաքական տեսանկյունից:

Սակայն պատկերը բոլորովին այլ է Իսրայելի պետական, պաշտոնական միջավայրում: Իսրայելի պաշտոնական դիրքորոշումը Հայոց ցեղասպանության հարցում միշտ եղել է պրագմատիկ և դրանով իսկ ժխտողական: Ամենատարբեր գիտաժողովների ժամանակ Իսրայելի պետական շրջանակների կողմից բազմիցս ճնշումներ են գործադրվել հրեական գիտական մտքի վրա՝ հայերի ցեղասպանության հետ կապված ելույթներն ու զեկույցներն օրակարգից կամ քննարկումներից հանելու կապակցությամբ: Ընդհանուր առմամբ, Հայոց ցեղասպանության հարցում Թուրքիայի կողմից հաճախ են ճնշումներ գործադրվել Իսրայելի կառավարության վրա, որի ազդեցության տակ իսրայելական պետական և իշխանական մարմինները բազմիցս արգելք են հանդիսացել Իսրայելում հայկական ցեղասպանությանն առնչվող այս կամ այն գործընթացի կազմակերպմանը:

Թուրք-իսրայելական համագործակցությունը հստակ առնչվում է նաև ԱՄՆ Կոնգրեսում Հայոց ցեղասպանության ճանաչման դեմ տարվող աշխատանքների հետ: ԱՄՆ-ում գործող բավական ուժեղ հրեական

լոբբիստական կազմակերպությունները հանդես են եկել Միացյալ Նահանգներում Հայոց ցեղասպանությանը վերաբերող բանաձևերի դեմ՝ պայքար մղելով հայկական համանման կազմակերպությունների դեմ: Այսպես, հրեական լոբբին ակտիվորեն դիմադրեց ԱՄՆ Կոնգրեսի այն ուղղմանը, որն արգելելու էր Թուրքիային օգտագործել Վաշինգտոնից ստացած միջոցները Հայոց ցեղասպանությունը ժխտելու համար: Ամերիկայի հրեական լոբբին զգալի ջանքեր գործադրեց նաև 2000թ. Կոնգրեսում Հայոց ցեղասպանության մասին բանաձևի տապալման ուղղությամբ: Իսրայելի նախագահ Շիմոն Պերեսը եռանդուն աշխատանքներ էր տանում վերոհիշյալ ընկերությունների հետ, երբ 2007թ. ամռանը Թուրքիայի վարչապետ Էրդողանի խնդրանքով «Ընդդեմ խտրականության լիգային» *(ADL)* համոզում էր չճանաչել Հայոց ցեղասպանությունը, իսկ հոկտեմբերին հորդորում էր հրեական լոբբիստական կառույցներին աշխատել ԱՄՆ Ներկայացուցիչների պալատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովում ընդունված թիվ 106 բանաձևը ձախողելու ուղղությամբ:

2002թ. փետրվարին Վրաստանում և Հայաստանում Իսրայելի արտակարգ և լիազոր դեսպան Ռիվկա Քոհենը հայտարարեց, որ «Հոլոքոստը աննախադեպ երևույթ է և ոչինչ, այդ թվում՝ հայերի ողբերգությունը, չի կարելի համեմատել հրեաների ցեղասպանության հետ»: Այս հայտարարությունը դժգոհություն առաջացրեց Հայաստանում՝ պատճառ դառնալով հայ-իսրայելական հարաբերություններում արտահայտված լարվածության, որին հետևեց ՀՀ արտգործնախարարության բողոքի նոտան՝ ուղղված Իսրայելի կառավարությանը:

Հայոց ցեղասպանության հարցը մի քանի անգամ դարձել է նաև Կնեսետի քննարկման առարկա: 2008թ. մարտի 26-ին Մերեց կուսակցության առաջնորդ, պատգամավոր Խաիմ Օրոնը (վերջինս իսրայելյան հայտնի գիտնական, Հայոց ցեղասպանությանը նվիրված բազմաթիվ գրքերի ու աշխատությունների հեղինակ Յաիր Օրոնի եղ-

բայրն է) առաջարկեց հարցը քննարկել Կնեսետի լիագումար նիստում: Կառավարության ներկայացուցիչ, Իսրայելի գյուղատնտեսության նախարար Շալոմ Սիմհոնը մերժեց հարցը լիագումար նիստին դնելու առաջարկությունը: Իսրայել-Հայաստան միջխորհրդարանական բարեկամական խմբի ղեկավար Զեև Էլքինն առաջարկեց հարցը քննարկման տեղափոխել Կնեսետի կրթության հանձնաժողով, ինչին Շալոմ Սիմհոնը համաձայն էր: Քննարկման ընթացքում խիստ ագրեսիվ ու հակահայկական հիստերիկ կեցվածք դրսևորած, աղրբեջանական ծագումով պատգամավոր Իոսեֆ Շագալի (ՄՏԻ կուսակցություն) պնդմամբ հարցն, ի վերջո, տեղափոխվեց Կնեսետի անվտանգության և արտաքին հարաբերությունների հանձնաժողով, որտեղ, բնականաբար, այլևս չքննարկվեց մինչև Կնեսետի 17-րդ գումարման ավարտը:

Հայոց ցեղասպանության թեմային Կնեսետն անդրադարձավ նաև 2009թ. մայիսի 5-ին, արդեն 18-րդ գումարման նոր պատգամավորական կազմով: Հարցը կրկին բարձրացվեց Խաիմ Օրոնի կողմից: Կառավարության ներկայացուցիչ, Իսրայելի բնապահպանության նախարար Գիլադ Էրդանն իր խոսքում գրեթե չժխտելով Հայոց ցեղասպանության փաստը՝ միաժամանակ պատգամավորներին հիշեցրեց հարցի քաղաքական համատեքստի մասին՝ առաջին պլանում դիտարկելով Թուրքիա-Իսրայել փոխհարաբերությունների պահպանման խնդիրը: Քննարկման արդյունքում Հայոց ցեղասպանության հարցը Կնեսետի անվտանգության և արտաքին հարաբերությունների հանձնաժողովից տեղափոխվեց կրթության հանձնաժողով, որի պատգամավորական կազմն աչքի է ընկնում ոչ կոնյունկտուրային ու ավելի հայամետ դիրքորոշումներով:

Համենայնդեպս, առողջ իրատեսականությունը հուշում է, որ Իսրայելն այսօր պատրաստ չէ ճանաչել Հայոց ցեղասպանությունը: Դրա համար դեռևս չկան բավարար քաղաքական հիմքեր և իրավական, տնտեսական, հասարակական կայուն նախադրյալներ:

2001-2002թթ. հայ-իսրայելական փոխհարաբերություններում լուրջ խնդիրներ առաջացան Երուսաղեմի Հայոց պատրիարքությանը պատկանող *Պարոն-Տեր* կալվածքի նկատմամբ իսրայելական բանակի ոտնձգության հետևանքով: Ընդհանուր առմամբ իսրայելական իշխանությունների ոչ լոյալ վերաբերմունքը Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց միաբանության սեփականության և իրավունքների նկատմամբ միշտ էլ խոչընդոտներ է առաջացնում Հայաստան-Իսրայել փոխհարաբերությունների կարգավորման ոլորտում:

Այնուամենայնիվ, հարաբերությունների աստիճանական զարգացումը բխում է երկու երկրների շահերից: Հայաստանի համար համագործակցությունն Իսրայելի հետ, անշուշտ, շահավետ նշանակություն կունենա, եթե հաշվի առնենք վերջինիս գիտակրթական, տեխնոլոգիական առաջընթացը, սոցիալ-տնտեսական մոդելների, ենթակառուցվածքների, պետություն-սփյուռք փոխհամագործակցության արժեքավոր փորձի փոխանակման շահեկանությունը, հրեական շրջանակների ազդեցությունը միջազգային ֆինանսատնտեսական կառույցների վրա և այլն:

Մյուս կողմից՝ Իրանի և արաբական մի շարք երկրների հետ Հայաստանի սերտ հարաբերությունները և այդ երկրներում հայ համայնքների առկայությունը կարող են պայմանավորել Իսրայելի հետաքրքրությունը Հայաստանի նկատմամբ: Վերջին ժամանակներում տեղի ունեցած որոշ իրադարձություններ վկայում են իսրայելական կողմի՝ Հայաստանի հետ հարաբերությունները զարգացնելու և խորացնելու պատրաստակամությունը:

Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրվող դեսպանների նստավայրը Երուսաղեմ տեղափոխելուց հետո վերսկսվեց համագործակցության ծրագրերի մշակումը, մասնավորապես՝ առողջապահության և գյուղատնտեսության բնագավառներում: Հնարավոր է, որ առաջիկայում կրկին վերականգնվի դիվանագիտական խորհրդատվությունների կազմակերպման պրակտիկան:

Ընթացիկ տարում Հայաստանում Իսրայելի նորանշանակ դեսպան Շեմի Ցուրը չորս անգամ արդեն այցելել է Հայաստան[1]: Իսրայելի մամուլում այդ այցելությունները բավական լուրջ արձագանքներ և հետաքրքրիր մեկնաբանություններ են առաջացրել: Իսրայելի լրատվական աղբյուրներից շատերն այդ այցելությունները գնահատեցին որպես պատմական երկու երկրների փոխհարաբերություններում: Առաջին այցելության ժամանակ Շեմի Ցուրը հանդիպումներ ունեցավ հանրապետության գրեթե բոլոր բարձրագույն ղեկավարների հետ: Վերջինիս նախ ընդունեց ՀՀ արտաքին գործերի նախարար Է.Նալբանդյանը, այնուհետև՝ ՀՀ ԱԺ նախագահ Հ.Աբրահամյանը, ՀՀ վարչապետ Տ.Սարգսյանը և Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին 2-րդը: Այնուհետև Իսրայելի դեսպանին ընդունեց Հայաստանի Հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանը, որին էլ վերջինս հանձնեց իր հավատարմագրերը:

Երկրորդ այցելության ժամանակ Շեմի Ցուրը հանդիպումներ ունեցավ Հայաստանի մշակույթի նախարար Հ.Պողոսյանի և փոխվարչապետ Ա.Գևորգյանի հետ:

Հետաքրքիր անդրադարձներ առաջացրեց նաև ՀՀ փոխարտգործնախարար Ա.Կիրակոսյանի 2009-ի մայիսի 26-27-ին Իսրայել կատարած այցը: Այդ այցելության կապակցությամբ իսրայելյան մամուլում և վերլուծական կառույցներում տեղ գտած բոլոր մեկնաբանությունները հանգում էին մեկ ընդհանուր վերջաբանի, որ այս երկրները կարիք ունեն «դեսպանատների փոխանակման»:

Համենայնդեպս, այսօր արդեն առկա են Հայաստանի և Իսրայելի միջև երկկողմանի քաղաքական, տնտեսական, առևտրական և, ընդհանուր առմամբ, տարածաշրջանային համագործակցության բոլոր հիմքերը: Բացի դրանից, այսօր առկա են նաև բազմաթիվ, ընդ որում՝ չափազանց լուրջ հանգամանքներ, որոնք Հայաստանի Հանրապետու-

[1] 2009թ. մայիսին բանակցություններ են կայացել Հայաստանում Իսրայելի դեսպանատան բացման խնդրի շուրջ, http://news.narod.co.il/news/180911

թյանը ուղղակի ստիպում են ակտիվացնել արտաքին քաղաքականությունն Իսրայելում: Դրանք հիմնականում կապված են Երուսաղեմի Հին քաղաքի հայկական թաղամասի, Սրբոց Հակոբյանց միաբանության, Հայոց պատրիարքության, հայ համայնքի կամ հավաքական արտահայտությամբ՝ Հայ Երուսաղեմի առջև ծառացած հիմնախնդիրների, այդ թվում՝ հայոց պատմական ներկայացվածության ու պատմամշակութային ժառանգության պաշտպանության և պահպանության խնդիրների լուծմանը:

Հայաստանի Հանրապետության դերն ու առաջնահերթ խնդիրները Երուսաղեմի հայոց պատմամշակութային ժառանգության պահպանման հարցում

Երուսաղեմը Հայ Առաքելական եկեղեցու, ինչպես նաև Հայաստանի և Հայության կյանքում հանդիսացել է ոչ միայն պարզապես Սուրբ քաղաք կամ պաշտամունքի վայր: Համայն Հայության համար Երուսաղեմը յուրահատուկ խորհուրդ ունի, որից, ինչպես և մայր հողից, հայ հոգևոր, հասարակական ու մշակութային միտքը դարեր շարունակ ստացել է յուրահատուկ լիցքեր և կենսական էներգիա: Հավանաբար, դա է պատճառը, որ հայերին և մասնավորապես հայոց եկեղեցուն հաջողվել է դարերի ընթացքում Սուրբ երկրում ձեռք բերել կալվածքներ, հարստություններ, տիրապետել բազմաթիվ սրբատեղիների՝ «հայկականացնել ու ազգայնացնել» դրանք՝ տալով նոր շունչ և բովանդակություն: Այս ամենը, հիրավի, ազգային հարստություն է, որը ձեռք է բերվել ու բազմապատկվել ոչ միայն մեր եկեղեցու, այլև ազգասեր ու նվիրյալ հայ բարերարների ու հայ ուխտավորների բազմաթիվ սերունդների, ողջ հայ ժողովրդի բազմադարյա նվիրումի ու մաքառումի արդյունքում: Մեկ անգամ չէ, որ դարերի ընթացքում մեր գոյությունն ու արժանապատիվ ներկայությունը Երուսաղեմում պահպանելու համար պատմական Հա-

յաստանի տարածքում և նույնիսկ միջնադարյան հայկական մի շարք գաղթօջախներում կազմակերպվել են համազգային հանգանակություններ, նվիրատվություններ և այլն: Հետևաբար այն, ինչ մենք ունենք և ինչի հասել ենք Երուսաղեմում, ոչ միայն եկեղեցական, այլև ազգային հարստություն է, որը պետք է պահպանել:

Ազգային արժեք ներկայացնող Երուսաղեմի հայոց պատմական ներկայացվածության և պատմամշակութային ժառանգության պաշտպանության հարցում Հայաստանի Հանրապետության ակտիվությունը հատկապես վերջին ժամանակաշրջանում ձեռք է բերել անչափ կարևոր նշանակություն:

Երուսաղեմում հայ համայնքի բազմադարյա գոյությունը, Հայ Առաքելական եկեղեցու դերն ու ազդեցությունը, միջազգային բարձր հեղինակությունը, Հայոց պատրիարքության հոգևոր, կրթական, մշակութային և հասարակական գործունեությունը Հայության անքակտելի մասն են, նրա ազգային հպարտությունը, հոգևոր ու մշակութային գիտակցության, ազգային ինքնության կարևոր տարրերից ու բաղադրիչներից մեկը: Հետևաբար, Հայաստանի Հանրապետության կողմից Հայ Երուսաղեմի հետ կապված գործնական քայլերի ձեռնարկումն ու հետևողական քաղաքականության իրականացումը արժեքաբանական, իրավական և քաղաքական առումով լիովին հիմնավորված է ու պատմականորեն արդարացված:

Երուսաղեմի հայոց պատմական ներկայացվածության, Տիրոջ շիրիմի պահապանի առաքելության և հայոց պատմամշակութային ժառանգության պաշտպանության խնդիրը պետք է դիտարկվի որպես ՀՀ արտաքին քաղաքական գործունեության գերակա ուղղություններից մեկը: Ընդ որում՝ պետք է գիտակցել նաև, որ սա դեռևս չօգտագործված, բայց լավագույն հնարավորություններից մեկն է Հայաստանի ու հայկականության նորովի ու յուրատեսակ *բրենդ* ձևավորելու համար:

Այդ կապակցությամբ Հայաստանի Հանրապետությունը պետք է ակտիվ արտաքին քաղաքականություն իրականացնի մի շարք ուղղություններով:

Առաջին: Վերոհիշյալ ուղղություններից, թերևս, ամենաառանցքայինը Հայաստան-Իսրայել փոխհարաբերությունների հարցն է: Ակներև է, որ Հայաստանի դեսպանությունները Դամասկոսում, Բեյրութում և Կահիրեում չեն կարող ապահովել հայկական շահերի պաշտպանությունը Իսրայելում:

Երկու երկրների կողմից դեսպանությունների բացման հարցը Հայաստանի և Իսրայելի դիվանագիտական ծառայությունների միջև մի քանի անգամ քննարկվել է և դեռևս գտնվում է քննարկման փուլում: Հայկական կողմը, ելնելով տարածաշրջանում տիրող իրադրությունից և դրանով պայմանավորված մի շարք հանգամանքներից, առաջարկում է դեսպանություններ բացել երկու կողմից միաժամանակ, զուգահեռաբար: Իսրայելական կողմը, չառարկելով, հարցը հետաձգում է անորոշ ժամկետով՝ պատճառաբանելով ֆինանսական ճգնաժամը և դրանով պայմանավորված ֆինանսական դժվարությունները: Իսրայելական կողմն՝ ընդհանուր առմամբ տրամադրված լինելով ամրապնդել և խորացնել երկկողմանի հարաբերությունները Հայաստանի հետ գրեթե բոլոր ոլորտներում, միաժամանակ՝ Հայաստանում չունենալով այնպիսի հստակ ընդգծված շահեր, ինչպիսիք ունի Հայաստանն Իսրայելում, որդեգրել է առավել անշտապ գործողությունների տակտիկան:

Այն կարևոր գործառույթները, որոնք կանգնած են հայոց պետականության (այդ թվում նաև Մայր աթոռ Սուրբ Էջմիածնի) առջև, մեզ դանդաղելու իրավունք չեն տալիս:

Պաշտոնական Երևանը, սթափ և իրատեսական գնահատականների հիման վրա, պետք է *հստակ քաղաքական որոշում կայացնի Իսրայելում Հայաստանի Հանրապետության դեսպանություն բացելու կապակցությամբ:* Այս հարցում հապաղելն անթույլատրելի է: Միաժամանակ Հայաստանը պետք է հստակ ներկայացնի նաև իր շահերն ու խնդիրները հիշյալ տարածաշրջանում, և մասնավորապես Իսրայելում՝ դրանք դնելով վերջինիս հետ փոխհարաբերությունների հիմքում:

Երկրորդ: Հայաստանի շահերը և իրավունքները պետք է վերաբերվեն ոչ միայն Հայաստան-Իսրայել կամ անգամ Հայաստան-Պաղեստին փոխհարաբերություններին, այլև ունենան ավելի խորքային բնույթ և առնչվեն արաբա-իսրայելյան հակամարտության կարգավորման գործընթացներին: Դժվար չէ ներկայացնել համապատասխան հիմնավորումներ, ապացուցելու համար, որ արաբա-իսրայելյան հակամարտությունից տուժած կողմերից մեկը հայերն են: Արաբա-իսրայելյան հակամարտության խաղաղ կարգավորման բանակցային գործընթացներում մի քանի անգամ շոշափվել է Երուսաղեմի Հին քաղաքի հայկական թաղամասի հարցը: Եվ եթե մինչև այս պահը կողմերը դեռևս որևէ համաձայնության չեն հանգել, ապա դա ամենևին չի նշանակում, որ վաղը նրանք ինչ-որ համաձայնության չեն գա, ընդ որում՝ ոչ հայանպաստ ելքով: Համենայնդեպս, հայկական թաղամասի թեման օրակարգից դեռ դուրս չի եկել և կրկին կարող է հայտնվել բանակցությունների սեղանին: Իսկ այս ամենը նշանակում է, որ արաբա-իսրայելյան հակամարտության կարգավորման գործընթացը շոշափում է Հայության համար կենսական նշանակություն ունեցող հարցեր: Այսինքն՝ Հայաստանի Հանրապետությունը պետք է հստակ հայտարարի բանակցային գործընթացներում Հայությանը հետաքրքրող հարցերի և հստակ շահերի մասին:

Արաբա-իսրայելյան հակամարտության կարգավորման գործընթացներում երրորդ ուժեր պարբերաբար հայտնվել են: Բնականաբար, Երուսաղեմի հարցը չի կարող ողջ միջազգային հանրության ուշադրության կենտրոնում չլինել: Երուսաղեմը համայն մարդկության նյութական և հոգևոր արժեքներից է, աշխարհի «հոգևոր մայրաքաղաքը», հետևաբար, կան նաև այլ պետություններ, համաշխարհային ուժեր կամ կազմակերպություններ, որոնք նույնպես շահեր ունեն Երուսաղեմում: Հայաստանի Հանրապետությունը, որպես այդպիսին, անշուշտ, եզակի երկիր չէ: Որպես այդպիսի պետություն հանդես եկավ Վատիկանը, որը հայտարարեց Սուրբ վայրերում իր ունեցած հստակ ու կոնկրետ շահերի մասին: Արդյունքում՝ 1993թ. դեկտեմբերին Վատիկանի և Իսրա-

յելի միջև ստորագրվեց համագործակցության Համաձայնագիր, որով երկու կողմերն էլ ճանաչում էին մեկը մյուսի իրավունքները Երուսաղեմում: Ըստ պայմանագրի, Իսրայելը ճանաչում էր Վատիկանի իրավունքները, շահերն ու սեփականությունը Երուսաղեմի Սուրբ վայրերում: Պայմանագիրը ներառում էր նաև կողմերի միջև բազմաթիվ ասպարեզներում համագործակցությանը (կրթական-մշակութային, պաշտամունքի ազատության, բարեգործական և տեղեկատվական և այլ ոլորտներ, հատուկ ներկայացուցիչների փոխանակություն և դիվանագիտական հարաբերությունների հաստատում), ինչպես նաև ընդհանուր քրիստոնեական հուշարձանների պահպանությանը և ուխտագնացություններին վերաբերող դրույթներ[1]: Վատիկանը և Իսրայելի պետությունը Համաձայնագրի 11-րդ հոդվածի 1-ին կետով հայտարարում են իրենց նվիրվածությունը պետությունների և ազգերի միջև կոնֆլիկտների խաղաղ լուծմանը աջակցելուն՝ բացառելով բռնությունը և ահաբեկչությունը միջազգային կյանքից: Իսկ 11-րդ հոդվածի 2-րդ կետով Վատիկանը հիշեցնում է իր անկողմնակալությունը «բոլոր՝ բացարձակապես ժամանակավոր կոնֆլիկտների նկատմամբ», նշելով, «որ այդ սկզբունքը վերաբերում է հատկապես վիճարկելի տարածքներին և չորոշված սահմաններին»:

Հետագայում՝ 2000թ. համաձայնագիր ստորագրվեց նաև Վատիկանի և Պաղեստինի ազատագրության կազմակերպության (ՊԱԿ) միջև: Կողմերը համաձայնագրի Առաջաբանում պաղեստինյան-իսրայելյան հակամարտության՝ պաղեստինյան ժողովրդի անքակտելի ազգային օրինական իրավունքների և ձգտումների իրականացումով խաղաղ լուծման կոչ անելով, ինչպես նաև հայտարարելով, որ Մերձավոր Արևելքում արդար և երկարատև խաղաղության համար հիմնարար է միջազգային որոշումների վրա հիմնված Երուսաղեմի խնդ-

[1] Fundamental Agreement between the Holy See and the State of Israel. December 30, 1993; http://www.mfa.gov.il/MFA/MFAArchive/1990_1999/1993/12/Fundamental+Agreement+-+Israel-Holy+See.htm

րի արդարացի լուծումը, և որ Երուսաղեմի յուրահատուկ բնույթը և կարգավիճակը միակողմանի որոշումներով և գործողություններով փոփոխելը բարոյապես և իրավականորեն անընդունելի են, Երուսաղեմի համար միջազգայնորեն երաշխավորված հատուկ կարգավիճակի խնդիրն են դնում, ինչով կապահովվեն՝ բոլորի համար կրոնի և խղճի ազատությունը, երեք կրոնների, նրանց հաստատությունների և հետևորդների հավասարությունն օրենքի առջև Երուսաղեմում, Սուրբ վայրեր հաճախելու և պաշտամունքի ազատությունը, «ստատուս քվո»-ի իրավիճակն այն Սուրբ վայրերում, որտեղ այն կիրառվում է: Իսկ 4-րդ հոդվածում հատուկ նշվում է, որ «ստատուս քվո»-ն կպահպանվի և կգործի քրիստոնեական այն Սուրբ վայրերում, որտեղ այն կիրառվում է: 5-7-րդ հոդվածներով ՊԱԿ-ը ճանաչում է Կաթոլիկ եկեղեցու իրավունքների գործադրման ազատությունը հոգևոր-կրոնական, բարեգործական, կրթական-մշակութային ինչպես նաև տնտեսական, իրավական և ֆինանսական ոլորտներում՝ հատուկ նշելով, որ Պաղեստինյան օրենքում Կաթոլիկ եկեղեցու իրավական անձին կտրվի լիարժեք գործողություն[1]:

Առաջին հայացքից միմյանց հակասող այս երկու փաստաթղթերի միջև իրականում, իրավական տեսանկյունից հակասություն գոյություն չունի: Միևնույն ժամանակ, այդ փաստաթղթերից յուրաքանչյուրը ժամանակին բացասաբար է ընկալվել հակամարտող մյուս կողմում[2]: Բայց դա ամենևին չխանգարեց Վատիկանին արտահայտելու սեփական շահերը և հանդես գալու դրանց պաշտպանությամբ: Ամենևին էլ պարտադիր չէ, որ Հայաստանի Հանրապետությունն ընթանա նույն ճանապարհով, որով ընթացավ Վատիկանը: Հայաստանի Հանրապետությունը

[1] The PLO-Vatican Agreement Basic Agreement between Holy See and the Palestine Liberation Organization Preamble. http://www.jerusalemquarterly.org/ViewArticle.aspx?id=233

[2] *Toni Johnson.* Vatican-Israel Relations. http://www.cfr.org/publication/19344/pope_benedicts_mideast_journey.html; Vatican envoy: Ties with Israel in decline. http://www.haaretz.com/hasen/spages/924972.html; Israel-Vatican Relations & The Fundamental Agreement. http://www.ratzingerfanclub.com/blog/2007/02/israel-vatican-relations-fundamental.html

կարող է և հանուն սեփական շահերի պետք է նույնիսկ որոշակի դերակատարություն ստանձնի արաբա-իսրայելյան հակամարտության կարգավորման գործընթացներում: Մերձավորարևելյան մի շարք արաբական երկրներում, ընդ որում՝ Հայաստանի համար բարեկամական երկրներում, Հայությունն ունի կայացած ու կազմակերպված գաղթօջախներ, որոնք կարող են նպաստավոր գործոններ հանդիսանալ վերոհիշյալ գործընթացում:

Երրորդ: Հայաստանի Հանրապետությունը Երուսաղեմի հետ կապված հիմնախնդիրները պետք է պարբերաբար քննարկումների և խորհրդատվությունների թեմա դարձնի միջազգային հանրության հետ տարբեր մակարդակի շփումներում:

Միջազգային հանրությունն ուշիուշով հետևում է արաբա-իսրայելյան հակամարտությանը և տարածաշրջանում տեղի ունեցող զարգացումներին: Գրեթե ողջ միջազգային հանրության կողմից պաշտպանվող ՄԱԿ 242 (1967թ.) և 338 (1973թ.) բանաձևերն[1] այսօր փոփոխություն չեն կրել և պահպանում են իրենց արդիականությունը: 1991թ. Մադրիդի[2] և դրան հաջորդած մի շարք այլ բանակցային գործընթացները[3] կայացան ՄԱԿ վերոհիշյալ բանաձևերի լույսի ներքո: Արաբա-իսրայելյան հակամարտության կարգավորման գործընթացներում միջնորդական առաքելությամբ բոլորից հաճախ և բավական ազդեցիկ կեցվածքով հանդես է եկել Ամերիկայի Միացյալ Նահանգները: Այսօր էլ ԱՄՆ-ը միջնորդական առաքելություն է իրականացնում, և դատելով երկրի նոր վարչակազմի սկզբունքային դիրքորոշումից ու հետևողական վարքաբանությունից՝ կարելի է ենթադրել, որ բանակ-

[1] United Nations Security Council Resolution. 242.
http://en.wikipedia.org/wiki/United_Nations_Security_Council_Resolution_242
United Nations Security Council Resolution 338.
http://en.wikipedia.org/wiki/UN_Security_Council_Resolution_338

[2] Madrid Conference of 1991. http://en.wikipedia.org/wiki/Madrid_Conference_of_1991

[3] The Oslo Agreement, 1993; Camp David, 2000; Taba, 2001. http://news.bbc.co.uk/2/hi/middle_east/6666393.stm#oslo

ցային գործընթացներում որոշակի բեկում, այնուամենայնիվ, առաջիկայում տեղի կունենա: Այսօր թե՛ ԱՄՆ-ը և թե՛ միջազգային հանրությունը հակամարտության կարգավորման գործընթացում «երկու պետություն երկու ժողովուրդների համար» սկզբունքի հետևողական կողմնակիցներ են:

Թե՛ հակամարտող կողմերը և թե՛ հատկապես միջնորդները ցայսօր մեծ ջանքեր են գործադրել հակամարտության կարգավորման նպատակով: Եվ եթե կողմերը, որքան էլ հոգնած ու ձանձրացած անվերջ պատերազմներից ու բախումներից, այնուամենայնիվ, կառչած են իրենց սկզբունքներից, ապա միջնորդների համար մեծ հաշվով նման սկզբունքներ գոյություն չունեն: Հակամարտության կարգավորման նպատակով նրանք կարող են ընդհուպ ստիպել, ճնշում գործադրել կողմերի վրա՝ զիջումների գնալու: Որդեգրելով բանակցային գործընթացների առանցքը կազմող մի քանի հիմնական սկզբունքային հայեցակետեր՝ նրանք կարող են խիստ լոյալ դիրքորոշում ցուցաբերել մնացած «երկրորդական» հարցերում: Իսկ նման «երկրորդական» վիճակում կարող են հայտնվել հայկական թաղամասը և ընդհանուր առմամբ հայկական շահերը Երուսաղեմում:

Ի դեմս միջազգային հանրության Հայաստանը պետք է ձգտի և կարողանա ձեռք բերել լուրջ ու արժեքավոր դաշնակիցներ: Միջազգային հանրությունը ներկայացնող տարբեր պետություններ, միջազգային կառույցներ ու կազմակերպություններ բազմիցս հանդես են եկել և արտահայտվել ի պաշտպանություն Երուսաղեմի բոլոր սրբատեղիների անվտանգության ամրապնդման, հատուկ կարգավիճակի ու պահպանության երաշխիքների սահմանման, միջազգային վերահսկողության իրականացման և այլն:

Չորրորդ: Հայաստանը և Հայ Առաքելական եկեղեցին պետք է լուրջ աշխատանքներ իրականացնեն ողջ քրիստոնեական աշխարհի՝ խոշոր քրիստոնեական եկեղեցիների և միջազգային քրիստոնեական կազմակերպությունների հետ, քանզի վերջիններս, միջազգային հանրության մաս կազմելով հանդերձ, արաբա-իսրայելյան հա-

կամարտության և Երուսաղեմի հիմնախնդրի կարգավորման հարցում ամենաշահագրգռված կառույցներն են: Քրիստոնեական եկեղեցիների ու ազդեցիկ քրիստոնեական կազմակերպությունների կեցվածքը կարող է վճռորոշ դեր խաղալ միջազգային հանրություն ներկայացնող պետությունների դիրքորոշումներում, մանավանդ եթե այդ կեցվածքը միասնական բնույթ է կրում: Արաբա-իսրայելյան հակամարտության տարբեր փուլերում եղել են այնպիսի իրավիճակներ, երբ Երուսաղեմի երեք հիմնական քրիստոնեական եկեղեցիները հանդես են եկել միասնական դիրքորոշումներով ու տեսակետներով: Այսպես, Քեմփ Դևիդի բանակցությունների ժամանակ, երբ քննարկվում էր Հին քաղաքի բաժանման հարցը, քրիստոնեական համայնքների առաջնորդները հանդես եկան միասնական դիրքորոշմամբ: Վերջիններիս ընդունած հայտարարության մեջ Հին քաղաքի քրիստոնեական և հայկական թաղամասերը նշվում էին որպես մեկ միասնականություն, մեկ ամբողջականություն, որոնք հավատքի, ապրելակերպի, ծիսակատարությունների, ուխտագնացության տեսակետից լրջորեն տարբերվում են թե՛ մուսուլմանական, թե՛ հրեական թաղամասերից:

Որքան էլ քրիստոնեական եկեղեցիները Երուսաղեմում միմյանց հետ ունենան խնդիրներ, վիճաբանություններ, սուր հակասություններ, այնուամենայնիվ, արտաքին վտանգը գրեթե միշտ, հատկապես ներկա իրականության պայմաններում, հանդես է գալիս համախմբող գործոնի դերում: Ոչ Երուսաղեմի կաթոլիկ և ոչ էլ հունաց ուղղափառ եկեղեցու համար նպատակահարմար չէ կտրվել հայկական թաղամասից, հայկական վանքերից ու սրբատեղիներից: Քրիստոնյա ուխտավորի համար բոլոր քրիստոնեական եկեղեցիներին պատկանող սրբատեղիներն ու ուխտատեղիները մեկ ամբողջություն են ներկայացնում, անկախ նրանից, թե կոնկրետ ում են պատկանում: Այդ իսկ պատճառով անթույլատրելի է միմյանցից առանձնացնել, տարանջատել քրիստոնեական համայնքները: Հետևաբար, այս հարցում թե՛ կաթոլիկ, թե՛ ուղղափառ աշխարհը մեզ հետ համակարծիք են ու պոտենցիալ դաշ-

նակիցներ[1]: Հարկավոր է տվյալ ուղղությամբ՝ Մայր Աթոռ Ս.Էջմիածնի առաջնորդությամբ խորապես համակարգված աշխատանք տանել հայոց հոգևոր-մշակութային արժեհամակարգի այս կարևոր մասի պահպանության գործում:

[1] Վատիկանի և Իսրայելի միջև կնքված վերոհիշյալ Համաձայնագրի 4-րդ հոդվածի 1-ին կետով՝ «Իսրայելի պետությունը հաստատում է իր շարունակական պարտավորվածությունը՝ պահպանել և հարգել «ստատուս քվոն» քրիստոնեական Սուրբ վայրերում, որոնց նկատմամբ այն կիրառվում է և դրա համաձայն՝ քրիստոնյա համայնքների համապատասխան իրավունքները: Սուրբ Աթոռը հաստատում է Կաթոլիկ եկեղեցու շարունակական պարտավորվածությունը՝ հարգել վերոհիշյալ «ստատուս քվոն» և նշված իրավունքները»:

ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՐՈՒՍԱՂԵՄՈՒՄ

Իսրայելի Հայագիտական կենտրոնը *(Armenian Studies)* գտնվում է Երուսաղեմում: Այն հիմնել է 1967թ. պրոֆեսոր Մայքլ Սթոունը և գործում է առ այսօր, Հրեական համալսարանին կից: Հայագիտական կենտրոնը հնդկական և իրանական հետազոտությունների բաժնի (դեպարտամենտի) ինքնուրույն ճյուղն է՝ ենթարկվելով հումանիտար ֆակուլտետին կից Ասիական և աֆրիկյան հետազոտությունների ինստիտուտին: Համալսարանում վրացագիտությունը դասավանդվում է հայկական ծրագրի շրջանակներում: Հրեական համալսարանի և նրա Ռոտբերգի դպրոցի *(Rothberg School)* բոլոր ծրագրերը նախատեսված են արտասահմանյան ուսանողների համար:

Մենք մեր ուշադրությունը կենտրոնացրել ենք Հայագիտական կենտրոնի վերջին տասնամյակի գործունեությանը:

2001թ. պրոֆեսոր Մայքլ Սթոունը (Հայագիտական կենտրոնի վարիչ), Հրեական համալսարանի հումանիտար ֆակուլտետի աջակցությամբ, սերտ կապեր հաստատեց Հայաստանի Հանրապետության ակադեմիական հաստատությունների (Երևանի պետական համալսարան և հնագույն ձեռագրերի ինստիտուտ-Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան) հետ: Ռեկտորների մակարդակով ստորագրվեց համագործակցության համաձայնագիր Հրեական համալսարանի և Երևանի պետական համալսարանի միջև՝ ուսանողների և հետազոտությունների անցկացման փորձի փոխանակման վերաբերյալ:

Բացի այդ, համաձայնություն ձեռք բերվեց Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց միաբանության և Հրեական համալսարանի միջև, որը նպաստում և խրախուսում է վանքի հայ հոգևորականությանը շարունակել ուսումը Հրեական համալսարանում:

Իսրայելցի ուսանողները նույնպես հետաքրքրված են հայագիտության տարբեր ճյուղերի ուսումնասիրմամբ: Ուսումնական տարվա ընթացքում, հումանիտար ֆակուլտետի վիճակագրական տվյալների համաձայն, հայկական հետազոտությունների դասընթացներին հաճախում են երկուսից ութ մարդ: Այստեղ սա լավ ցուցանիշ է համարվում: Շնորհիվ տարբեր երկրների բարեկամ-հովանավորների ֆինանսական աջակցության՝ բարձրացել է տարբեր գիտաճյուղերի ուսումնասիրման և դասավանդման մակարդակը: Ուսանողները բավական հագեցած դասընթացներ են անցնում, որոնք արտացոլում են հայոց պատմության, լեզվի, արվեստի և մշակույթի հարստությունն ու բազմազանությունը:

Գիտական աստիճանները

Հայագիտական կենտրոնի շրջանակներում, Հրեական համալսարանի սենատը, ուսման ավարտին և դիպլոմների ու ատենախոսությունների պաշտպանության արդյունքներով, ուսանողներին գիտական աստիճաններ է շնորհում. բակալավր *(BA),* մագիստրոս *(MA)* և դոկտոր *(PhD):* Այն ուսանողներին և ասպիրանտներին, ովքեր սովորում և իրենց հետազոտությունները կատարում են Իսրայելի սահմաններից դուրս, նույնպես թույլ է տրվում ակադեմիական տարվա ընթացքում կարճ ժամանակով գալ Երուսաղեմ՝ ստաժավորման և հետազոտությունների անցկացման: Դոկտորի թեկնածուներն, ըստ ծրագրի, իրավունք ունեն գալ մեկ կամ երկու տարով, որպեսզի իրենց հետազոտություններն անցկացնեն հայկական, հնդկական և իրանական բաժիններում:

Հայկական և վրացական հետազոտությունները գլխավորող դասախոսները

1. Մայքլ Է. Սթոուն, փիլիսոփայության դոկտոր (Հարվարդ), Դ.Լիթ (Մելբուռն) - հայագիտություն (պրոֆեսոր)
2. Սերջիո լա Պորտա, փիլիսոփայության դոկտոր (Հարվարդ) - հայագիտություն (դասախոս)
3. Կոնստանտին Լերներ, գիտության դոկտոր (Թբիլիսի) - վրացագիտություն (պրոֆեսոր)
4. Նիրա Սթոուն, փիլիսոփայության դոկտոր (Հրեական համալսարան) - հայկական միջնադարյան կերպարվեստ (դասախոս):

Մի շարք այլ դասախոսներ ևս Հրեական համալսարանի ուսանողներին առաջարկում են տարբեր դասընթացներ, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն կապված են հայագիտության հետ. օրինակ՝ պատմության, արևելագիտական հետազոտությունների, համեմատական կրոնաբանության և արևելյան քրիստոնեության ուսումնասիրման դասընթացներ:

Վերջին 8 ուսումնական տարում դասավանդել են հետևյալ դասընթացները[1]:

1999-2000 ուսպարում առաջարկված դասընթացները

- Հայաստանի և քրիստոնեական արևելքի արվեստը (դոկտոր Ն.Սթոուն)[2]

[1] Որոշ թեմաների շուրջ դասախոսները հոդվածներ և գրքեր են հրապարակել, որոնք նշվում են տողատակերում:

[2] *N. Stone.* "A Pair of Armenian Manuscript Missals in the Library of Congress," *Revue des Etudes armniennes,* 29 (2003-2004), pp. 193-211; M. E. Stone. "A Reassessment of the Bird and Eustathius Mosaics," in: *The Armenians in Jerusalem and the Holy Land,* eds. M. E. Stone, R. R. Ervine, and N. Stone. Hebrew University Armenian Series 4. Leuven: Peeters, 2002, pp. 203–219.

• Հայերն Օսմանյան կայսրությունում. վաղ շրջան (դոկտոր Ռոբերտա Էրվին)

• Հայ վարքագրություն (Սրբոց կյանքը) (դոկտոր Ռ.Էրվին)

• Սեբեոսի պատմությունը (պրոֆ. Մ.Սթոուն)

• Եզնիկ Կողբացի, «Եղծ աղանդոց» (պրոֆ. Մ.Սթոուն)

• Միջնադարյան հայերենով (գրաբար) գրված տեքստեր (պրոֆ. Մ.Սթոուն)

• Համալսարան-վանքերը միջնադարյան Հայաստանում (դոկտոր Ս. լա Պորտա և պրոֆ. Մ.Սթոուն)

• Սեմինար հայագիտության գծով (պրոֆ. Մ.Սթոուն)

• Տարրական վրացերեն (պրոֆ. Կ.Լերներ)

• Վրաց Սրբոց կյանքը (V-X դդ.) (պրոֆ. Կ.Լերներ)[1]

• Վրաստանի հրեական համայնքի պատմությունը (պրոֆ. Կ.Լերներ)[2]:

2000-2001 ուսուցում առաջարկված դասընթացներ

• Տարրական հին հայերեն (գրաբար) (պրոֆ. Մ.Սթոուն)

• Հայերն արդի ժամանակաշրջանում (XVIII-XXդդ.) (դոկտոր Ռ.Էրվին)

• Հայ արվեստի որոշ հարցերի մասին (դոկտոր Ն.Սթոուն)[3]

• Միջնադարյան հայ պոեզիա (պրոֆ. Մ.Սթոուն)

• Խորացված ժամանակակից հայերեն (դոկտոր Ռ.Էրվին)

• Ժամանակակից հայերեն. տեքստի ընթերցումը և կառուցվածքը (դոկտոր Ռ.Էրվին)

• Հայկական սրբավայրերը և նրանց այցելուները Սուրբ

---

[1] *K. Lerner.* "Georgia, Christian History," in: *The Blackwell Dictionary of Eastern Christianity,* ed. by Ken Parry, Blackwell Publishers 1999, pp. 210-214.

[2] *K. Lerner.* "The Social Status of the Jewish Community in Ancient Georgia," *Central Asia and Caucasus* 2 (Lulea, Sweden 1999), pp. 206-210 (in Russian).

[3] *N. Stone.* "Apocryphal Stories in Armenian Manuscripts," *Publications del'Institut Romand des Sciences Bibliques 1,* Apocryphes armnniens, Actes du colloque international sur la littnrature apocryphe en langue armnnienne (GenՈve, 18–20 septembre 1997), Lausanne: ţditions du ZՈbre, 1999, pp. 161–169.

երկրում մինչև խաչակրաց արշավանքները (պրոֆ.Մ.Սթոուն)

• Ուխտագնացությունը հայ ավանդույթում (դոկտոր Ռ.Էրվին)[1]

• Գրականություն. «հարցուպատասխանը» հայ ավանդույթում (դոկտոր Ռ.Էրվին)[2]

• Խորացված վրացերեն (պրոֆ. Կ.Լերներ)

• Վրաստանի պատմության ներածություն (պրոֆ. Կ.Լերներ)[3]

• Հրեական բանահյուսությունը՝ որպես վրացական պատմագրության աղբյուր (պրոֆ. Կ.Լերներ)[4]:

2001-2002 ուսուցում առաջարկված դասընթացներ

• Հայ վիմագրությունն Իսրայելում և Հայաստանում (պրոֆ. Մ.Սթոուն)[5]

• Ադամը և Եվան հայ ավանդույթում (պրոֆ. Մ.Սթոուն)[6]

• Քրիստոնեությունը Հայաստանում. ծագումը և զարգացումը (դոկտոր Ս. լա Պորտա)

• Հայագիտություն. արդի ուղղվածությունը և հետազոտությունները (դոկտոր Ս. լա Պորտա)

---

[1] *R. Ervine.* "Changes in Armenian Pilgrim Attitudes between 1600 and 1857," in: *The Armenians in Jerusalem and the Holy Land,* eds. M. E. Stone, R. R. Ervine, and N. Stone. Hebrew University Armenian Series 4. Leuven: Peeters, 2002, pp. 81-95.

[2] *R. Ervine.* Vanakan Vardapet's Questions relating to the Pentateuch (forthcoming).

[3] *K. Lerner.* "The Conversion of Kartli (Georgia)," in: *Anatolian and Caucasian Studies,* Cleveland State University (in press).

[4] *K. Lerner.* Problems of Semitic Tradition in Ancient Georgian Culture (forthcoming).

[5] *R. R. Ervine, M. E. Stone.* The Inscriptions and Dedications of the Church of the Holy Archangels in Jerusalem (in press); *R. Ervine.* "Epigraphica Armeniaca Hierosolymitana VII," *Revue des Etudes arméniennes,* 28 (2001-2002), pp. 443-464. Չնայած դոկտոր Ռ.Էրվինը Երուսաղեմում քսան տարի մնալուց հետո արդեն 8 տարի դասավանդում է Նյու Յորքի Սբ Ներսես ճեմարանում, նա շատ կարևոր նյութ է հավաքել Սբ հողի մասին և բազում հետազոտություններ ունի, որոնք վերաբերում են Երուսաղեմի հայերի պատմությանը: Մասնավորապես, նա ուսումնասիրում է պատրիարք Սինաս Ամտեցու օրագրերը ապագա գրքի համար:

[6] *M. E. Stone.* A Concordance of the Armenian Apocryphal Adam Books, Hebrew University Armenian Studies, 1. Peeters, Leuven, 2001; M. E. Stone. *Adamgirk': The Adam Book of Arak'el of Siwnik',* Oxford: Oxford University Press, 2007.

• Գրիգոր Տաթևացու «Գիրք հարցմանց»-ը (դոկտոր Ս. լա Պորտա)[1]

• Արևելյան վանականությունը (դոկտոր Ս. լա Պորտա)[2]

• Հայերենի պատմությունը սկզբից մինչև տասնհինգերորդ հարյուրամյակ (դոկտոր Ս. լա Պորտա)

• Հայ արվեստ (դոկտոր Ն.Սթոուն)[3]:

2003-2008 ուսպարիների դասընթացներն ըստ թեմաների

Լեզու. «Արդի հայ գրական լեզուն սկսնակների համար» (դոկտոր Ս. լա Պորտա): Պատմություն. «Հայկական աղբյուրները հրեաների և Իսրայելի մասին», «Աստվածաշնչյան գրական ավանդույթները հայկական մշակույթում» (պրոֆ. Մ.Սթոուն), «Պատմական աղբյուրները Հայաստանի մասին մինչև խաչակրաց արշավանքները» (դոկտոր Արամ Թոփչյան, Մատենադարան, Երևան), «Հայոց դարձը» (պրոֆ. Ռոբերտ Հյուսեն, ԱՄՆ), «Արևելյան քրիստոնեության աշխարհը» (դոկտոր Ս. լա Պորտա): Գրականություն և արվեստ. «Միջնադարյան Հայաստանի արվեստը» (դոկտոր Ն.Սթոուն): Վրացական հետազոտություններ. «Խոսակցական վրացերեն», «Հրեական բանահյուսությունը՝ որպես վրացական պատմագրության աղբյուր» և «Վրաց ժողովրդի քաղաքական պատմությունը» (պրոֆ. Կ.Լերներ):

---

[1] *S. La Porta.* "Additional Remarks Concerning 'Man as the Image of God' in Grigor Tat'ewac'i's Book of Questions," *St. Nersess Theological Seminary Review,* vol. 7 (2002), pp. 67-84; *S. La Porta, M. Arakelian.* "A Copy of Grigor Tat'ewac'i's Book of Questions: MS 3425 of the Library of the Armenian Patriarchate of Jerusalem," *SION*, vol. 76, nn՛ 7–12 (Jerusalem, 2002), pp. 338–350, ill. 1.

[2] *S. La Porta.* "The Liturgical Imagination of Medieval Armenian Monasticism," in: *Worship Traditions in Armenia and the Neighboring Christian East: An International Symposium in Honor of the 40th Anniversary of St. Nersess Armenian Seminary,* ed. R. R. Ervine, AVANT 3, Crestwood, NY: St. Vladimir's Seminary Press/St. Nersess Armenian Seminary, 2003, pp. 197-221.

[3] *M. E. Stone, N. Stone.* The Armenians: Art, Culture and Religion. Dublin: Chester Beatty Library, 2007.

2004 թվականից Հայագիտական կենտրոնը սկսեց հայագետ մասնագետներ հրավիրել դասախոսություններ կարդալու համար: Օրինակ, պրոֆ. Ռոբերտ Հյուսենը (ԱՄՆ), որը Լեդի Դևիսի հեղինակավոր դրամաշնորհն էր շահել և եկել Երուսաղեմ, դասախոսություններ կարդաց գարնանային ուսումնաշրջանում: Դասախոսությունները նվիրված էին Հայաստանի քրիստոնեացմանը: Այնուհետև, դոկտոր Արամ Թոփչյանը (Երևան, Մատենադարան) եկավ Երևանից՝ շնորհիվ Օրիոն հիմնադրամի (Երուսաղեմ): Նա դասընթաց կարդաց պատմական Հայաստանի հարևան երկրների մասին հայկական պատմական աղբյուրներում առկա տեղեկությունների վերաբերյալ: Պրոֆ. Մ.Սթոունի հետ միասին Արամ Թոփչյանը շարունակում է աշխատել Հայաստանում հրեաների մասին համատեղ նախագծի վրա: Մեկ այլ մասնագետ՝ դոկտոր Գոհար Մուրադյանը, հրավիրվեց Հրեական համալսարանի ուսանողներին ներկայացնելու համար իր հետազոտությունների արդյունքները հնագույն *Physiologus* տեքստի վերաբերյալ, որը հրապարակվեց Երուսաղեմում 2005թ.[1]: Հայագիտական կենտրոնը հետագա տարիներին նույնպես պահպանեց այս ավանդույթը և հրավիրեց գիտնական հայագետներ պրոֆ. Թեո վան Լինտին (Օքսֆորդ), պրոֆ. Յասմին Դում-Թրագուդին (Զալցբուրգ) և այլոց:

Հայագիտական կենտրոնի մագիստրոսի թեկնածուները

Հրեական համալսարանի այս բաժնի պատմության մեջ քիչ են եղել հայագիտության ոլորտի այն ասպիրանտները, որոնք ավարտել են ուսումը և պաշտպանել իրենց աշխատանքները: Նշենք վերջին տասը տարիների այն բոլոր ասպիրանտներին, որոնց Հրեական համալսարանը գիտական աստիճաններ (և *PhD*) է շնորհել: Նարինե

[1] *G. Muradyan.* Physiologus, Hebrew University Armenian Studies, 6. Peeters, Leuven, 2005.

Յակուբյանը (Լոս Անջելես) գրել է «Երուսաղեմի պատրիարք Գրիգոր Շղթայակրի կյանքն ու գործունեությունը» մագիստրոսական աշխատանքը, Յոավ Լոեֆի (Իսրայել) մագիստրոսական ատենախոսությունն էր «Չորս տեքստ հայտնի ամենահին հայկական ձեռագրից. Մատենադարան, N116 (1428թ.)»: Հեղինակը պատրաստվում է այս հետաքրքիր հետազոտության հիմնական մասը տպագրել որպես մենագրություն: Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց վանական միաբանության անդամներ՝ վարդապետ Բագրատ Պուրջիկյանն ավարտել է՝ «Սբ Գրիգոր Վկայասերի (Մարտիրոֆիլ) չհրապարակված քարոզը» մագիստրոսական աշխատանքը, իսկ վարդապետ Էմանուել Ալջանյանը շարունակում է ուսումը Ռոտբերգի դպրոցում և կրոնների ուսումնասիրման վերաբերյալ մագիստրոսական աշխատանք պատրաստում:

Հայագիտական կենտրոնի դոկտորի թեկնածուները

Վերջին տասը տարիներին նրանք ընդամենը երեքն են: Նունե Պողոսյանին փիլիսոփայության դոկտորի կոչում է շնորհվել «Երուսաղեմի հայկական եկեղեցու պատարագային երաժշտությունը» աշխատանքի համար, իսկ Մառլեն Եորդիգյանի դոկտորականի թեման էր «Իսրայել պետության և Հայոց պատրիարքարանի հարաբերությունները 1948-1967թթ.»[1]: Միքայել Առաքելյանը պրոֆեսիոնալ նկարիչ է և արվեստի պատմաբան: 2004թ. թեկնածուական թեզ է պաշտպանել Հայաստանի Հանրապետության Գիտությունների Ազգային Ակադեմիայի Արվեստի ինստիտուտում «Մանրանկարիչ Մեսրոպ Խիզանցու պատկերազարդ Ավետարանները (XVIIդ. առաջին կես)» թեմայով: Նույն թվականին ընդունվել է Հրեական համալսարանի դոկտորանտուրա, որն ավարտել է 2009թ.: Նրա դոկտորական ատենախոսությու-

[1] Ն.Պողոսյանը և Մ.Եորդիգյանը Իսրայելի քաղաքացիներ են:

նը նվիրված է ուշ շրջանի հայ մանրանկարչությանը: Թեմայի անվանումն է՝ «Հայ մանրանկարչության Նոր Ջուղայի դպրոցը. հինկտակարանային և նորկտակարանային ցիկլերը չորս Ավետարաններում (1607-1660թթ.)»[1]: Աշխատանքը մոտենում է ավարտին և պետք է ներկայացվի Հրեական համալսարանի սենատի քննարկմանը 2009-ի ավարտին կամ 2010թ. սկզբին:

Հայագիտական կենտրոնի բարեկամներն ու հովանավորները

1. Մեկենասներ Սեմ և Մեյ Ռուդինների կրթաթոշակը *(The Sam and May Rudin Foundation Fellowships)* նշանակվում է Հրեական համալսարանում Սրբոց Հակոբյանց վանքի հայ հոգևորականների ուսուցման ծախսերը հոգալու համար: 2003-2009թթ. հինգ հոգևորական կրթաթոշակ էին ստանում այդ հիմնադրամից: Նրանք բոլորն էլ սովորել և շարունակում են սովորել ակադեմիական ուսուցման տարբեր փուլերում (բակալավրիատ և մագիստրատուրա):

2. «Գրիգոր Մոմջյան» կրթաթոշակը նշանակվել է երուսաղեմցի Մոմջյան ընտանիքի կողմից (Ցոլակ, Ալեգրա և նրանց զավակները՝ Հակոբ, Ալբերտ և Մոնիկա), հայ աշխարհիկ միջնակարգ Սրբոց Թարգմանչաց վարժարանի դիպլոմակիր շրջանավարտների համար, որպեսզի նրանք հնարավորություն ունենան ուսումը շարունակելու Հրեական համալսարանում: Բոլոր թոշակառուները պետք է ուսման ընթացքում (5 տարի) հայագիտական տարբեր դասընթացներ անցնեն՝ որպես իրենց համալսարանական ուսման մի մաս:

3. Ջեկ Ռուդինի կրթաթոշակը *(The Jack Rudin Fellowships)* սահմանել է պրն Ջեկ Ռուդինը (Նյու Յորք), որպեսզի օգտակար լինի Երուսաղեմի Հայոց պատրիարքության Ժառանգավորաց վարժարանը և ընծայարանն ավարտած սարկավագներին, որոնք ցանկություն են հայտնում

[1] Մ.Առաքելյանն աշխատում է Մատենադարանում (Երևան)՝ որպես ավագ գիտաշխատող:

ուսումը շարունակել հայագիտության ոլորտում նույն՝ Հրեական համալսարանում: Կրթաթոշակը հատկացվում է երիտասարդ սարկավագների գիտական ուսուցումը խորացնելու նպատակով, որոնք հետագայում կկարողանան իրենց գիտելիքներով օգտակար լինել Հայ Առաքելական եկեղեցում սպասավորելու համար:

Երեք հիմնադրամներն էլ պաշտոնապես հաստատվել են Հրեական համալսարանի նախագահ պրն Մենահեմ Մագիդորի կողմից: Նրանց ցուցաբերած ֆինանսական օժանդակությունը խթանում է Հայագիտական կենտրոնի զարգացումը, որը, իր հերթին, նպաստում է ուսանողների կրթական մակարդակի բարձրացմանը, ինչը կօգնի նրանց իրենց ավանդն ունենալ հայ ժողովրդի մտավոր, պատմական և գեղարվեստական ժառանգության ուսումնասիրություններում:

Հեռանկարները

Չնայած Երուսաղեմի Հայագիտական կենտրոնի ակտիվ գործունեությանը՝ գոյություն ունեն մի շարք խնդիրներ, որոնց կանդրադառնանք հակիրճ: Երկու տարի առաջ պրոֆ. Մայքլ Սթոունը (Երուսաղեմի Հրեական համալսարանի հայկական հետազոտությունների կենտրոնի ղեկավար) թոշակի անցավ: Եվ 2006-2007 ուստարում Հայագիտական կենտրոնի ղեկավարությունը հանձնվեց դոկտոր Սերջիո լա Պորտային՝ հայ միջնադարյան աստվածաբանության, պատմության, գրաբարի, ինչպես նաև Երուսաղեմում հայերի դերի (գերազանցապես միջնադարում) ուսումնասիրման գծով մասնագետին: Ներկա պահին հայագիտության բաժինը գտնվում է փակման վտանգի առջև այն պատճառով, որ Հրեական համալսարանի ղեկավարությունը անհրաժեշտ միջոցներ չի հատկացրել (ինչպես մշտապես արվել է վերջին քառասուն տարիների ընթացքում) հայագիտական հետազոտությունների համար անհրաժեշտ ծախսերը հոգալու համար: Ֆինանսական ճգնաժամը հարվածել է նաև համալսարանի այլ ֆակուլտետներին: Անորոշության մթնոլորտում

դոկտոր Ս. լա Պորտան հրավիրվեց Ֆրեզնո քաղաքի (Կալիֆորնիայի նահանգ)՝ համալսարան՝ 2009-2010 ուստարում հայագիտության ամբիոնում դասավանդելու համար: Եթե նա անգամ վերադառնա Երուսաղեմ, դա ամենևին էլ չի նշանակի, թե խնդիրը դրական լուծում է ստացել: Համալսարանի ղեկավարությունը ձևականորեն դեռ պահպանում է հայագիտության կարգավիճակն իր ուսումնական հաստատության պատերի ներսում, բայց եթե շահագրգիռ անձանց չհաջողվի ֆինանսներ և նոր մասնագետներ ձեռք բերել, ապա ամենայն հավանականությամբ հաջորդ ուստարվանից հայագիտությունը Երուսաղեմում այլևս գոյություն չի ունենա: Վերոնշյալ մեկենասները պատրաստ են շարունակել թոշակների հատկացումը ուսանողներին, բայց ո՞վ միջոցներ կտրամադրի Հայագիտական կենտրոնը պահելու համար: Խնդիրը կարող է լուծվել միայն Հայաստանի կառավարության օգնությամբ:

Աշխարհում Հայաստանից բացի ընդամենը մի քանի խոշոր հայագիտական կենտրոններ կան: Ցավոք, դրանք աստիճանաբար նվազում են և անհետանալու եզրին են գտնվում: Երուսաղեմն իր հայկական թաղամասով եղել և մնում է կարևոր հոգևոր և պատմական վայր Հայաստանի ու Հայության համար և մենք, ի հեճուկս ամեն ինչի, պետք է պահպանենք ոչ միայն հայագիտությունը, այլ նաև մեր ներկայությունը Սուրբ քաղաքի հայկական թաղամասում: Այս խնդրի լուծման համար այդ թվում նաև անհրաժեշտ է ջանքեր գործադրել պահպանելու հայագիտական հետազոտությունների և կրթության հնարավորությունը Երուսաղեմում, ինչը կնպաստի հայկական թաղամասի ազգային-քրիստոնեական նշանակության պահպանմանը և հարատևմանը:

ՀԱՅԵՐԸ ԵՎ ՀՐԵԱՆԵՐԸ XXդ.-XXIդ. ՍԿԶԲԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ՃԱԿԱՏԱԳՐԵՐԻ ԶՈՒԳԱՀԵՌՆԵՐ

XXդ. - XXI դարասկիզբ ընկած ժամանակաշրջանում աշխարհի քաղաքական քարտեզին ի հայտ եկան ավելի քան հարյուր նորանկախ պետություն: Ընդ որում՝ ազգային ինքնիշխանություն ձեռք բերեցին ոչ միայն այն ժողովուրդները, որոնք երբեք սեփական պետականություն չէին ունեցել (ֆիններ, ուկրաինացիներ և այլն), այնպես էլ նրանք, որոնք իրենց անկախ քաղաքական կարգավիճակը կորցրել էին համեմատաբար ոչ հեռավոր պատմական անցյալում (իռլանդացիներ, լեհեր): Հրեական և հայկական պետությունների դեպքում էլ ազգային պետականությունը վերականգնել են ժողովուրդներ, որոնք քաղաքական ինքնիշխանությունը կորցրել էին շատ հարյուրամյակներ առաջ (Հասմոնյանների Հրեից թագավորությունը հռոմեացիների իշխանության տակ անցավ մ.թ.ա. 63թ., Կիլիկիայի Հայկական թագավորությունը համաշխարհային պատմության ասպարեզից հեռացավ 1375թ.՝ մամլուքների ներխուժումների հետևանքով): Երկու ժողովուրդներն էլ կարողացան վերածնվել քաղաքական առումով՝ չնայած XX դարի առաջին կեսին նրանց իսպառ վերացնելու փորձերին:

Քաղաքական մի քանի հարյուրամյա մոռացումից հետո հրեական և հայկական պետականությունների վերածնման ֆենոմենն իր վրա է հրավիրում պատմաբանների, ազգագրագետների, քաղաքագետների, ինչպես նաև հումանիտար ուղղության այլ մասնագետների անընդհատ աճող ուշադրությունը: Հարկ է նշել, որ տարբերու-

թյուններով հանդերձ, այս երկու ժողովուրդների ընդհանրությունը միայն XXդ. քաղաքական ինքնիշխանության վերականգնմամբ չի սպառվում. բազմաթիվ ընդհանրություններ կան պատմական, մշակութային, կրոնական և քաղաքական երևույթներում: Հոդվածում փորձ է արվում ի հայտ բերելու և համադրելու XXդ. - XXIդ. սկզբին հրեաների և հայերի քաղաքական ճակատագրերի հիմնական «վեկտորները»:

Ակնհայտ է, որ հայ և հրեա ժողովուրդների պատմական անցյալում ընդհանուր շատ գծեր են նկատվում: Հայերը և հրեաները երկար ժամանակ իրենց հանդեպ թշնամաբար տրամադրված ժողովուրդների մեջ ապրել են որպես էթնոկրոնական փոքրամասնություն: Ընդ որում՝ հարկ է նշել, որ կրոնը հսկայական ազդեցություն է գործել ինչպես հրեական, այնպես էլ հայկական ազգային ինքնագիտակցության զարգացման վրա: Հրեական ազգային միասնության բանաձևը տվել է փիլիսոփա Փիլոն Ալեքսանդրիացին. մեկ կրոն՝ հուդայականություն, մեկ օրենք՝ Մովսեսինը, մեկ քաղաք՝ Երուսաղեմ: Ավելի ուշ Պաղեստին/Էրեց կորսված երկիրը փոխարինվեց Գիրք գրոցով՝ մի ինքնատիպ «շարժական կենտրոնով», որը շաղախում էր ազգային միասնությունը ժամանակից ու տարածությունից դուրս: Ինչպես նշում է ֆրանս-իսրայելական կաթոլիկ փիլիսոփա և աստվածաբան Մարսել Դյուբուան, «հրեությունը ոչ խառնուրդ է, ոչ էլ համաձուլվածք, այլ անկրկնելի էություն՝ կապված երկու բևեռներով՝ կրոնով և ազգով[1]»:

Իեհուդի սկզբնական անվանումը (հրեաների անվանումը եբրայերենում) վերաբերում էր Իեհուդիի սերունդներին, հետագայում՝ Հրեից թագավորության բնակիչներին՝ անկախ ցեղային պատկանելությունից: Իսրայելական թագավորության անկումից հետո իեհուդի անվանումը

[1] *Марсель Дюбуа,* «Церковь и евреи», в книге «Евреи и XX век», под ред. Эли Барнави и Саула Фридлендера, Москва: издательство «Текст», 2004 г., стр. 292.

կորցրեց առանձնահատուկ կապը Հուդայական թագավորության հետ և վերածվեց տերմինի, որը նշանակում էր ազգային-կրոնական պատկանելություն՝ որևէ տարածքի կամ ցեղային սահմանների հետ կապից դուրս: Պաղեստին/Էրեցի եբրայերենով խոսող հրեաները սովորաբար իրենց Իսրայել էին անվանում, և այդ տերմինն աստիճանաբար գրեթե ամբողջությամբ դուրս մղեց մյուս բոլոր անվանումները:

Բիբլիական շրջանում հրեա էր համարվում ամեն ոք, ով պատկանում էր հրեական ազգային-կրոնական հանրույթին, անգամ եթե իսրայելցիների ոչ մի սերնդի չէր պատկանում: Դրությունն էապես փոխվեց բաբելական գերությունից վերադարձից հետո (մ.թ.ա. 538թ.): Իսրայելական, իսկ հետո նաև Հուդայական թագավորության անկումն ուղեկցվում էր զավթիչների կողմից հրեա բնակչության մի մասի բռնի տեղահանությամբ և Պաղեստին/Էրեց-Իսրայելում վերաբնակեցմամբ: Դրա հետևանքը հանդիսացան խառնամուսնությունները (որոնք սպառնում էին հրեա ժողովրդի՝ որպես ինքնուրույն էթնիկ հանրության, գոյությանը) և երկրում մնացած հրեաների ազգային-կրոնական գիտակցության թուլացումը: Ի հակադրություն այն հրեաների, որոնք աքսորի ժամանակ մնացել էին Պաղեստին/Էրեց-Իսրայելում, բաբելական գերությունից վերադարձած հրեաները սուր ազգային-կրոնական ինքնագիտակցություն ունեին: Երկյուղելով այն բանից, որ Բաբելոնից վերադարձած հրեաների մեջ ևս կթուլանա ազգային-կրոնական ինքնագիտակցությունը, Էզրան տեղի այն հրեաներից, ովքեր ցանկանում էին պահպանել հավատարմությունը հրեությանը, պահանջեց բաժանվել օտարացեղ կանանցից, քանի որ, նրա կարծիքով, խառնամուսնությունները հուդայականությունից հեռանալու գործոններից մեկն էին: Համայնքին պատկանելությունն այժմ որոշվում էր, առաջին հերթին, կրոնական չափանիշով, և համայնքն իր անդամներ էր համարում միայն նրանց, ովքեր կրոնական պարտականություններ էին ստանձնում: Էզրայի և Նեհեմիայի մտցրած կրոնական չափանիշը հանգեցրեց նրան, որ հրեաներն առանձնացան հեթանոս աշխարհից:

Հայ ազգային ինքնագիտակցությունը որոշակիորեն նույնպես հարաբերակցվում է այս մոդելի հետ: XXդ. առաջին կեսին հայ գիտական և գրական շրջանակներում լայնորեն տարածվեց այն տեսակետը, թե հայերն առաջին հերթին եղել և մնում են դավանական հանրություն: Հայ պատմաբան Ն.Ադոնցի կարծիքով, կրոնը հայ ազգային ինքնագիտակցության որոշիչ գործոնն է[1]: 301թ. քրիստոնեության ընդունումից հետո հենց Հայ Առաքելական եկեղեցին է դառնում միակ միավորիչ ուժը, հայ էթնոսի ինքնապահպանման և զարգացման առավել գործուն միջոցը սկզբում Իրանի, իսկ հետո՝ Բյուզանդիայի մշակութային և քաղաքական ծավալապաշտության պայմաններում: Էթնոպաշտպանիչ այս գործառույթը հայկական եկեղեցին կատարեց նաև հետագայում, ինչպես Հայաստանում, այնպես էլ նրա սահմաններից դուրս՝ հանդես գալով որպես բացակա պետության տեսանելի հոգի, ինչպես պատկերավոր կերպով արտահայտվել է Կոստանդնուպոլսի նախկին պատրիարք Մաղաքիա Օրմանյանը[2]: XXդ. եկեղեցին շարունակում էր կարևոր կապող օղակ հանդիսանալ Մերձավոր և Միջին Արևելքի երկրներով սփռված հայ համայնքների միջև: Հարյուրամյակներ շարունակ կրոնը հսկայական ազդեցություն է գործել հայ հանրության կյանքի բոլոր կողմերի վրա. ակնհայտ է, որ այդօրինակ դեր է կատարել հուդայականությունը: «Իսրայելի Աստծո և Նրա Թորայի» հավատը գրեթե երկու հազարամյակ շաղախել է հրեա ժողովրդին, չնայած նրա սփռվածությանը տարբեր երկրներում ու աշխարհամասերում:

XXդ. սկզբին հայերի մեծամասնությունն ապրում էր իր հայրենիքում՝ Արևելյան Հայաստանում և Արևմտյան Հայաստանում (մինչև

---

[1] *Նիկողայոս Ադոնց,* «Քաղաքական հոսանքները հին Հայաստանում», Փարիզ, 1948, էջ 11:

[2] *Магакия Орманян,* «Армянская церковь. Ее история, учение, управление, внутренний строй, литургия, литература, ее настоящее», Москва, 1993, стр. 191.

Մեծ Եղեռնը Օսմանյան կայսրությունում հայերի 70%-ն ապրում էր Արևմտյան Հայաստանում և Հայկական Կիլիկիայում) և, այն դեպքում, երբ հրեաների մեծամասնությունն[1] ապրում էր Պաղեստինի սահմաններից դուրս:

Երկու ժողովուրդների պատմության շրջադարձային կետեր հանդիսացան 1915թ. Հայոց ցեղասպանությունը և հրեաների Հոլոքոստը (հիմնականում 1942-1945թթ.), որոնք կանխորոշեցին նրանց հետագա պատմական զարգացման ողջ ընթացքը XX դարում: Առաջին համաշխարհային պատերազմի սկզբից օսմանյան կառավարությունը ձեռնամուխ եղավ արևմտահայության՝ կանխամտածված և նախորդ տարիներին մասամբ փորձարկված բնաջնջման ծրագրին՝ որպես քաղաքական, տնտեսական և այլ նպատակներին հասնելու առավել արդյունավետ միջոցի[2]: Ցեղասպանության սկիզբը հանդիսացավ արդեն 1915թ. փետրվարին թուրքական բանակ զորակոչված բոլոր հայերի ոչնչացումը, իսկ ապրիլի 24-ին և հաջորդ օրերին Կոստանդնուպոլսում և Արևմտյան Հայաստանի քաղաքներում ձերբակալվեցին և բռնագաղթի ճանապարհին սպանվեցին հայ մտավորականության ավելի քան 800 ականավոր ներկայացուցիչներ: 1915թ. մայիսին արդեն Օսմանյան կայսրության ամբողջ տարածքում սկսվեց զանգվածային տեղահանությունը, որի ընթացքում, իսկ հետո՝ նաև Միջագետքի ու Սիրիայի անապատների համակենտրոնացման ճամբարներում ոչնչացվեց մեկուկես միլիոն հայ:

Ակնհայտ է նմանությունը Հայոց ցեղասպանության և եվրոպական հրեության Հոլոքոստի միջև: Երկրորդ աշխարհամարտի ժամանակ Հոլոքոստի ընթացքում սպանվեց վեց միլիոն հրեա, ընդ որում՝ խոսքը

---

[1] XX դարասկզբին ինչպես Պաղեստինի ոչ մեծ հրեական համայնքը, այնպես էլ արևմտահայերն ունեին միլլեթների կարգավիճակ՝ անկման եզրին գտնվող Օսմանյան կայսրության տիրապետության տակ (Yair Oron, ,*The Banality of Indifference*ե. Jerusalem, The Jerusalem Institute for Israel Studies, 1999, p.8.):

[2] *Dadrian V. N.,* “The History of the Armenian Genocide. Ethnic Conflict from the Balkans to Anatolia and to the Cacucasus”. Providence – Oxford, Berghahn Books, 1995, p. 18.

նացիստների կողմից ոչ միայն Գերմանիայի, այլ նաև նրանց գրաված բոլոր երկրների հրեա բնակչության ոչնչացման հենց պլանաչափ փորձի մասին է:

Այս ժողովուրդների համար ցեղասպանությունը և աքսորը ազգային աղետ էին նշանակում, որը հանգեցնում էր նրանց պատմական զարգացման բնական ընթացքի խաթարման: Այս ժողովուրդները գիտակցում են տեղի ունեցածի բացառիկությունը, և դրա վկայությունն է այն փաստը, որ նրանք համապատասխան տերմիններ ունեն: Այսպես, *գալութ* (գաղութ) տերմինը, որն օգտագործվում է աշխարհի՝ տարբեր լեզուներով խոսող ամենատարբեր հրեական համայնքներում, խիստ արտահայտված բացասական նշանակություն ունի: Այն ավանդաբար նշանակում է նաև և՛ «ծանր, տանջալի կյանք», և՛ «ստրկական վիճակ»... *Գալութ* տերմինի սկզբնական նշանակությունն («աքսոր») արտահայտում է հենց հրեաների պատկերացումները սփյուռքի՝ որպես բռնի և ողբերգական իրողության մասին: Նույն տերմինը, արամեերենից փոխառված, հնում օգտագործվել է հայերենում՝ հայկական արտասահման, հայ տարագիրներ և այլն նշելու համար[1]: Նման տերմինի անհրաժեշտությունը պետք է առաջանար միայն 1915թ. ցեղասպանությունից հետո: Եվ արդեն սկսած 1920-ական թթ. արտասահմանյան հայ տարբեր պարբերականներում, նոր պատմական իրողությունն արտահայտելու համար, սկսում է օգտագործվել *սփյուռք*[2] տերմինը՝ որպես «դիասպորա» տերմինի համարժեք:

Հրեական և հայ ժողովուրդների կյանքում պատմական ողբերգությունների նմանությամբ հանդերձ՝ բռնի աքսոր, որի հետևանքով սփռվել են հայրենիքից (Հայոց ցեղասպանության ժամանակ տեղի ունեցած բռնագաղթը հեռավոր կերպով համեմատելի է նաև հրեա ժողովր-

---

[1] *Հր. Աճառյան.* Հայերեն արմատական բառարան, հ.I, Երևան, 1971, էջ 505:

[2] Բառը ծագումով պատկանում է հնդեվրոպական բառապաշարին և հանդիպում է միջնադարյան հայ գրականության մեջ (*Հր. Աճառյան.* Հայերեն արմատական բառարան, հ.IV, Երևան, 1979, էջ 287):

դի պատմության մեկ այլ ողբերգական իրադարձության՝ մ.թ. Ի դ. Պաղեստինից ելքի հետ) դուրս, գիտակցության (զոհի կարգավիճակ) և լեզվի մեջ այդ ամենի միանման արտացոլում և այլն, կա նաև մի շատ կարևոր տարբերություն[1]. մինչև Իսրայելի պետության վերստեղծումը որևէ այլ պետական կազմավորում հրեաները XX դարում չեն ունեցել, այն դեպքում, երբ սկսած 1918թ. նախկին Արևելյան Հայաստանի տարածքի մի մասում հաջորդաբար գոյություն են ունեցել Հայաստանի առաջին, երկրորդ (խորհրդային), իսկ այժմ՝ նաև երրորդ հանրապետությունները[2]:

Այս ամենի հանրագումարը հնարավորություն է տալիս ասելու, որ հրեական և հայկական հասարակական-քաղաքական փորձի համեմատությունը ոչ միայն հնարավոր է, այլև արդարացված:

Հրեա և հայ փոքրամասնությունների էթնոմշակութային ինքնության պահպանմանն ուղղված միջոցների նմանությամբ հանդերձ՝ դրանք բոլորն էլ քաղաքականացված բնույթ էին կրում՝ պայմանավորված սփյուռքի կազմավորման հանգամանքներով: Այս իմաստով հայկական սփյուռքի պատմությունն անքակտելիորեն կապված է այն մշտական աշխատանքի հետ, որն ուղղված է այն բանին, որ համաշխարհային հանրությունը, և առաջին հերթին՝ Թուրքիան, ճանաչի Օսմանյան կայսրությունում իրականացված Հայոց ցեղասպանությունը, պատմական հայրենիք վերադառնալու և այնտեղ ինքնիշխան պետականություն վերստեղծելու հայերի իրավունքները: Ինչպես հայտնի է, նման նպատակներ (և հաջողությամբ) էր հետապնդում սիոնիզմը՝ XXդ. ամենահզոր հրեական քաղաքական հոսանքը:

---

[1] Օսմանյան կայսրությունում երիտթուրք իշխանությունների կողմից իրագործված ցեղասպանության զոհ հայերը դարձան իրենց բուն հայրենիքում (խմբ.):

[2] Տե՛ս *Э.Мелконян,* «Диаспора в системе этнических меньшинств» // «Диаспоры», Москва, N 1-2, 2000, стр. 22):

Սփյուռքում կյանքի առանցքային տարրերից մեկը կապն է հայրենիքի հետ (հրեաների դեպքում՝ Իսրայել պետության հետ): Հրեաների կողքին, սփյուռքյան այլ հանրույթներ նույնպես՝ չինացիներ, կուբացիներ, հնդիկներ, կապեր են պահպանում իրենց հայրենիքի հետ: Այս առումով նրանք լրիվ համեմատելի են հրեական սփյուռքի հետ: Սակայն թվարկված խմբերից և ոչ մեկը երբեք չի գտնվել ոչ միայն իր հայրենիքի ճակատագրի, այլ նաև իր հարյուր հազարավոր և անգամ միլիոնավոր ազգակիցների կյանքի համար մշտական վախի ճնշման տակ: Այո, լեհերն ու բալկանյան ալբանացիները կորցրել էին իրենց երկրների անկախությունը, բայց իրենց արյունակից եղբայրները ողջ ու առողջ են մնացել: 1795 և 1918թթ. միջև և նույնիսկ ավելի ողբերգական 1939-1944թթ., երբ Լեհաստանը դադարեց գոյություն ունենալ որպես ինքնիշխան պետություն, լեհերի մեծամասնության կյանքը պատերազմից հետո շարունակվեց: Իսկ հրեաներն այդ տարիներին ամենուրեք ոչնչացվում էին միայն իրենց ազգային պատկանելության պատճառով: 1948թ. հետո կրկին ստեղծված հրեական պետությունը հայտնվեց արաբական երկրների հետ շարունակական հակամարտության վիճակում, ինչը կարգավորված չէ առ այսօր և շարունակում է որոշակի ազդեցություն գործել իսրայելյան հասարակական կյանքի գրեթե բոլոր կողմերի վրա՝ սփյուռքյան հրեաներին մշտական անհանգստանալու տեղիք տալով:

Այս իրավիճակը միանգամայն համեմատելի է հայերի սփռման պատմության հետ: 1375թ. Կիլիկյան թագավորության անկումից և պետության կորստից հետո հայերը դարերի ընթացքում Հայաստանի՝ նվաճողների միջև բաժանվածության պայմաններում դարձան թշնամանքի պարբերական բռնկումների թիրախ: Նրանց մի մասը ստիպված էր փոխել իր բնակության վայրը: Այդ դաժան իրողությունն ավելի սաստկացավ Հայոց ցեղասպանության հետևանքով:

1991թ. Հայաստանի Հանրապետության անկախության ձեռքբերումը նշանավորվեց Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանից անկախ հայտարա-

րած պայքարով: Ադրբեջանին սատարեց Թուրքիան, ինչը հանգեցրեց Հայաստանի հետ հարաբերությունների կտրուկ վատթարացմանը:

Այս հանգամանքներում հայկական սփյուռքը (հատկապես Ֆրանսիայում և ԱՄՆ-ում) մեծ ջանքեր չգործադրեց միջազգային մակարդակով այդ խնդիրները լուծելու համար, ինչը միանգամայն համեմատելի է ԱՄՆ հրեական համայնքի՝ Կոնգրեսում Իսրայելի ազգային շահերն առաջ մղելու ջանքերի հետ:

Նշված հանգամանքների բերումով և՛ հրեաները, և՛ հայերը սփյուռքում հայրենիքի հետ կապված ինքնատիպ ազգայնականության կրողներ են հանդիսանում, ինչը չես ասի չինացիների և աֆրոամերիկացիների մասին[1]: Այլ կերպ ասած՝ վերջինները հայրենիքի հետ կապված հատուկ քաղաքական ոչ մի օրակարգ չունեն, ինչպես, օրինակ, ԱՄՆ-ում ապրող լեհերն ու իռլանդացիները (թեև, հնարավոր է, լեհական սփյուռքից ինչ-որ մեկը ակտիվություն հանդես բերի՝ փորձելով օգնել 1918թ. լեհական պետականության վերականգնմանը, իսկ իռլանդացին՝ աջակցի Իռլանդիայի հանրապետական բանակին): Նրանցից ոչ մեկը հիմք չունի անհանգստանալու տարածքային հիմքի վրա իրենց հայրենիքի գոյության համար: Այո, ԽՍՀՄ փլուզումից հետո աշխարհի քարտեզին ի հայտ եկավ անկախ Հայաստանի Հանրապետությունը, իսկ 1948-ից գոյություն ունի Իսրայել պետությունը: Սակայն հրեաների և հայերի շահերին իրենց սեփական տարածքներում կարող են հեշտությամբ դավաճանել հանուն մերձավորարևելյան կամ կասպյան նավթի: Երկու հանրույթների անդամները չեն շտապում հայրենիք վերադառնալ, քանի որ վստահ չեն, որ դրանք անվտանգ են և կայուն: Այստեղից էլ հրեաների շարունակվող արտագաղթը Իսրայելից (երիդա). ավելի քան 600 հազար մարդ հեռացել է պետությունը հիմնվելուց հետո: Հեռանում են նաև հայերը Հայաստանի Հանրապետությունից, որը դրա հետևանքով կորցրել

[1] *Уильям Сафран,* «Сравнительный анализ диаспор» // «Диаспоры», Москва, №1, 2005, стр.112.

է իր բնակչության ավելի քան մեկ քառորդը: Ներկայումս աշխարհի հրեաների մոտ 60%-ն ապրում է Իսրայել պետության սահմաններից դուրս (ներկա պահին աշխարհում մոտավորապես տասներեք միլիոն հրեա կա, որոնցից 5,7 մլն-ն ապրում է Իսրայելում[1]): Ճիշտ նույն կերպ տասը միլիոն հայերի երկու երրորդն ապրում է Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս:

Նշելով հրեական և հայկական սփյուռքի նմանությունը հայրենի երկրների հետ փոխհարաբերությունների հաստատման հարցում՝ պետք է ուշադրություն դարձնել միայն հրեական սփյուռքին հատուկ բնութագրական գծերից մեկին: Խոսքը հայրենիքի և սփյուռքի փոխկախյալության մասին է: Հրեական սփյուռքը Իսրայելը համարում է որպես հին հրեական մշակույթի պահեստարան: Իսկ վերջինս, հանձինս իր քաղաքական և կրթական կառույցների, ջանում է արդարացնել այդ ակնկալիքները[2], ինչպես նաև սփյուռքից տնտեսական և քաղաքական օգնություն է սպասում: Նույն կերպ Հայաստանի Հանրապետությունում մեծ հույսեր են կապում ԱՄՆ-ում, Ֆրանսիայում և այլ երկրներում ապրող հայրենակիցների հետ:

Հայկական և հրեական սփյուռքի համեմատության ժամանակ հետաքրքիր է թվում այնպիսի մի փաստ, ինչպիսին է երկու ժողովուրդների համար նվիրական նշանակություն ունեցող խորհրդանիշերի «արտատարածայնությունը»: Այնպես, ինչպես հայերի սուրբ լեռը՝ Արարատն է գտնվում Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս, այդպես էլ Թորայի (Սինայ լեռ) ընծայման վայրը և Մովսեսի գերեզ-

---

[1] *Джордж Стейнберг,* «Исследование еврейской демографии: через тридцать лет большинство евреев будут жить в Израиле» // JTA, 13 февраля 2002 года; переведена на русский язык в книге: «Герцль: личность и деятельность. Сионистская мечта и ее воплощение». Под ред. М. Плэна. Иерусалим, 2004, стр. 59-60.

[2] *Уильям Сафран,* «Сравнительный анализ диаспор» // «Диаспоры» (Москва), N4, 2004, стр.155.

մանն (Նեբո լեռ) են գտնվում Իսրայելի սահմաններից դուրս՝ համապատասխանաբար Եգիպտոսում և Հորդանանում: Արդյո՞ք սա նշանակում է, թե հայերի և հրեաների ազգային գիտակցության համար սրբազան այս վայրերը գտնվում են իրենց «հոգևոր հայրենիքի» սահմաններից դուրս: Կարծում ենք՝ ոչ[1]:

Դիտարկվող թեմայի համատեքստում կարևոր է թվում Իսրայելի և Հայաստանի փոխհարաբերությունների հարցը XXդ. վերջին-XXIդ. սկզբին: 1990-ական թթ. ընթացքում հայ-իսրայելական հարաբերությունները սաղմնային վիճակում էին: Իսրայելի հետ կապերի հաստատման առաջին լուրջ փորձը Հայաստանի Հանրապետությունն արեց 1999թ. մայիսին: Այդ ժամանակ Հայաստանի մայրաքաղաքում տեղի ունեցավ երկու երկրների արտաքին քաղաքական գերատեսչությունների ներկայացուցիչների բանակցությունների առաջին ռաունդը, ինչը խիստ զայրացրեց Անկարային և Թեհրանին: Չնայած իրանցի գործընկերների հակազդեցությանը, 2000թ. հունվարին Հայաստանի նախագահն այցելեց հրեական պետություն: Այցի շրջանակներում տեղի ունեցան Ռոբերտ Քոչարյանի հանդիպումները Իսրայելի իշխանության գործադիր և օրենսդրական մարմինների ղեկավարների հետ: Սակայն հետագայում երկկողմ հարաբերությունների զարգացումը դադարեցվեց «Ալ-Աքսայի» ինթիֆադայի պատճառով, որն սկսվեց նույն թվականի աշնանը: Հակամարտության գոտու իրադարձությունների լուսաբանումը հայկական լրատվամիջոցներում հաճախ բացահայտ հակաիսրայելյան բնույթ էր կրում: Դա տեղի էր ունենում ինչպես հանրապետության գործարար շրջանակներում իրանամետ լոբբիի ազդեցությամբ, այնպես էլ Հորդանան գետի արևմտյան ափին գտնվող հայկական եկեղեցու շինությունների

[1] *Алек Эпштейн, Дмитрий Саноян*, «Родины слышат, Родины знают? Штрихи к портрету “человека диаспоры”» // «Вести» - общественно-политическое приложение (Израиль), 12 мая 2005, стр. 2021.

տեղակայման շրջանում իսրայելական զորքերի գործողությունների հետևանքով[1]: 2002թ. նոյեմբերին Իսրայել այցելեց Հայաստանի փոխարտգործնախարար Ռուբեն Շուգարյանը: Հաջորդ տարի, ռուս լրագրողների հետ զրուցելիս, նա հայտարարել էր. «Կան խնդիրներ, որոնք ժամանակ առ ժամանակ մեզ մտահոգում են, հատկապես Իսրայելի և Թուրքիայի հարաբերություններին վերաբերող: Բայց մենք Իսրայելի հետ քաղաքական երկխոսություն ենք վարում և հնարավորություն ունենք բարձրացնելու առավել հուզող հարցերը»[2]: 2005թ. մայիսին Երուսաղեմ այցելեց երկկողմ հարաբերությունների պատմության մեջ հայկական առաջին խոշոր պատվիրակությունը՝ ութսուն հոգուց բաղկացած: Նրանց թվում էին. Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին II-ը, Հայերի համաշխարհային կոնգրեսի նախագահ Արա Աբրահամյանը, Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանը, Կենտրոնական բանկի ղեկավար Տիգրան Սարգսյանը, բարձրաստիճան դիվանագետներ և խոշոր բիզնեսմեններ: Այցի արդյունքների հիման վրա Ամենայն Հայոց կաթողիկոսը հռչակեց «հրեաների և հայերի միջև հարաբերությունների նոր դարաշրջանի սկզբնավորումը»[3]:

2005թ. նոյեմբերին Ամենայն Հայոց կաթողիկոսի հրավերով Երևան այցելեց Իսրայելի գլխավոր ռաբբի Յոնա Մեցգերը: Նա այցելեց Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի հուշահամալիր և հանդիպեց Հայաստանի Հանրապետության վարչապետ Անդրանիկ Մարգարյանի հետ: Շնորհակալություն հայտնելով ջերմ ընդունելության համար՝ Յոնա Մեցգերը նշեց հայ և հրեա ժողովուրդների ճակատագրերի ընդհանրությունը: Համաձայնելով Ա.Մարգարյանի այն տեսակետին, թե Հա-

---

[1] *Сами Розен,* «Армения и Израиль бросают вызов Ирану и Турции» //Հոդվածը զետեղված է www.axisnews.ru կայքում, 20 հունվարի 2006թ.: Ինտերնետ կայք. http://www.axisglobe-ru.com/article.asp?article=108.

[2] Նույն տեղում:

[3] Նույն տեղում:

յաստանում հակասեմիթականության դրսևորումներ չկան, Յ.Մեցգերը վստահություն հայտնեց, որ ինչպես հայ համայնքը Իսրայելում, այնպես էլ հրեա համայնքը Հայաստանում կշարունակեն ապրել հաշտ ու համերաշխ՝ օժանդակելով ժողովուրդների և պետությունների համագործակցության հետագա ամրապնդմանը[1]: 2006թ. հունվարին երկկողմ հարաբերությունների պատմության մեջ առաջին անգամ «Հայկական ավիառուղիներ» ավիաընկերության ինքնաթիռը վայրէջք կատարեց Իսրայելի Բեն-Գուրիոն օդանավակայանում: Հայկական ավիաընկերության ինքնաթիռի հայտնվելը իսրայելական օդանավակայանում ավելի շուտ քաղաքական, քան տնտեսական նշանակություն ուներ: Դա Հայաստանի և Իսրայելի հարաբերությունների աստիճանական ջերմացման արդյունքն էր:

XXդ. վերջին - XXIդ. սկզբին Հայաստանի և Իսրայելի՝ որպես անկախ պետությունների, քաղաքական գոյության կարևոր առանձնահատկություններից մեկը թշնամական աշխարհաքաղաքական շրջապատի առկայությունն է: Այսպես, 1991թ. անկախության հռչակումից հետո և առ այսօր Թուրքիան Ադրբեջանին պաշտպանելու հետևողական քաղաքականություն է իրականացնում վերջինիս՝ Հայաստանի Հանրապետության հետ դիմակայության (ռազմական՝ 1991-1994թթ. և դիվանագիտական՝ 1994-ից մինչև օրս) հարցում, մասնավորապես, շարունակելով 1993թ.՝ Արցախյան պատերազմի ընթացքում սկսված Հայաստանի Հանրապետության շրջափակումը: Ընդ որում՝ Անկարան առ այսօր հրաժարվում է ճանաչել 1915թ. Օսմանյան կայսրությունում Հայոց ցեղասպանության փաստը (անգամ անտեսելով Եվրոպայի երկրների մեծամասնության և միջազգային մի շարք կազմակերպությունների դիրքորոշումը հարցի նկատմամբ): Չնայած դրան, վերջին

[1] Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. նոյեմբերի 22-ի պաշտոնական տեղեկատվությունը.
http://www.gov.am/ruversion/information_centre.8/official_news_ru.php?date=32603200.

տարվա ընթացքում ակտիվացել են հայ-թուրքական *շփումները պաշտոնական մակարդակում:* 2008թ. սեպտեմբերի 6-ին Թուրքիայի նախագահ Աբդուլա Գյուլը, Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի հրավերով, առաջին անգամ այցելեց Երևան՝ Հայաստանի և Թուրքիայի ֆուտբոլի հավաքականների խաղը (2010թ. աշխարհի առաջնության ընտրական փուլի շրջանակներում) համատեղ դիտելու համար: Այստեղ էլ կայացավ երկու հարևան պետությունների ղեկավարների հանդիպումը, ինչը Թուրքիայում անվանեցին «պատմական իրադարձություն»: Այցն ստացավ «ֆուտբոլային դիվանագիտություն» անվանումը և լայնորեն լուսաբանվեց միջազգային մամուլում: 2009թ. ապրիլի 23-ին Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության արտգործնախարարությունները, ինչպես նաև Շվեյցարիայի Համադաշնության արտաքին գործերի դեպարտամենտը հայ-թուրքական հարաբերությունների կարգավորմանն ուղղված բանակցություններում հայտարարեցին *«ճանապարհային քարտեզի»* ընդունման մասին: ԱՄՆ-ի և Ռուսաստանի դիվանագիտական միջամտությամբ անցկացվող «ֆուտբոլային դիվանագիտության» արդյունքը հանդիսացավ 2009թ. հոկտեմբերի 11-ին ստորագրված «Ցյուրիխյան համաձայնագիրը»: Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության ԱԳ նախարարներ Էդվարդ Նալբանդյանը և Ահմեդ Դավութօղլուն Ցյուրիխի համալսարանում ստորագրեցին «Դիվանագիտական հարաբերությունների հաստատման մասին» և «Երկկողմանի հարաբերությունների զարգացման մասին» արձանագրությունները, որոնք դեռևս պետք է վավերացնեն երկու պետությունների խորհրդարանները: Ընդ որում՝ հարկ է նշել, որ Թուրքիան, ժխտելով Հայոց ցեղասպանությունը, ոչ մի քայլ չի արել Հայաստանի հանդեպ, ինչպես ժամանակին Գերմանիան արեց Հոլոքոստի ճանաչման խնդրում՝ Իսրայելի նկատմամբ: 1952թ. ԳՖՀ այն ժամանակվա կանցլերը, հանդես գալով Բունդեսթագում, հրապարակավ ընդունեց Գերմանիայի պատասխանատվությունը Հոլոքոստի համար՝ պատրաստակամություն

հայտնելով տուգանքներ վճարել ինչպես Իսրայելին, այնպես էլ միջազգային հրեական կազմակերպություններին, ընդ որում՝ հնարավոր ամեն վճարումներն արվեցին տասնամյակներ շարունակ: Ցավոք, Թուրքիան այդպես էլ հրապարակավ զղջալու համարձակություն չի ցուցաբերում:

Մնում է հուսալ, որ հարևան երկրների հետ թե՛ Իսրայելի և թե՛ Հայաստանի հարաբերությունների աստիճանական կարգավորման գործընթացը, չկտրվելով, անշուշտ, XXդ. պատմության ողբերգական եղելություններից, հեռանկարներ կբացի դրանց խաղաղ գոյակցության և համագործակցության համար:

«ՈՒՂԵՂԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԸ» ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԻՍՐԱՅԵԼՈՒՄ. ԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՑԱՆՑԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՀԱՄԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Իսրայելը, որը վերջին մի քանի տասնամյակներին Մերձավոր Արևելքի ամենազարգացած և հզոր պետությունն է, ազգային պետության կերտման և պահպանման բարդ ճանապարհ է անցել: Որպես ազգային պետության մրցունակության ապահովման մեթոդ՝ Իսրայելը կարողացել է ոչ միայն տեղայնացնել համաշխարհային քաղաքակրթության ձեռքբերումները՝ արևմտյան արժեհամակարգի, կրթական, ֆինանսական, ռազմական ինստիտուտների մասամբ կրկնօրինակման միջոցով, այլև ստեղծել է սեփական, ուրույն ինստիտուտներ և համակարգեր՝ հիմնված ազգային, համայնքային և միջազգային փորձի, շահերի համադրման, ազգային կազմակերպման սկզբունքների վրա:

Այդօրինակ ինստիտուտների օրինակ են «ուղեղային կենտրոնները», որոնք աշխատում են ազգային անվտանգության (ռազմական, քաղաքական, տեղեկատվական, տնտեսական, սոցիալական, մշակութային ոլորտները ներառող) սպասարկման ուղղությամբ:

Իսրայելական գիտական և հետազոտական համակարգի ուրույնությունը միայն այն չէ, որ «անապատային պայմաններում» *(հաշվի առնելով այն, որ հենց Նեգևի անապատում են գտնվում իսրայելական գիտական խոշոր կառույցներից շատերը, այս արտահայտությունը կարելի է նաև ուղղակի իմաստով օգտագործել)* կարճ ժամանակահատվածում[1] ստեղծվել է աշխարհի ամենամրցունակ գիտատեխնիկական հա-

[1] Իսրայել պետության ստեղծումից մինչև իսրայելական միջուկային զենքի ստեղծումն անցել է 20 տարուց պակաս ժամանակ:

մակարգերից մեկը, այլև այն, որ հրեական պետությունը կարողացել է ազգային գիտական համակարգը համաշխարհայինին ինտեգրել այնպիսի մեթոդներով, որ վերջինս սպասարկի առաջինին, այլ ոչ թե հակառակը: Սա կարևոր հատկություն է, առանց որի՝ հնարավոր չէին լինի այն արդյունքները, որոնք արձանագրել է թե իսրայելական պետությունը և թե իսրայելական գիտակրթական համակարգը: Այս հատկության կամ ավելի ճիշտ՝ երևույթի մասին մանրամասն կխոսենք իսրայելական «ուղեղային կենտրոնների» օրինակով: Նշենք, որ իսրայելական «ուղեղային կենտրոնների» (լայն իմաստով՝ նաև հետազոտական ինստիտուտների) ուսումնասիրությունը կարևոր է ոչ միայն որպես առանձին տեսական խնդիր, այլև կիրառական հարթությունում անհրաժեշտ և օգտակար է Հայաստանի Հանրապետության և Հայության համար: Սա բացատրվում է մի քանի հիմնական հանգամանքով:

Առաջին. գիտական և կրթական համակարգի կազմակերպումն Իսրայելում տեղի է ունենում՝ հաշվի առնելով այն, որ Իսրայել պետությունում բնակվում է համաշխարհային հրեության միայն փոքր հատվածը: Սա բերում է աշխատանքների կազմակերպման հատուկ մեթոդաբանության, որն ընդգրկում է արտերկրի հրեաների գիտական, մասնագիտական և կազմակերպչական ռեսուրսները, թույլ է տալիս դրանք ուղղել ազգային շահերի սպասարկմանը: Նման խնդրի առաջ է, մասամբ, կանգնած նաև Հայաստանի Հանրապետությունը, որտեղ բնակվում է Հայության միայն մի հատվածը: Ամբողջ Հայության ռեսուրսների մոբիլիզացմամբ Հայաստանի Հանրապետությունը կարող է ավելի արդյունավետ իրականացնել համազգային շահերին առնչվող հարցերի ամբողջական ուսումնասիրությունը՝ համազգային հիմնախնդիրների լուծման եղանակների մշակման և դրանց կիրառման համար:

Երկրորդ. բուն Իսրայելի և արտասահմանում գործող, սակայն Իսրայելի հետ անմիջական կապ ունեցող «ուղեղային կենտրոնները» իսրայելական շահերի լոբբիզմի կառույցներ են: Ստորև կանդրադառնանք այս խնդրին, իսկ այստեղ նշենք, որ ԱՄՆ-ում իսրայելամետ որոշումների ընդուն-

ման գործում բուն համայնքային և լոբբիստական կառույցների կողքին մեծ աշխատանք են տանում կանոնադրորեն անկախ, սակայն միևնույն ժամանակ Իսրայելի հետ անմիջականորեն կապված ամերիկյան «ուղեղային կենտրոնները»: Երևույթ, ինչը բացակայում է հայ համայնքային կյանքում և որի կիրառումը կարող է բարձրացնել, ասենք, ամերիկահայ կառույցների հայանպաստ գործունեության արդյունավետությունը: Վերջինս այսօր ընդհանուր առմամբ կենտրոնացված է ընտրություններում այս կամ այն հայամետ գործչի թեկնածության պաշտպանության և լոբբիստական ընկերությունների ծառայությունները օգտագործելու վրա:

Երրորդ. բուն Իսրայելի տարածաշրջանային և ազգային կյանքում հետազոտական հաստատությունների դերը բավական մեծ է: Հենց հետազոտական կառույցներում են մշակվում Իսրայելի ներքին և արտաքին քաղաքականության հիմնադրույթները: Սա կարևոր խնդիր է՝ անմիջականորեն կապված Հայաստանի Հանրապետության և ամբողջ Հայության շահերի հետ, քանի որ Իսրայելի «ուղեղային կենտրոններում» է նաև ձևավորվում Իսրայել պետության քաղաքականությունը.

ա) Երուսաղեմի հնարավոր կիսման հարցում, ինչն անմիջականորեն առնչվելու է տեղի հայ բնակչության շահերի և հայոց ազգային հարստությունների պահպանման խնդրին:

բ) Տարածաշրջանում, որտեղ Իսրայելն ունի սեփական շահեր, շատ հաճախ հակառակ հայկական շահերի:

Չորրորդ. հայ-իսրայելական հարաբերությունները, որոնք այսօր գտնվում են անբավարար վիճակում և չեն կարող գոհացնել ոչ հայկական, ոչ էլ իսրայելական կողմին, օբյեկտիվորեն և, հավանաբար, շուտով կարգավորման փուլ են մտնելու: Այս փուլի ընթացքը, բնույթը և արդյունավետությունը կապված են լինելու նաև այն հանգամանքի հետ, թե որքանով դրանցով հետաքրքրված և ընդգրկված կլինեն իսրայելական և նաև հայկական հետազոտական հաստատությունները: Միևնույն ժամանակ, հայ-իսրայելական երկխոսության հնարավոր ակտիվացումը կարող է բերել ամերիկյան «ուղեղային կենտրոնների» հետ հայաստանյան կապերի պոտենցիալ ակտիվացման, ինչը կարող է

դրական լիցք հաղորդել Հայաստանին վերաբերող քննարկումներին և որոշումների ընդունման գործընթացին:

Իսրայել պետության «ուղեղային կենտրոնները»

Ժամանակակից Իսրայելում գործում է ավելի քան 200 կազմակերպություն, որոնք զբաղվում են ռազմավարական հետազոտություններով: Դրանց գրեթե կեսը հասարակական կազմակերպություններ են, որոնց մեծ մասը բավական քաղաքականացված է, կամ էլ բաղկացած է երկու կամ երեք աշխատակիցներից: Մնացած կազմակերպությունները հիմնականում գործում են համալսարաններին կից և գաղափարական տեսանկյունից համահունչ են այդ համալսարանների գաղափարախոսությանը: Այսպես, օրինակ, Թել Ավիվի ազատական համալսարանին կից գործող ***Մոշե Դայանի Մերձավոր Արևելքի և Աֆրիկայի ուսումնասիրության կենտրոնը*** հիմնականում լիբերալ աշխարհայացք ունեցող հաստատություն է, իսկ Բար-Իլանի պահպանողական համալսարանի ***Բեգին-Սադաթի ռազմավարական հետազոտությունների կենտրոնը*** պահպանողական և սիոնիստական գաղափարախոսության վրա հիմնված կառույց է:

Այս օրինաչափությունն ընդհանրական է համալսարաններին կից գործող գրեթե բոլոր կենտրոնների համար և ամենևին արհեստածին չէ: Այս օրինաչափությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ համալսարանական «ուղեղային կենտրոնները» ստեղծվում են հենց համալսարանների կողմից, իսկ դրանցում աշխատող հետազոտողները տվյալ բուհի հաստիքային աշխատողներ են, հիմնականում՝ պրոֆեսորներ: Նրանք, փաստորեն, «ուղեղային կենտրոններ» են բերում իրենց բուհերում իշխող և իրենց պաշտպանած քաղաքական և անգամ կրոնական գաղափարները: Իսրայելական որոշ վերլուծաբանների, օրինակ՝ Մայքլ Վայսի կարծիքով, այս երևույթն ինքնըստինքյան բացասաբար է ազդում թե՛ համալսարանների և թե՛ հետազոտական կենտրոնների գործունեության վրա. «Այն ստեղծում է փակ շրջան, որում գաղափարը մտնում է հետազոտական կենտրոն, ավելի է «գաղափարայնացվում» և վերադառնում է ուսումնա-

կան գործընթաց՝ այն դարձնելով կամ հետադիմական, կամ էլ, լավագույն դեպքում, անհետաքրքիր»: Փաստորեն, խոսքը հետազոտական կենտրոնների գաղափարական «պահպանողականության» և ոչ դինամիկ լինելու մասին է. կենտրոնները պահպանում են այն (մի դեպքում՝ ազատականը, մյուսում՝ պահպանողականը կամ կրոնականը), ինչն արդեն առկա է:

Մայքլ Վայսի գնահատականը թեև բավական հնչեղ է և արտացոլում է համալսարանական «ուղեղային կենտրոնների» գործունեության բնույթը, սակայն, մեր խորին համոզմամբ, պարունակում է որոշակի մեթոդաբանական սխալ: Այն է՝ չի կարելի վերը նշված «փակ շրջանը» կամ «գաղափարացումը» ստորադասել դինամիկությանը: Դժվար թե որևէ մեկը կարողանա միանշանակ ասել, թե որն է համալսարանների կամ ազգային պետության համար ավելի կարևոր՝ «պահպանողականությունը» կրթությունում և հումանիտար մտքի գաղափարայնությո՞ւնը, թե՞ դրանց դինամիկ և որոշ առումներով անկառավարելի զարգացումն ու ձևափոխումը: Երկու տարբերակներն ունեն դրական և բացասական կողմեր: Սակայն իսրայելական մոդելը, մեր կարծիքով, հիմնված է երկու տարբերակների դրական կողմերի օգտագործման վրա: Համալսարանները, չխրախուսելով ընդհանուր գաղափարական գծից շեղվելը, կրթական գործընթացը դարձնում են պահպանողական: Սակայն բուն իսրայելական համալսարանները գաղափարական տեսանկյունից բացարձակ նման չեն միմյանց. Թել Ավիվի համալսարանն ազատական բուհ է, Բար Իլանինը՝ պահպանողական, Երուսաղեմինը՝ «կենտրոնամետ»: *Նրանցից յուրաքանչյուրը, «պահպանելով» իրենը, պահպանում է իսրայելական կրթության, հասարակական մտքի և որպես արդյունք՝ հասարակության գաղափարական բազմազանությունը, այն համարժեք դարձնում աշխարհին և ժամանակակից քաղաքակրթությանը:*

Այս երևույթը, մեր համոզմամբ, երկրի ներքին կյանքում դրական համարելով, միևնույն ժամանակ, հնարավորություն չի տալիս իսրայելական համալսարաններին կից գործող «ուղեղային կենտրոններին» հանդես գալ որպես «ազատ մտքի» կենտրոններ, ինչն անհրաժեշտ է մի-

ջազգային նշանակության և արտերկրում հեղինակություն վայելող հետազոտություններ իրականացնելու համար:

Այդ պատճառով Իսրայելի տարածքում գործող ամենաազդեցիկ «ուղեղային կենտրոնները», բացառությամբ Երուսաղեմի հրեական համալսարանին կից գործող Լեոնարդ Դևիսի անվան Միջազգային հարաբերությունների ինստիտուտի, որը հիմնականում պատրաստում է դիվանագիտական կադրեր և սպասարկում Իսրայելի արտաքին գործերի նախարարությանը, ինտեգրված չեն բուհական համակարգին:

Իսրայելի ոչհամալսարանական «ուղեղային կենտրոնների» հիմնական նպատակներն ու գործառույթներն են.

1. Ազգային կառույցներին, հատկապես ազգային անվտանգության ռազմական և հետախուզական ոլորտներին, հետազոտական աշխատանքներով ու մշակումներով ապահովելը:
2. Իսրայել-արտերկիր հրեական կապերի ամրապնդումը:
3. Տեղեկատվական ոլորտում ակտիվ անուղղակի քարոզչությունը:
4. Արտասահմանյան վերլուծական և հետազոտական կառույցների հետ համագործակցության զարգացումը:
5. Հակասեմիթական դրսևորումների աղբյուրների ուսումնասիրությունը, դրանց նկատմամբ տեղեկատվական, ինչպես նաև գործնական քաղաքականության ոլորտում հակաքայլերի մշակումը, դրանք պետական կառույցներին ներկայացնելը և մասամբ իրականացնելը:

Նշենք, որ իսրայելական ազդեցիկ և մեծ կենտրոնները զբաղվում են ոչ թե վերը նշված բոլոր գործառույթներով միաժամանակ, այլ ամեն մեկն ունի իր աշխատանքների հատուկ ուղղվածությունը: Հիմնական իսրայելական «ուղեղային կենտրոնները» և դրանց գործառույթներն են.

Ռազմավարական հետազոտությունների ազգային ինստիտուտ - ՌՀԱԻ (Թել Ավիվ). Իսրայելի խոշորագույն «ուղեղային կենտրոնն» է,

որը գործունեության գրեթե 20 տարիների ընթացքում հիմնականում զբաղվել և զբաղվում է Իսրայելի ներքին զարգացման հիմնախնդիրներով: Դրանք ներառում են հասարակական-քաղաքական, սոցիալական, սոցիալ-տնտեսական և ժողովրդագրական գործընթացները: 2006-ին, երբ ինստիտուտի ղեկավարությունը որոշում ընդունեց լայնացնել հետազոտությունների ուղղվածությունը, ինստիտուտը դարձնելով ամերիկյան տիպի ռազմավարական հետազոտությունների կենտրոն՝ ուսումնասիրության տարբեր ոլորտներ ներառելով, ***ՌՀԱԻ-ն*** փորձ արեց ակտիվացնել իր համար մինչ այդ երկրորդային նշանակություն ունեցող հետազոտությունները տարածաշրջանային ռազմաքաղաքական հարցերի ոլորտում: Սակայն փորձը հաջողությամբ չավարտվեց, ինչի արդյունքում արդեն 2008-ին երկար բանակցություններից հետո ինստիտուտն, իրեն միացրեց Թել Ավիվի համալսարանին կից գործող ***Յաֆֆեի անվան ռազմավարական հետազոտությունների կենտրոնը***, որը մասնագիտանում էր տարածաշրջանային ռազմաքաղաքական հարցերի ուսումնասիրության մեջ՝ հրատարակելով ***«Մերձավոր Արևելքի ռազմական հավասարակշռությունը»*** հայտնի տարեգիրքը: Արդյունքում՝ այսօր ՌՀԱԻ-ն դարձել է խոշոր հետազոտական կառույց, որը զբաղվում է իսրայելական ազգային կառույցներին հետազոտական աշխատանքներով ու մշակումներով ապահովելով, ազգային անվտանգության ռազմական ոլորտներին առնչվող հետազոտություններով:

Մյուս ազդեցիկ իսրայելական «ուղեղային կենտրոնը» Հերցլիայի միջդիսցիպլինար կենտրոնի ***Միաբեկչության դեմ պայքարի ինստիտուտն (ԱԴՊԻ) է:*** Այն հետախուզության և ազգային անվտանգության հարցերի ուսումնասիրությամբ զբաղվող կառույց է, որի աշխատակիցների մեծ մասը Մոսադի նախկին սպաներ են: ***ԱԴՊԻ*** ներկայիս նախագահն է 1989-1996թթ. Մոսադի ղեկավար, գեներալ Շիաբթաի Շավիթը: Ինստիտուտն իր հետազոտություններով սպասարկում է իսրայելական հետախուզությանը, Իսրայելի ազգային անվտանգության խորհրդին,

Կնեսետի Արտաքին գործերի և ազգային անվտանգության հանձնաժողովին և անգամ մասնավոր կառույցներին[1]: Այն բավական ակտիվ գործունեություն է ծավալել նաև արտաքին կապերի ուղղությամբ, համագործակցում է մի շարք հեղինակավոր միջազգային կառույցների և փորձագետների հետ, ակտիվորեն կապված լինելով կառավարության հետ՝ կազմակերպված ձևով իրականացնում է նաև *«public diplomacy»* բնույթի գործառույթներ, ապահովում է Իսրայելի կառավարության կապն արտասահմանյան կենտրոնների և մասնագետների հետ: ***ԱԴՊԻ-ն*** բավական սերտ կապեր ունի թուրքական հետազոտական կենտրոնների հետ: Այն համագործակցել է թուրքական Գլխավոր շտաբի հետ ակտիվ կապեր ունեցող «Ասան» կենտրոնի հետ, որը փակվեց 2008թ.:

Ազգային անվտանգության գաղափարական ոլորտի ուսումնասիրությամբ և մշակումներով է զբաղվում մեկ այլ խոշոր հաստատություն՝ ***Երուսաղեմի հասարակական հետազոտությունների կենտրոնը:*** Այն ֆինանսավորվում է մասնավոր հատվածից, ղեկավարվում է Իսրայելի զինված ուժերի պաշտոնաթող սպաների կողմից, անմիջականորեն կապված է Իսրայելի բանակի Գլխավոր շտաբի նախկին ղեկավար Մոշե Յաալոնի հետ, որը դեռ ակտիվ դեր է խաղում իսրայելական հասարակական-քաղաքական կյանքում և մեծ հեղինակություն ունի բնակչության շրջանում: Ինչպես նշված է կենտրոնի պաշտոնական կայքում, «գաղափարների պատերազմի» ժամանակաշրջանում միայն բանակը չէ, որ պետք է ապահովի Իսրայելի՝ որպես հրեական պետության, գոյության իրավունքը: Հակահրեական գործողություններն ընթանում են ոչ թե ռազմի դաշտում, այլ արտասահմանյան համալսարաններում, լրատվամիջոցներում և ՀԿ-ներում: Հենց այս գործողությունների ուսումնասիրությամբ, կանխարգելման մեխանիզմների մշակումներով է զբաղվում ***Երուսաղեմի հասարակական***

[1] Խոսքը տարածաշրջանային ներդրումների և տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտներում գործող բիզնես կառույցներին խորհրդատվական ծառայությունների մատուցման մասին է:

հետազոտությունների կենտրոնը: Նշենք, որ այն սերտ կապեր ունի զինված ուժերի ստորաբաժանումների հետ, նրանց սպասարկում է արդի գործընթացներին նվիրված վերլուծություններով:

Տնտեսական և ֆինանսական ոլորտներում ռազմավարական հետազոտություններով է զբաղվում ***Իսրայելի ուսումնասիրության Երուսաղեմի կենտրոնը,*** որը ստեղծվել է մի շարք իսրայելական բանկերի և ֆինանսական կազմակերպությունների անմիջական մասնակցությամբ (*Bank Hapoalim, Discount Bank, Bank of Jerusalem, Jerusalem Foundation, Tenram Investments*): Կենտրոնի ուսումնասիրությունների հիմնական ուղղություններն են տնտեսական հիմնարար զարգացումը, սոցիալական համակարգի կայունության ապահովման խնդիրը և «ազգային մրցունակության առավելությունների պահպանումը»: Հաստատությունն ակտիվ գործունեություն է ծավալել Իսրայելում, ֆինանսավորում է տարբեր հետազոտական ծրագրեր համալսարաններում, վերլուծություններով է սպասարկում նաև մի շարք միջազգային ֆինանսական հաստատությունների[1]:

Քաղաքական սիոնիզմի, հրեականության և մասամբ պատմափիլիսոփայական հարցերի ուսումնասիրությամբ են զբաղվում երկու այլ մեծ և պահպանողական շրջաններում ազդեցիկ հաստատություններ՝ ***Շալեմի կենտրոնը և Քաղաքական հետազոտությունների Արիելի կենտրոնը:*** Առաջինն ակտիվ գործունեություն է ծավալել Իսրայելի ներսում (կազմակերպում է բարձր մակարդակի կոնֆերանսներ, հրատարակում է գիտական և վերլուծական նյութեր), երկրորդը արմատական դիրքերից հետազոտում և քննադատում է ԱՄՆ, ինչպես կենտրոնն է նշում, «այսպես կոչված իսրայելամետ» կառույցները՝ մեղադրելով նրանց իրական հարթության վրա հակահրեական գործունեության մեջ:

---

[1] Կենտրոնը ժամանակին զբաղվել է Երուսաղեմի՝ հրեական և արաբական մասերի կիսման հարցով, ուսումնասիրել նման հեռանկարի հնարավոր ազդեցությունը քաղաքի ապագայի վրա: Համաձայն հետազոտության, հայկական թաղամասի՝ արաբական մասում հայտնվելու կամ դրա արաբական և հրեական մասերի միջև արհեստական կիսման դեպքում թաղամասն ամբողջությամբ և հաշված տարիների ընթացքում կհայաթափվի:

Սրանք են այն հիմնական իսրայելական «ուղեղային կենտրոնները», որոնք լուրջ ազդեցություն ունեն իսրայելյան քաղաքական գործընթացների վրա: Սակայն պետք է նշել, որ այս ազդեցությունը չի կարող համեմատվել ամերիկյան կամ բրիտանական «ուղեղային կենտրոնների»՝ համապատասխանաբար ամերիկյան և բրիտանական գործերի վրա ունեցած ազդեցության հետ: Այս տեսակետից տեղին է բերել երկու մասնագիտական գնահատական՝ տրված իսրայելական «ուղեղային կենտրոններին» իսրայելցի մասնագետների կողմից:

Եֆրաիմ Ինբար, Բեգին-Սադաթի ռազմավարական հետազոտությունների կենտրոնի տնօրեն. *«Դժվար թե երբևէ լինենք այնպես հաջողակ և ազդեցիկ, ինչպես ամերիկացիներն են: Մենք չունենք American Enterprise Institute. այն պարզապես չկա: Միգուցե «Շալեմն» ամենամոտն է նրան, սակայն մեկ-մեկ զարմանում ես, թե ինչքան է այն հեռու իսրայելական իրականությունից»*[1]*:*

Բարի Ռուբին, Հերցլիայի միջդիսցիպլինար կենտրոն. *«Այնպես չէ, որ Լիքուդը կամ Աշխատավորական կուսակցությունը գա հետազոտական կենտրոն և ասի. «Տվեք մեզ խորհուրդ»: Քաղաքական կուսակցություններն «ուղեղային կենտրոնների» հետ չեն խորհրդակցում, սակայն քաղաքացիական ծառայողներն ու պետական այրերը կարող են խորհրդակցել: Մեզ մոտ բրիտանական մոդելի, որտեղ Պահպանողական և Լեյբորիստական կուսակցություններն ունեն իրենց սեփական «ուղեղային կենտրոնները», հակառակ մոդել է»:*

Այս երկու գնահատականները կարևոր փաստ են արձանագրում. իսրայելական «ուղեղային կենտրոններն» ապակուսակցական են և փորձում են ներքաղաքական պայքարում ակտիվ դերակատարում չունենալ: Դրանք միայն սպասարկում են պետական կառույցներին, անկախ այն հանգամանքից, թե որ կուսակցությունն է կոնկրետ պահին իշխանության բուրգում մեծամասնություն կազմում: Այս հանգամանքը թյուր

[1] *Hannah Elka Meyers,* Does Israel Need Think Tanks? - *Middle East Quarterly* - Winter 2009, p. 41.

տպավորություն է ստեղծում, թե իսրայելական «ուղեղային կենտրոններն» այնքան էլ լուրջ չեն, ինչը պայմանավորված է նրանով, որ քաղաքական կուսակցություններին չսպասարկելով՝ այս կենտրոնները պարզապես հաճախ դուրս են մնում տեղեկատվական ասպարեզից, որտեղ երևալու հաճախականությունից է մեծ մասամբ կախված, թե հասարակությունն ինչ գնահատական կտա այս կամ այն հաստատության կամ անհատի իրական ազդեցության մակարդակին:

Այս հանգամանքն իսրայելական «ուղեղային կենտրոնները» լրջորեն տարբերում է ամերիկյան նմանատիպ հաստատություններից, որոնք ուղղակի կամ անուղղակի սպասարկում են ամերիկյան երկու հիմնական կուսակցություններին, *կամ էլ այն շրջանակներին, որոնք ցանկանում են ազդել այդ կուսակցությունների և, հետևաբար, ներքաղաքական գործընթացների վրա:* Այս վերջին հանգամանքն է, ըստ մեզ, բերել նրան, որ իսրայելական իշխանությունները մեծ պատ են կառուցել «ուղեղային կենտրոնների» և քաղաքական կուսակցությունների միջև, որով զրկել են «ուղեղային կենտրոնների» իսրայելցի և արտասահմանցի ֆինանսավորողներին քաղաքական կուսակցությունների, այսինքն՝ ազգային անվտանգության կարևորագույն մաս հանդիսացող ներքաղաքական գործընթացների վրա ազդելու հնարավորությունից՝ դրանով իսկ ապահովելով սեփական սուվերենությունը:

Հրեական «ուղեղային կենտրոնները»

Որ «ուղեղային կենտրոնները» կարող են ազդեցություն ունենալ ներքաղաքական գործընթացների վրա, Իսրայելի համար ակնհայտ է: Այս սկզբունքը հաշվի առնելով են գործում ամերիկյան «հրեամետ» և «իսրայելամետ» կառույցներն ու խմբերը: Դրանց գործունեության արդյունքում ստեղծվել է *«Իսրայելի շահեր-ամերիկյան ուղեղային կենտրոններ»* ակտիվ կապերի համակարգ, ինչն ապահովում է թե՛ Իսրայելի համար ժամանակակից և մասնագիտական բարձրորակ հետազոտությունների իրականացում ամերիկյան «ուղեղային կենտրոն-

ների» կողմից, թե՛ աջակցություն Իսրայելին ձեռնտու քաղաքական և տնտեսական որոշումների և տեսակետների առաջմղմանը ամերիկյան գործադիր ու օրենսդիր իշխանության օղակներում, լրատվամիջոցներում: Իսրայելի և ԱՄՆ հրեական համայնքի հետ կապ ունեցող ամերիկյան «ուղեղային կենտրոնները» խոշոր լոբբիստական կառույցներ են, առանց որոնց Իսրայելն ամերիկյան քաղաքական և հասարակական դաշտում չէր ունենա այն աջակցությունը, որն այն ունի այսօր:

Իսրայելի հետ անմիջականորեն կապ ունեցող ամենաակտիվ ամերիկյան «ուղեղային կենտրոններն» են.

- Ամերիկյան գործարարության ինստիտուտը – *American Enterprise Institute*
- Հադսոնի ինստիտուտը – *Hudson Institute*
- Անվտանգության քաղաքականության կենտրոնը - *Center for Security Policy*
- Ազգային անվտանգության գործերի հրեական ինստիտուտը - *Jewish Institute for National Security Affairs*
- Մերձավոր Արևելքի ֆորումը – *Middle East Forum*
- Ժողովրդավարությունների պաշտպանության հիմնադրամը - *The Foundation for Defense of Democracies*
- Իսրայելական շահերի պաշտպանության տեսանկյունից ամենակարևոր դեր խաղացող Վաշինգտոնի Մերձավոր Արևելքի քաղաքականության ինստիտուտը - *Washington Institute for Near East Policy*.

Վերջինս Մերձավոր Արևելքի հարցերով զբաղվող ամերիկյան ամենահեղինակավոր կազմակերպությունն է, որի փորձագետների վերլուծությունները ու հարցազրույցները ամենաշատն են հայտնվում ամերիկյան լրատվամիջոցներում: Միևնույն ժամանակ, ըստ տեսակարար կշռի, ինստիտուտի փորձագետներն ամենից հաճախ են հրավիրվում ԱՄՆ Կոնգրես՝ Մերձավոր Արևելքի հարցերին նվիրված լսումներին մասնակցելու:

Մերձավոր Արևելքի քաղաքականության ինստիտուտը, որն ստեղծվել է 1985թ. հրեամետ կոռույցների կողմից, ուղղակիորեն կառավարվել և կառավարվում է ԱՄՆ հրեական համայնքի ներկայացուցիչների կողմից: Ինստիտուտի հիմնադիր տնօրենն է Մարտին Ինդիկը, որը մինչև ինստիտուտի հիմնադրումը ղեկավարել է լոբբիստական գործունեությամբ զբաղվող Ամերիկայի Հրեական հարցերով կոմիտեն (*American Israel Public Affairs Committee*): 1985-ից ինստիտուտի ազդեցությունը Միացյալ Նահանգներում միայն աճել է: Ինչպես հեղինակավոր *Le Monde diplomatique-ի* համարներից մեկում նշում է Ջոլ Բեյնինը, ինստիտուտի ազդեցությունը կտրուկ աճեց և դարձավ որոշիչ արդեն իսկ Բիլ Քլինթոնի վարչակազմի օրոք[1]: Հրեամետ կազմակերպության ազդեցության բարձրակետը դարձավ Մարտին Ինդիկի նշանակումը Իսրայելում ԱՄՆ արտակարգ և լիազոր դեսպան: Փաստորեն, *այս նշանակումով ամերիկյան շահերի ներկայացուցիչն Իսրայելում դարձավ Իսրայելի շահերը ԱՄՆ-ում ներկայացնող կառույցի ղեկավարը:*

Մերձավոր Արևելքի քաղաքականության ինստիտուտը փոխնախագահ Չեյնիի հետ կապերի շնորհիվ պահպանեց և ամրապնդեց իր դերը Բուշ-կրտսերի վարչակազմում, իսկ այսօր ինստիտուտի նախկին վարչության պետ Դ.Ռոսը Պարսից ծոցի հարցերով ԱՄՆ պետքարտուղարի հատուկ ներկայացուցիչն է: Ինստիտուտի մեկ այլ աշխատակից՝ Մ.Էյզենշտատը, ամերիկյան Կոնգրեսի խորհրդականն է Մերձավոր Արևելքի հարցերով, կազմակերպում է տարածաշրջանին առնչվող բոլոր լսումները, ընտրում համապատասխան փորձագետների և կազմում «քաղաքականության առաջարկություններ»:

Մերձավոր Արևելքի քաղաքականության ինստիտուտին մանրամասն անդրադառնալը պատահական չէ: Այս կառույցի օրինակով մենք կարող են առանց վերապահության ասել, որ պայմանավորված որոշ խորքային պատ-

---

[5] *Le Monde diplomatique, July 2003* - TEL AVIV'S INFLUENCE ON AMERICAN INSTITUTIONS

ճառներով՝ իսրայելական «ուղեղային կենտրոնների» մաս են կազմում Իսրայելի տարածքից դուրս գտնվող ազդեցիկ մի շարք կենտրոններ, որոնք կարողանում են ակտիվ մասնակցություն ունենալ միջազգային հարաբերություններում ու քաղաքականությունում՝ ապահովելով իսրայելական շահերը: Նշենք, որ հաշվի առնելով մինչև վերջերս տևած Թուրքիա-Իսրայել համագործակցության բարձր մակարդակը՝ Մերձավոր Արևելքի քաղաքականության ինստիտուտը իրական քաղաքականության ոլորտում աջակցել է թուրքական շահերի պաշտպանությանն ամերիկյան քաղաքական ասպարեզում, կազմակերպել իսրայելա-թուրքական բազմաթիվ միջոցառումներ և հանդես եկել թուրք-ամերիկյան հարաբերությունները վնասող որոշումների ընդունման դեմ: Թե ինչպիսին կլինի ինստիտուտի՝ մեզ հետ անմիջականորեն առնչվող քաղաքականությունն ապագայում, կախված կլինի թուրք-իսրայելական հարաբերությունների հետագա ընթացքից, որն այսօր Թուրքիայի հակահիսրայելական քաղաքականության պատճառով ձևափոխություններ է ապրում և հայ-իսրայելական հարաբերությունների առումով:

Եզրակացնելով՝ կարելի է ասել, որ ներկայիս աշխարհում Հայաստանի Հանրապետության ու ամբողջ Հայության ռազմավարական կենտրոնների, գիտահետազոտական և տեղեկատվական ոլորտներում՝ սեփական ռեսուրսների զարգացումով և անվտանգության եզրի պահպանումով, լոբբիստական գործունեության մեջ «ուղեղային կենտրոնների» հետ աշխատանքներ տանելը կարևոր լծակ է համազգային խնդիրների լուծման գործում: Դրանք կարող են կիրառական նշանակություն ունենալ և սփյուռքում դրականորեն ազդել Հայության կյանքի վրա հատկապես ԱՄՆ-ում և եվրոպական, ինչպես նաև Մերձավոր Արևելքի երկրներում, մասնավորապես՝ Իսրայելում: Այդ համատեքստում հետազոտական աշխատանքներն ու մշակումները տեսական հիմնավորում կտան հայ-իսրայելական հարաբերությունների զարգացմանը, ինչն իր հերթին դրական ազդեցություն կարող է ունենալ Հայկական թաղամասի հետագա ճակատագրի վրա, իսկ Երուսաղեմի հնարավոր կիսման դեպքում այն բանին, որ հաշվի առնվեն Հայոց շահերը:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՆԱԽԱԲԱՆ.....5

ԵՐՈՒՍԱՂԵՄՆ ԱՅՍՕՐ.....7

ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԸ.....15

ՍՐԲՈՑ ՀԱԿՈԲՅԱՆՑ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ
ԵՎ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ ԵՎ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....42

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՍՐԱՅԵԼԻ ՄԻՋԵՎ
ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱ ՎԻՃԱԿԸ
ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ.....73

ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՐՈՒՍԱՂԵՄՈՒՄ.....91

ՀԱՅԵՐԸ ԵՎ ՀՐԵԱՆԵՐԸ XXԴ.-XXIԴ. ՍԿԶԲԻՆ.
ՔԱՂԱՔԱԿԱՆ ՃԱԿԱՏԱԳՐԵՐԻ ԶՈՒԳԱՀԵՌՆԵՐ.....102

«ՈՒՂԵՂԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԸ» ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԻՍՐԱՅԵԼՈՒՄ.
ԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՑԱՆՑԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՀԱՄԱԴՐՈՒԹՅՈՒՆ.....117

ՀԱՅՈՒԹՅՈՒՆՆ ԻՍՐԱՅԵԼՈՒՄ.
ՈՐՈՇ ԽՆԴԻՐՆԵՐ

Գիտական խմբագիր
Էդուարդ Լ. ԴԱՆԻԵԼՅԱՆ
պատմական գիտությունների դոկտոր
Տեխնիկական խմբագիրներ
Խոնարհիկ ՔԱՐԱՈՒՂԼԱՆՅԱՆ
Լուսինե ԲԱՂՐԱՄՅԱՆ
Ձևավորող
Արմեն ԲԱՐԻՇՅԱՆ

«Նորավանք» գիտակրթական հիմնադրամ
ՀՀ, 375106 Երևան, Գարեգին Նժդեհի 23/1
Կայք՝ www.noravank.am
Էլ.-փոստ՝ office@noravank.am
Հեռախոս/ֆաքս՝ + (374 10) 44 04 73

Թուղթը՝ օֆսեթ, Ծավալը 8.25 տպ. մամուլ:
Տպաքանակը՝ 400: Տառատեսակը՝ Sylfaen:
Տպագրվել է «Գասպրինտ» ՍՊԸ տպարանում: